Թիվ 2 (8). Հեղինակներ - Մարտ, 2006 թ.

Ոտոս Արարատի

Սխալելու իրաւունք չունինք

Գէորգ Աճեմեան

A.S.A.L.A.



Եթէ հա՛յ էք, հա՛յ երիտասարդներ էք, սիրելի էք մեզի համար անպայմանօրէն:

Կը հասկնանք ձեզ, ձեր հոգեվիճակը ու կը բաժնենք ձեր զգացումներն ու դառնութիւնը:

Յիշեցէ՛ք, թէ Հայութիւնն ու անոր դատը կը պաշտպանէք եւ ոչ թէ՝ պարզօրէն գործ մը կատարած ըլլալու համար կը վտանգէք ձեր կյանքն ու ապահովութիւնը: Եւ ուրեմն՝ կ՛ակնկալուի ու կը պահանջուի ձեզմէ, որ նախ մտածէք մեր ժողովրդին մասին, Հայութեան, որուն համար կը կատարէք այս աննման զոհողութիւնը: Եւ եթէ ճիշդ ու խոհեմ կերպով մտածէք, պիտի մեկնիք Հայութեան գերագոյն շահերէն՝ հասնելու համար վերջնական, հիմնական, եւ անպայմանօրեն դրական արդիւնքներու: Իսկ Հայութեան շահերը կը պահանջեն, որ իմաստուն ըլլաք, շրջահայեաց, հաւասարակշիռ ու հեռու մնաք բոլոր կարգի արկածախնդրութիւններէն, որ տեղ չեն առաջնորդեր ո՛չ ձեզ եւ ո՛չ ալ ձեր ժողովուրդը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական	էջ1	
Հայտարարություն N-2	էջ 1	
Հայտարարություն N-3	էջ 2	
Սխալելու իրաւունք չունինք	էջ 3	Գէորգ Աճեմեան
Նպատակ և ճշմարտություն	էջ 4-5	Գուրգեն Յանիկյան
Մեր նահատակները	էջ 6-7	
Հայոց բանակի 14-ամյա տարեդարձը	էջ 8	Լիլիթ Հարությունյան
Մասունքներ հայոց անկրկնելի գրականությունից	էջ 9	
Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում	էջ 10-13	Լև Տրոցկի
Եվրամիությանը թուրքիայի անդամակցության որոշ խնդիրների շուրջ	էջ 14-15	Հայկ Մարտիրոսյան
Թուրքիան և թռչնի գրիպը	էջ 15	Հայկ Դեմոյան
Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը	էջ 16-17	Թամարա Վարդանյան
ԼՂՀ պաշտպանության բանակն ավելի հուսալի խաղաղարար է	էջ 17	Կիմ Գաբրիելյան
Տեսլական ու իրական Հայաստանը	էջ 18-19	Գրիգոր Ջանիկայն
Միհրան Սվազլյան	էջ 20-21	Քնարիկ Ավագյան
Հայ պատմագրության երախտավորը	էջ 22	Սմբատ Հովհաննիսյան
Ազգայինը բնավորություն է՝ ազգի տեսակ	էջ23	Լիլիթ Մակարյան
Գործով կամրջենք սփյուռքը Հայաստանին	էջ 24	Գայանե Հովհաննիսյան
Դարի ճանապարհ	էջ 24	Հասմիկ Մելքոնյան
Ես ինձ կորցրեցի թատրոնում...	էջ 25	
Ներսիսյան դպրոց	էջ 26	Նանե Սևան
Դավիթ Անհաղթ	էջ 27	Աշխեն Գրիգորյան
Հայոց թագավորների տոհմանշանները	էջ 28	Արա Զոհրաբյան
Խնձոր	էջ 29	Հայկ Խաչատրյան
Ճապոնական և հայ հեթանոսական աստվածները	էջ 30-31	Մելինե Մեսրոպյան
Հայոց առնչված արաբերեն հրատարակություններ 2003-2005թթ.	էջ 32-33	Գևորգ Յազըճյան
Այնթապ	էջ 34	Ջեմմա Բաղդադյան
Այս աշխարհի մէջ Վան, միւս աշխարհի մէջ դրախտ	էջ 35-36	Հովիկ Մկրտչյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատուներ՝ Տիգրան Փաշաբեզյան, Գևորգ Յազըճյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 28.02. 2006

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue:
Tigran Pashabezyan,
Gevorg Yazedjyan

Address: 375010,
Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail:
oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՍՏԻՊՎԱԾ ԵՆՔ ԸՆՏՐԵԼ ՓՈՔՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է մնացել այսօր Հայաստանի երկրորդ Հանրապետությունից ժառանգություն ստացած գիտակրթական և արտադրական հզոր ներուժից, կարողություններից: Արտադրական ներուժը փոշիացվել է «ազատականացման ու սեփականաշնորհման» արդյունքում, կրթականը «օպտիմալացվում է» («օպտիմալացվում է» նաև սփյուռքի կրթական համակարգը հանձին՝ Մելքոնյան վարժարանի փակման որոշման), գիտականը «բարեփոխվելու է»: Եթե ավելացնենք նաև մեր կենսագործունեության մյուս բոլոր ասպարեզներում, այդ թվում՝ հոգևոր-մշակութային, նորանոր հարձակումներն ու ներխուժումները, ապա պատկերը ավելի հստակ կդառնա: Բարվոք չէ վիճակը և արտաքին քաղաքական դաշտում: Եվրամիությունը պարտադրեց ՀՀ սահմանադրական փոփոխություններ, ստիպում է ի հեճուկս ժողովրդի կամքի՝ ահռելի խախտումների գնով, այն անցած համարել, չի դադարում թուրք-ադրբեջանական հակահայկական պաշտոնական հիստերիան, նախագծվում են ՀՀ լրիվ մեկուսացնելու նոր ծրագրեր, Վրաստանը կրկին, ինչպես 20-րդ դարի սկզբին միանում է պանթուրքիստական՝ տարածաշրջանային ծրագրերին:

Ի՞նչ անել: Առաջարկում ենք թույլ չտալ վիճակի էլ ավելի խորացում. դիմադրությունն ու առճակատումը չհետաձգել մինչև նոր Սարդարապատ: Խելամիտ վերադասավորել ազգային ուժերը, յուրաքանչյուր առաջադրվող խնդրին վերաբերվել որպես նոր՝ ուրույն ճակատամարտի, նոր Սարդարապատի և յուրաքանչյուր խնդիր հետապնդել ընդհանուրի համատեքստում՝ մինչև վերջնական հաղթանակ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N-2

Վերջին շաբաթներին անհամեմատ շատացել են խոսակցությունները Արցախյան հիմնահարցի կարգավորման վերաբերյալ: Աննախընթաց չափերի է հասել հայ ժողովրդի տեղեկատվական-հոգեբանական մշակումը՝ նրան պարտվողական լուծում փաթաթելու համար: Այդ հայադավ ծրագրերի մունետիկների դերում են հանդես գալիս ՀՀ պետական պաշտոնյաներ, որոնց շարքում՝ հայությունից ըստ էության հիմնովին օտարված, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականի կարգավիճակ ունեցող, հայերեն չիմացող ուսադրավոր հայանուն մի գեներալ՝ փորձելով մեզ փաթաթել տալ այսպես կոչված «ճանապարհի քարտեզը», որը ոչ այլ ինչ է, քան դավաճանություն: Իր հերթին, ՀՀ արտաքին գործերի նախարարը արդեն խոսում է այսպես կոչված խաղաղապահ ուժերից, հերոսաբար նշելով, թե դրանցում չեն լինելու թուրք ասկյարներ: Խոսվում է ՀՀ և հայոց թշնամի Ադրբեջանի նախագահների փետրվարի 10-ին նախատեսված հանդիպման ժամանակ ստորագրվելիք ինչ-որ փաստաթղթի մասին:

«Ուխտ Արարատի» Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի /ASALA/ նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միությունը հայտարարում է, որ ԼՂՀ, ներառյալ կից ազատագրված տարածքները հայոց հավիտենական հայրենիքի անբաժան մասն են, որոնց նկատմամբ հայ ժողովուրդն ունի գերիշխանության բացարձակ իրավունք: Հայրենիքը, ինչպես և ազգի հոգևոր արժեքները հայ ժողովրդի նախկին, ներկա և գալիք սերունդների համայնական սեփականությունն են, իսկ սեփականությանը տիրությունն են անում և ոչ թե անտեր են թողնում կամ դարձնում կեղտոտ բազարների առարկա՝ հանուն սեփական աթոռների պահպանության: Մեզ համար, այո՛, Արցախյան հիմնահարցը դեռևս չի լուծվել. այդ լուծումը մենք տեսնում ենք հայոց հայրենիքի՝ այսօր հայ զինվորի գերիշխանության տակ գտնվող շուրջ 43 հազար քառակուսի կիլոմետր տարածքի ամբողջական վերահայացման մեջ, որն է՝ այդ տարածքներում հայկական բացարձակ գերիշխանություն, ազգային արժեքների գերակայում և ազգահավաքի հնարավորություն: Մենք դեռ հայրենի՞ շատ տարածքներ ունենք ազատագրման սպասող, որի ուղղությամբ էլ պարտավոր են գործել ՀՀ իշխանությունները:

ՀՀ սահմանների շրջափակման և տեղեկատվական-հոգեբանական պատերազմի շարունակումը, հայ սպա Գուրգեն Մարգարյանի գազանային սպանությունը, Ջուղայում և այլ վայրերում հայոց հոգևոր ժառանգության պետականորեն ծրագրավորված բարբարոսական ոչնչացումը և բազմաթիվ այլ փաստեր կասկած չեն թողնում, որ թուրքերն ու նրանց ցեղակից ադրբեջանցիները հեռավոր ցանկություն իսկ չունեն ճանաչել իր հայրենիքում հայ ժողովրդի գոյությունն իսկ, ուր մնաց խոսել այսպես կոչված խաղաղ գոյակցության մասին: Նման պայմաններում, հարկավոր է ոչ միայն պարտվողական ոչ մի քայլ չանել, այլև անմիջապես դադարեցնել անիմաստ բանակցությունները դարավոր թշնամիների հետ: Միանշանակ է, որ մենք գոյատևելու և հաղթելու համար պարտավոր ենք ապավինել նժդեհյան «Վճռական մենակի» քաղաքական փիլիսոփայությանը:

«Ուխտ Արարատի» Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի /ASALA/ նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միությունը հայտարարում է, որ իր համար հիմնովին անընդունելի են, այսպես կոչված, միջազգային խաղաղապահ ուժերի հայտնվելը հայոց հայրենիքում, որոնց ներկայությունը ոչ մի դեպքում և ոչ մի պիտակի տակ չի հանդուրժվի: Ստեղծված իրավիճակում, մենք ելքը տեսնում ենք ոչ թե հայ ժողովրդի բազում զոհողությունների գնով ապահովված ռազմական հաղթանակը հոգեբանական ազգակործան պարտության վերածելու, այլ՝ հայոց ամբողջ ներուժը գերլարելով նշված տարածքի վերահայացումն իրագործելու մեջ: Այս նպատակից շեղումը մենք համարում ենք դավաճանություն, իսկ դավաճանների ճակատագիրը վաղուց հայտնի է հայոց պատմությունից:

Ո՛Չ ամեն տեսակի պարտվողական ծրագրերին: Հայ ժողովուրդը արյա՛ն գնով է ազատագրել իր հայրենիքի ընդամենը չնչին մասը, որից այսօր ուզում են մեզ նորից զրկել: Դա թույլ չենք տա՝ ԿՅԱՆՔԻ՛ ԳՆՈՎ:

Երևան, 7 փետրվարի 2006թ.

«Ուխտ Արարատի» Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի /ASALA/ նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միություն

ԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ

Արձակագիր, հրապարակագիր, վիպագիր, գրաքննադատ եւ տեսաբան Գէորգ Աճեմեան. արմատներով սասունցի, ծնած է Սուրիոյ հիւսիսը՝ Հալէպի շրջանի Մումպուճ գիւղաքաղաքը, 23 Մայիս 1932-ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Հայկազեան եւ Կիւլպէնկեան վարժարաններուն մէջ, ապա յաճախած է Ալեփփօ Գոլէճ եւ 1948-ին աւարտած ուսման ընթացքը՝ փայլուն յաջողութեամբ: 1954-58թթ. ուսանած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանը՝ հետեւելով իմաստասիրութեան ճիւղին եւ արժանացած Պսակաւոր Արուեստից տիտղոսին: Քանի մը տարի հայերէն եւ անգլերէն լեզու ու գրականութիւն դասաւանդած է Պէյրութի երկրորդական վարժարաններուն եւ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան բարձրագոյն կարգերուն մէջ: Երիտասարդ տարիքէն սկսած է ստեղծագործել, գրած է պատմուածքներ, վէպեր, քննադատական եւ հրապարակագրական յօդուածներ, որոնց մէկ մասը հետագային վերահրատարակած է գիրքերու ձեւով: Պէյրութի Համրա թաղամասի ժան տ'Արք փողոցին վրայ հիմնած է «Հէլփ» (օգնութիւն) գրատունը, որ վաթսունականներուն եւ եօթանասունականներուն ժամադրավայրը եղած է անկախ ու յեղափոխական մտածողութեամբ մտաւորականներու:

Ժամանակ մը խմբագիրն էր լիբանանեան անգլիատառ «Տը Տէյլի Սթար» օրաթերթին: Աշխատակցած է «Գրասէր»ին (Հալէպ), իսկ Լիբանանի մէջ՝ «Զարթօնք», «Շիրակ» եւ «Բագին» թերթերուն: Սիմոն Սիմոնեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Սփիւռք» շաբաթաթերթի մնայուն աշխատակիցը եղած է առաջին օրէն: 1975ին Սիմոն Սիմոնեան թերթը յանձնած է Գէորգ Աճեմեանին, որ հակառակ Լիբանանի քաղաքացիական պատերազմի թոհուբոհին, խմբագրած եւ լոյս ընծայած է թերթը 1975էն 1978: Պարբերագիրքի ձեւով հրատարակած է 3 թիւ (Դեկտեմբեր 1985, Դեկտեմբեր 1986, Դեկտեմբեր 1988):

Ան նաեւ առանձին հատորներով հրատարակած է 18 անուն գիրք, հայերէն եւ անգլերէն. «Անկարելի Պատմութիւն», «Օրերէն Ետք», «Պիտի Չարչարեմ Բառերը», «Յաւերժական Ճանապարհ», «Յարդգողի Ժառանգորդները», «A Time For Terror» («Սիաբեկչութեան Ժամանակը»), «Պիտի Յիշե՞նք Երբեւիցէ Արեւմտեան Հայաստանը» եւ այլն:

Գ. Աճեմեան, հայութեան պարտադրուած այս իրավիճակէն միակ ելքը տեսնելով Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան եւ հայ ժողովուրդի հայրենի երկիր վերադարձի մէջ, համախոհներու հետ հիմքը դրաւ հայկական նորագոյն զինեալ ազատագրական պայքարի ռահվիրայ կազմակերպութեան՝ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակին, խօսքը վերածելով գործի, ու այդ ճամբուն վրայ ալ նահատակուեցաւ 27 Դեկտեմբեր 1998-ին, Ֆրանսայի Լիոն քաղաքը, ուր եւ թաղուած է այժմ, մինչեւ վերադարձը ազատագրուած հայրենի երկիր՝ Արեւմտեան Հայաստան:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N-3

Մեր վճռական ՈՉ-ով, ամբողջ արաբական աշխարհի, իրանական աշխարհի, իսլամ դավանող մեր մյուս բարեկամների հետ միասին մեր բողոքի ձայնն ենք բարձրացնում Արևմուտքում՝ Եվրոպայում, իսլամի սրբությունները պղծելու, կրոնական զգացմունքների նկատմամբ սանձարձակ ոտնձգություններ ծավալելու և ազգային - կրոնական հակամարտություններ հրահրելու՝ պետությունների կողմից չկասեցվող գործընթացի նկատմամբ:

Քաղաքակրթությունները չեն բախվում: Ազգերը, ժողովուրդները, կրոնները չեն պատերազմում. եթե համաշխարհային բախումը, պատերազմներն ու հակամարտությունները դավադրորեն չեն կազմակերպվում ու չեն հրահրվում՝ համաշխարհային տիրապետության ձգտող որոշ երկրների ու միջազգային քաղաքական ստվերային, հանցագործ կառույցների կողմից: 1995-96թթ. հանրության ընկալման համար հրապարակ նետված հանտինգտոնյան, այսպես կոչված քաղաքագիտական կանխատեսումները չեն, որ իբրև թե իրականանում են:

Աշխարհին տիրելու, մարդկությանը ստրկացնելու՝ աշխարհը համակենտրոնացման ճամբարի վերածելու հիվանդ մտածողության՝ մոլագարության հասնող այս խնդիրը գալիս է դեռ 1891թ-ից: Համաշխարհային մեծ խառնակության այս վերջին գործընթացը իրականում դեռևս հարյուր տարի առաջ լորդ Միլների առաջարկած «Համաշխարհային ընդհանուր պետության» և «Համաշխարհային կառավարության» ստեղծման չորրորդ փորձն է: Հայտնի է՝ առաջին երկու գործնական փորձերը տապալվեցին, և ըստ այդմ հրահրված I և II Աշխարհամարտերը՝ իրենց առջև դրված խնդրի իրագործման առումով «արդյունավետ» չեղան: Տապալվեց նաև հաջորդ երկու փորձը. Երկրորդ Աշխարհամարտից՝ առանց դադարի Երրորդին անցնելու Չերչիլի (1945-1949թթ.) համառությունը, նաև 1961-ին հրահրված Կարիբյան ճգնաժամով Երրորդ՝ ԱՄՆ - ԽՍՀՄ ջերմամիջուկային պատերազմը սկսելու փորձը: Սա՝ 1965-ից նախագծվող ու 1985-ից լրիվ թափով ընթացք տրված հինգերորդ (հուսանք վեջին) փորձն է:

Ի դեպ, հենց նույն այս համընդհանուր ագրեսիվության ծրագրերի տարածաշրջանային խնդիրներին է ծառայում Կովկասում եվրոքաղաքականություն իրականացնողների, կովկասյան ընդհանուր պետություն ստեղծելուն հարմարեցված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների՝ եվրոհեղինակության նախագիծը: Համաշխարհային բոլոր մեծ խառնակություններից մեծապես տուժած հայերիս, ավելի քան հասկանալի և անընդունելի են կրկին համաշխարհային քաոս խթանող միջազգային - քաղաքական այս հանցագործ ձեռնարկումները:

Մուհամեդ Մարգարեն չպետք է դառնա երրորդ համաշխարհային պատերազմի սկզբնապատճառ՝ նորօրյա «գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանտ», ինչպես նախատեսել են Եվրամիության աներևույթ շինարարները՝ աշխարհին տիրել ձգտող մոլագարները:

Զգոնության ԿՈՉ ենք անում իսլամական աշխարհին՝ չսահել դեպի կրոնական ատելություն, ինչպես այդ արվում է Ադրբեջանում՝ վերջին օրերին Հիսուս Քրիստոսի ու Աստվածամոր նկատմամբ ծաղրական թեմաներով հրապարակումներում, ինչպես նաև Զուղայի խաչքարերը կործանելու փաստում:

Առաջարկում ենք միասին պայքարել հեռահար նպատակներ հետապնդող և համայն մարդկության դեմ ուղղված՝ համաշխարհային ծավալման գնացող այս ՉԱՐԻՔԸ դիմակայելու, կասեցնելու խնդրում:

Արդարացի պատիժ պետք է կրեն միայն բուն հանցագործները՝ սրբապղծությունն իրագործողները, այն պատվիրողներն ու նրանց հովանավորողները և ոչ այլք՝ անմեղ «մեղավորները»:

ԿՈՉՈՎ դիմում ենք ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի հայությանը, որ իրենց բողոքի ձայնը բարձրացնեն և գործնականորեն աջակցեն իսլամադավան մարդու սրբությունները պղծող բոլոր այլանդակությունները կանգնեցնելու և այսօրինակ երևույթների կրկնություն արգելելու խնդրում:

16 փետրվարի, 2006թ., Երևան

«Ուխտ Արարատի» Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի /ASALA/ նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միություն

ՍԽԱԼԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻՆՔ

ԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ

Եթէ հայ էք, հայ երիտասարդներ էք, սիրելի էք մեզի համար անպայմանօրէն:

Կը հասկնանք ձեզ, ձեր հոգեվիճակը ու կը բաժնենք ձեր զգացումներն ու դառնութիւնը:

Յուսահատ, հիասթափ ու դառնացած՝ որոշած էք գործնական միջոցներու դիմել: Երիտասարդական ձեր արիւնը մղած է ձեզ գործի, հոգ չէ թէ՝ առանձին եւ ինքնագլուխ: Եւ կրնաք վստահ ըլլալ, թէ ձեր ժողովուրդը՝ Հայութիւնը, որ յուսահատած է եւ ճարահատ ձեզի պէս, ներքին, բայց լուռ գոհունակութեամբ մը պէտք է դիմաւորած ըլլայ ձեր արարքը: Եթէ հայ էք՝ անշուշտ:

Հակառակ անոր, որ կրնան տարակարծիք ըլլալ ձեր գործելու, կամ աւելի ճիշդը՝ գործը սկսելու եւ վարելու եղանակին: Ինչպէս մենք տարակարծիք ենք ու կ'արձանագրենք մեր վերապահութիւնը առանց այլեւայլի:

Դէմ չենք գործելուն, ձեր հաւատքին, նուիրումին ու վճռականութեան: Բայց անպայմանօրէն դէմ ենք ձեր գործելու եղանակին-վայրի եւ ժամանակի ընտրութեան:

Կը նկատէք, որ բառերը առանց ծանծմելու կը գործածենք, դիւանագիտութիւն չենք խաղար, պատճառաբանութիւններ չենք որոներ, ու յստակ կերպով կ'արտայայտենք մեր դժգոհութիւնը: Որ կրնաք վստահ ըլլալ, կը բխի մեր գոհունակութենէն: Հակասական չէ: Մտածեցէ՛ք: Մենք գոհ ենք եւ ուրախ, որ հասած էք այս որոշումին-գործելու եւ ձեր իրաւունքները պատվով պաշտպանելու գիտակցութեան, բայց կը դժգոհինք, որ ա՛յս կերպով կը լծուիք աշխատանքի: Յիշեցէ՛ք, թէ Հայութիւնն ու անոր դատը կը պաշտպանէք եւ ոչ թէ՝ պարզօրէն գործ մը կատարած ըլլալու համար կը վտանգէք ձեր կյանքն ու ապահովութիւնը: Եւ ուրեմն՝ կ'ակնկալուի ու կը պահանջուի ձեզմէ, որ նախ մտածէք մեր ժողովրդին մասին, Հայութեան, որուն համար կը կատարէք այս անանման զոհողութիւնը: Եւ եթէ ճիշդ ու խոհեմ կերպով մտածէք, պիտի մեկնիք Հայութեան գերագոյն շահերէն՝ հասնելու համար վերջնական, հիմնական, եւ անպայմանօրեն դրական արդիւնքներու: Իսկ Հայութեան շահերը կը պահանջեն, որ իմաստուն ըլլաք, շրջահայեաց, հաւասարակշիռ ու հեռու մնաք բոլոր կարգի արկածախնդրութիւններէն, որ տեղ չեն առաջնորդեր ո՛չ ձեզ եւ ո՛չ ալ ձեր ժողովուրդը:

Օրինակ առնենք մեր պատմութենէն, անմիջական անցյալէն եւ ինչու չէ՝ նաեւ հայկական յեղափոխութենէն: Չկրկնենք նույն սխալները: Ու յօնք շտկած ատեն, աչք չհանենք, ինչպէս կ'ըսէ ժողովրդական առածը:

Գործ մը ունիք կատարելիք: Ունիք առաքելութիւն մը, որու կը հաւատայ իւրաքանչիւր հայ, ու մենք վստահ ենք՝ պատրաստ է նուիրաբերելու ինքզինք այդ ճանապարհին վրայ: Բայց պայմանաւ, որ այդ ճանապարհը ըլլայ սերտուած, պեղուած ու զերծ ամէն կարգի թակարդներէ եւ արգելքներէ: Նախ պէտք է ուսումնասիրէք այդ ճանապարհը, հետախուզութեան ենթարկէք զայն եւ ստուգէք, թէ ապահով է եւ անվտանգ: Այսինքն՝ անարգել պիտի հասցնէ ձեզ ճամբու վերջաւորութեան: Եթէ պիտի չկարենաք հասնիլ ցանկացուած այդ վերջաւորութեան, ու, եթէ պիտի տապալիք կամ սայթաքիք ճանապարհի կէսին, ձեր կորուստը վատնում պիտի ըլլայ. իսկ ձեր ձախողութիւնը՝ վնասակար: Պիտի վնասէ Հայութեան, եւ ամենէն կարեւորը՝ անոր հետապնդած դատին:

Ձեր սխալիլը կրնայ ճակատագրական դեր ունենալ՝ մեր բոլորին ձգտումներն ու երազը անվերականգնելի կերպով կործանելով: Կարեւորը նպատակին հասնիլն է: Հոգ չէ, թէ ուշ: Եվ, հետեւաբար, իրաւունք չունինք սխալելու, նույնիսկ՝ սայթաքելու: Ճամբայ ելլելէ ետք, արտօնուած չէ մեզի ընկրկի՛լ նոյնիսկ: Ու ոչ մէկ պարագայի տակ նոր դաւերու ու ծուղակներու զոհ դառնալ:

Այո՛, եթէ հայ էք, հայ երիտասարդներ էք, եթէ իսկապէս հայո՛ւ գործ են վերջին շաբաթներուն ընթացքին թրքական հաստատութիւններու դէմ Լիբանանին մէջ գործված արարքները, կը պահանջենք ձեզմէ, որ չսխալիք ու չիյնաք լարուած ծուղակներու մէջ: Որովհետեւ այդ ծուղակները ձեզի համար լարուած չեն, այլ՝ համայն Հայութեան:

Մեր բացատրութիւնը շատ պարզ է: Ձեր գործունէութեան թատերաբեմը Լիբանանը չէ, եւ ոչ էլ արաբական ուրիշ որեւէ երկիր: Պէտք չէ՛ ըլլայ, որովհետեւ թիւրքը հոս չէ, իսկ այս երկիրները թրքական չեն: Թիւրքը մեր երկրին մէջ է: Մեր եւ մեզի նման հայրենական հողերէ կողոպտուած ու կեղեքուած այլ ժողովուրդներու երկիրը, զոր Թիւրքիա կոչած են: Ձեր գործունէութեան թատերաբեմը պէտք է ըլլայ ա՛յդ երկիրը, որ մերն է: Եւ ոչ թէ հոս, ուր հիւր ենք: Հայրենիք եւ հող ազատագրելու պայքարը կը մղուի սեպհական հողի վրայ: Որ մեր պարագային եւս կարելի է, հավանական: Հոգ չէ, թէ տեղահան ըրած ըլլան մեզ հոնկէ:

Իսկ եթէ անկարելի ըլլայ կամ թուի ասիկա ձեզի, ապա ուրեմն՝ մտածեցէք այն ընդարձակ եւ անսահման դաշտին մասին, որ աշխարհն է: Բայց երբե՛ք՝ արաբական երկիրներուն, ուր ապաստանութիւն գտած ենք ու վերանորոգուած՝ Ապրիլյան եղեռնէն ետք:

Թիւրքը, իր հաստատութիւններով ու պետական եւ քաղաքական ցանցով, ամէն տեղ է, ամէն երկրի մէջ: Եւ եթէ Թիւրքիա կոչուած երկիրը փակ դուռ մըն է մեզի համար, աշխարհը, սակայն, բաց եւ ազատ դաշտ մըն է բոլոր անոնց համար, որոնք դատեր ունին հետապնդելիք: Նախընտրելի չէ՞ ուրեմն, որ գործենք այդ ազատ ու անսահման դաշտին մէջ, քան հոն, ուր կրնանք վտանգել մեր եւ մեզ հիւրասիրողներուն շահերը:

Ապերախտ չըլլանք: Ու չըլլանք անձնասէր: Չմոռնանք, որ արաբն ալ իր երկրին մէջ ունի ի՛ր հաշիւներն ու ի՛ր շահերը, մանաւանդ՝ ունի իր հարցերը: Չպարտադրենք անոր մեր հաշիւները, որ կրնան խոտոր համեմատիլ իրենինին հետ: Այս երկիրներուն մէջ հարց չունինք մենք: Ընդհակառակն՝ ունինք պարտականութիւն: Մեր նպաստը բերել անոնց վերելքին եւ բարգաւաճումին:

Թիւրքը պիտի ուզէր, որ ճիշդ հակառակը պատահէր, որպէսզի խախտէր այս ափերուն վրայ մեր գոյութիւնը պայմանաւորող կորիզը: Եւ ի պահանջել հարկին՝ ինք պիտի ծրագրէ նմանօրինակ դաւ մը, եւ պարզօրէն գործադրէ զայն, որ կրնայ ճիշդ ըլլալ այս պարագային եւս: Չենք մոռցած միւս կարելիութիւնը: Թրքական գործ կրնայ ըլլալ այս ամբողջը՝ մեզ վարկաբեկելու եւ հարուածելու համար: Այսքա՞ն դյուրութեամբ պիտի իյնանք ծուղակը: Բայց ո՛չ: Չենք կրնար սխալիլ այլեւս:

Իրաւո՛ւնք չունինք սխալելու մանավանդ:

«Սփիւռք» շաբաթաթերթ, թիւ 8, 2 Մարտի, 1975թ.

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ

ՆՊԱՏԱԿ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կյանքումս միշտ էլ հակառակ էի եղել ուժին, որովհետև դրանով, ոտնատակ տալով մեկ ուրիշի իրավունքները, նույն չափով կորցնում ես և քոնը: Գիտեի, թե ինչ էի անելու առավոտյան (1973թ. հունվարի 27 - խմբ.): Հանդեպ նրանց, որոնք ինքնակամ գալու էին ինձ տեսնելու, ես ոչ մի զգացում չունեի: Նրանք ինձ համար միջոց էին՝ հասնելու ցանկությանս: Եթե լինեին ուրիշները, ինձ համար տարբերություն չէր ունենալու: Զգացի, որ լալիս եմ: Արցունքները թափվում էին աչքերիցս առանց հեկեկանքի, բայց այդ խղճալու կամ տատանվելու արցունքներ չէին, այլ՝ կատաղության, որ դեպքերի ընթացքն այնպես դասավորվեց, որ ես դիմելու եմ մի միջոցի, որին միշտ դեմ եմ եղել: Նպատակիս հասնելու համար պետք է զոհեի իմ տեսակետներից՝ գուցե ամենագլխավորներից մեկը:

Մտքովս երբեք չէր անցնում մի անգամ ևս քննել իմ ծրագրածը. քննելու, փոխելու կամ հրաժարվելու խոսք չէր կարող լինել: Որոշումս վերջնական էր: Նպատակս այնքան սուրբ էր ինձ համար, որ իմ որոշ անձնական տեսակետների զոհաբերելը մի շատ էլ մեծ բան չէր:

...Սրբեցի արցունքներս: Ժամացույցս ցույց էր տալիս մեկ ու կես...Ես ծովի ափը իջա երեկոյան 10-ին. երեք ու կես ժամ... Ի՜նչ արագ էր անցել ժամանակը... Սթափվի՛ր, Գուրգե՛ն, հրամայեցի ինքս ինձ ու քայլերս ուղղեցի դեպի իմ սենյակը... Հեռախոսեցի, որ ինձ արթնացնեն ժամը ութին... Իննին գնացի ու մնաս բարով ասացի իմ կյանքի ընկերոջը: 10-ին արդեն հյուրանոցում էի և իմ սենյակում տեսնում էի վերջին պատրաստությունն ընդունելության համար: Ժամը 11-ին իմ հյուրերը գալու էին: Գնացի դուրս ու ման էի գալիս կանաչած բակում և ավելի հանգիստ էի, քան՝ երբևիցե: Մտածում էի, թե արդյոք մի բան չէի՞ մոռացել: Ո՛չ, կարծես ամեն ինչ կարգին էր:

Արևելյան ինտերյեր, գործ՝ Մարտիրոս Սարյանի, 1918թ., Գ. Յանիկյանի նվիրատվությունը Մ. Սարյանի թանգարանին

Սպասուհին եկավ, հայտնեց, որ սենյակը պատրաստ է: Վերադարձա և մի անգամ ևս նայելով ու քննելով զենքգիրքը՝ դրեցի այն հայելու առջևի սեղանի վրա: Քննեցի նաև բրաունինգը ու դրեցի մի կողմ՝ ծածկելով «Թայմ» շաբաթաթերթով:

Ժամը 10-ն անցել էր, երբ գնացի պատշգամբ: Առավոտը բավականին ցուրտ էր, ես վերարկու էի հագել ու գլխիս դրել իմ սովորական բերետը:

Անցնողները բարև էին տալիս: Սովորություն էր, որ մոտիկ ապրողները ծանոթ-անծանոթ «բարի լույս» էին ասում միմյանց, որով ցույց էին տալիս (ըստ իրենց ըմբռնումի), որ զարգացած ու խելացի մարդիկ են:

Կողքի սենյակի դուռը բաց էր: Մի խումբ մարդիկ առավոտ կանուխ թուղթ էին խաղում: Հետագայում նրանցից մեկը դատավարության ժամանակ դատախազի վկան եղավ: Պարզվեց, որ մեծ դիրքեր ունեցող անձնավորություններ են: Բոլորն էլ Կալիֆոռնիայի զանազան քաղաքներում դրամատների կառավարիչներ են եղել և եկել էին ժողովի: Առավոտ վաղ «փոկեր» էին խաղում. լավ ժամանց դրամատների տերերի համար:

...Տեսա՝ ինչպես 2 հյուպատոսները (թուրքեր- խմբ.), դեռ հեռվից լայն ժպիտը դեմքերին, մոտենում էին ինձ: Ես էլ ժպտալով գնացի՝ դիմավորելու: Մեկին, մինչ այդ, ինչպես ասել եմ, տեսել էի, մյուսին՝ ոչ: Մենք ծանոթացանք և, որպես սրտագին հին ծանոթներ, ձեռք մեկնեցինք:

- Ուրախ եմ ծանոթանալու Ձեզ հետ, Յանի խան,- ասաց գլխավոր հյուպատոսը:

- Ուրախությունն իմն է, Ձերդ վսեմություն,- պատասխանեցի ես:

- Ինչ լավ, գեղեցիկ տեղ եք ապրում,- շարունակեց նա:

- Ես այստեղ ժամանակավոր եմ ապրում, քաղաքում իմ բնակարանն ունեմ: Երբ ցանկանում եմ հանգստանալ կամ մասնավոր այցելողներ ունենալ, այն ժամանակ ես գալիս եմ այստեղ:

- Ես ծանոթ եմ Սանտա Բարբարային, շատ լավ, սքանչելի, հարուստների քաղաք է:

- Ոչ միայն հարուստների քաղաք է, այլ ամեն տեսակ մարդ էլ ապրում է: Այս կողմ, Ձերդ վսեմություն,- և այսպես խոսելով՝ ես առաջնորդեցի նրանց դեպի իմ սենյակ: Առաջարկեցի նստել բազկաթոռների վրա, իսկ ինքս նստեցի անկողնու անկյունին. այնպես էր, որ երկուսն էլ իմ դիմացն էին: Բազկաթոռների մեջտեղը մի սեղան կար, որի վրա դրված էր իմ ճատրակի հավաքածուն: Ժամանցի համար երբեմն ինքս մենակ լուծում էի որոշ խնդիրներ, որոնք միշտ հրատարակվում էին մասնավոր հրատարակություններում: Փոխհյուպատոսն ուզում էր, որ ես նստեի բազկաթոռին, իսկ ինքը քաշեց մի աթոռ, որ նստի: Ես մերժեցի և ասացի, որ բազկաթոռները հյուրերինն են:

Մի քանի վայրկյան խոսելով ճատրակի մասին՝ հյուպատոսը ուշադրություն դարձրեց մի մեծ նկարի վրա, որը մի քանի ամիս առաջ բարեկամս էր քաշել և մեծացրել:

- Գեղեցիկ նկար է Յանի խան: Դու գեղեցիկ տղամարդ ես: Շատ ուրախ եմ, որ մեր երկիրը ձեզ պես բարեկամներ ունի: Մեր երկիրն էլ գիտե գնահատել իր բարեկամներին: Ահա նամակը, որով ինձ տրվում է իրավունք՝ ստանալ նվերները և ուղարկել Անկարա:

Նամակը մեկնեց ինձ, ես վերցրի և սկսեցի կարդալ:

- Յանի խան, այդ ստորագրություններով տաճկական դրամը կարո՞ղ եմ տեսնել:

- Իհարկե, Ձերդ վսեմություն,- պատասխանեցի ես և, հանելով պայուսակիցս, տվեցի իրեն: Նա սկսեց ուշադրությամբ քննել: Ես գիտեի, որ ոչ թե պատկերն էր նրանց հետաքրքրողը, այլ՝ դրամը, որը յուրաքանչյուր թանգարանի համար մի գանձ է:

Նա դրամն էր զննում, ես նամակս էի կարդում: Փոխհ-

յուպատոսն իրավունք խնդրեց ծխելու:

Կարդացի նամակը, որն ինձ լիովին բավարարեց: Գրված էր իմ ուզածի պես: Կառավարությունը հայտնում էր իր շնորհակալությունը և տեղյակ պահում, որ հարկ եղածն արդեն կարգադրված էր:

Մի օր այդ նամակը դառնալու է թանգարանի առարկա, բայց այժմ դեռ դատախազի մոտ է մյուս բոլոր թղթերի ու իրերի հետ, որոնք, ըստ բացատրության, կարող են վերադարձնել միայն իմ դատավարության ավարտին: Բայց քանի որ վերաքննություն ենք արել, դրանք մնալու են իրենց տրամադրության տակ՝ որպես փաստեր:

Ես որոշել էի, նախքան գործի անցնելը, մի քանի խոսք ասել, որ նրանք գիտենան, թե ինչո՞ւ պետք է ոչնչացվեն, և ո՞վ եմ ես:

Առանց այլևայլության ասացի.

- Դուք գիտե՞ք, որ ես ՀԱՅ եմ, ծնվել եմ Էրզրումում:

Մի վայրկյան եղավ նրանց շփոթությունը: Կիսազարմանքով նայում էին ինձ վրա:

- Ես գրող եմ և շատ անգամներ եմ գրել ընդդեմ ձեր կառավարության:

Հյուպատոսն ավելի դիվանագետ էր, քան իր օգնականը:

Դեմքի վրա մի ժպիտ ցույց տալով, որից պարզ երևում էր, թե կեղծավորի ժպիտ է, ասաց.

- Շատ էլ լավ ես արել, Յանի խան: Բայց դա անցյալում է եղել: Այսօրվանից ամեն ինչ փոխվելու է: Տեսեք, դուք նվերներ եք տալիս մեր երկրին: Մեր երկիրն էլ՝ որպես շնորհակալություն, ձեզ 2 շքանշան պիտի տա: Ես էլ իմ կողմից խոսք եմ տալիս, որ մի 5.000 դոլար դրամ էլ ձեզ կտրվի, որ դուք այլևս մեզ հակառակ բաներ չգրեք: Չէ՞ որ մենք հիմա բարեկամներ դարձանք:

Ծիծաղելով պատասխանեցի.

- Բայց դուք չգիտեք իմ իսկական անունը: Ես Յանի խան եմ ձեզ համար, միաժամանակ ես Նեգրուգն եմ:

Այս անունը, որ իմ Գուրգեն անվան հակառակ կարդալն է, ես տասնյակ տարիներ, որպես կեղծանուն, օգտագործել էի իմ գրությունների համար, մանավանդ այն գրվածքների, որոնք տաճիկներին էին վերաբերում: Շատ ոտանավորներ նույն անունով հրատարակված էին զանազան երկրներում և նույնիսկ Տաճկաստանում: Երևի այդ անունը նրանք գիտեին, որովհետև հյուպատոսի ձեռքից դրամը, որը զննում էր, ցած ընկավ: Բայց չկորցրեց իր սառնարյունությունը:

Մի քիչ գունատված, բայց շատ սիրալիր ասաց.

- Ասացի, որ հիմա բարեկամներ ենք և մոռանալու ենք ամեն ինչ:

Ես, արդեն չկարողանալով զսպել ինձ, մի կողմ թողի դերասանությունս, որը մինչ այդ անում էի հաջողությամբ: Կատաղած նայելով ուղղակի հյուպատոսի աչքերի մեջ՝ ասացի:

- Բարեկամնե՞ր, գազանների հետ բարեկամ չեմ կարող լինել: Ձեր ցեղը 2 միլիոն մեր ազգից մորթել է: Հիմա ինձ դրա՞մ եք առաջարկում: Դուք փոխել եք ձեր երկրի կառավարելու ձևը, բայց մնացել եք նույն կեղտոտ ազգը:

Այս խոսքերը դեռ չէի վերջացրել, երբ փոխհյուպատոսը, վերցնելով իր կողքին գտնվող աթոռն, ասաց.

- ,,You, son of a bitch, dirty Armenian,, (Դու, բոգի տղա, կեղտոտ հայ),- ուզեց հարվածել ինձ: Մի ձեռքով աթոռը իմ գլխից ետ հրելս, վեր ցատկելս ու դեպի սեղանը գնալս մի վայրկյան տևեց: Վերցնելով գիրքը, որի մեջ պարաբելումն էր պահված, ասացի.

- Այժմ դուք գիտեք՝ ով եմ. ես պետք է ձեզ ոչնչացնեմ:

Իմ այս անսպասելի խոսքերը, մանավանդ ձեռքիս գտնվող անմեղ երևացող գիրքը մի վայրկյան նրանց շփոթության էր մատնել: Ձախ ձեռքով բռնած կողքը, երբ բացի, միայն հյուպատոսն էր, որ տեսավ, թե ինչպես ատրճանակը բուռս մտավ, փոխհյուպատոսը տեսնում էր միայն գրքի կազմի կողքը, որի վրա անգլերենով գրված էր վերնագիրը:

- Պիտի ոչնչացնեմ երկուսիդ էլ,- ասացի և հետո ուրիշ խոսքեր էլ ասացի, բայց, անկեղծ ասած, չեմ հիշում, թե՝ ինչ:

Երկու հարված տալով հյուպատոսին՝ գիրքը դեն շպրտեցի և զենքն ուղղեցի երկրորդին: Քանի՞ անգամ կրակեցի և երկուսից որի՞ն, չեմ հիշում, միայն երբ վերջին ինքներորդը կրակեցի, երկուսն էլ արդեն գետնին էին ընկած:

Ձեռքիս զենքը դնելով սեղանի վրա, վերցնելով բրաուինգը և մոտենալով դիակներին՝ մի 2-2 փամփուշտ էլ ուղարկեցի գանգերին: Ֆրանսիացիք կոչում են "coup de grace", այսինքն՝ «խղճալու հարվածներ», որ եթե կյանքի նշույլ է մնացել, այն էլ ոչնչանա:

Մոտեցա հեռախոսին, կանչեցի հյուրանոցի հեռախոսավարին և ասացի, որ ինձ միացնեն ոստիկանապետ Գարբենթրի հետ, որովհետև իմ սենյակում 2 դիակ կա:

Նկարի հանձնման պահը Մ. Սարյանի թանգարանին, 1972թ.

Նա չհավատաց և տալով անունս՝ հարցրեց. «Ի՞նչ եք ասում»:

- Հեռախոսեք ոստիկանապետին, որ գա այստեղ, որովհետև 2 չարիքներ ես ոչնչացրի իմ սենյակում:

Հագա վերարկուս, դրեցի բերետս ու դուրս եկա պատշգամբ, որտեղ արդեն հավաքվել էին հյուրանոցի ծառայողները:

Խնդրեցի մի բաժակ ջուր: Չեմ հիշում՝ ով բերեց: Հսկում էի, որ ոչ ոք ներս չմտնի: Սպասում էի:

Մի 5-10 րոպե անցավ. ոչ ոք չէր երևում: Խնդրեցի մեկին (հյուրանոցի կառավարիչն էր), որ գնա և հեռախոսի ոստիկանապետին, թե ինչո՞ւ չեն գալիս: Մեկ ուրիշին էլ, որ ուզում էր մտնել խոսակցության մեջ, նույնպես ասացի, որ լավ կլինի, եթե նա գնա և շտապեցնի ոստիկանությանը:

- Գուցե դեռ ողջ են և կարիք ունեն օգնության,- մի ինչ-որ խելացի ծառայող ասաց ինձ:

- 2 փամփուշտ ուղեղում՝ ոչ ոք չի կարող ողջ լինել,- պատասխանեցի ես:

Վերջապես լսվեց շտապ օգնության մեքենայի ձայնը: 2 մարդ զանազան օգնության պիտույքներով շտապեցին դեպի սենյակ: Մի քանի վայրկյան հետո մեկը դուրս եկավ և կարգադրեց, որ բերեն պատգարակը: Բերեցին, և տեսա, թե ինչպես դուրս տարան նախ՝ հյուպատոսի մնացորդը, ապա՝ մեկ ուրիշ օգնության մեքենա էլ եկավ ու տարավ նրա օգնականի մնացորդը:

Ոստիկանապետի գրասենյակից դեռ մարդ չէր եկել: Երևի շատ զբաղված էին: Ես, հանգիստ նստած, սպասում էի: Վերջապես տեսա՝ 5-6 ոստիկաններ բավականին հեռվից շրջապատել են պատշգամբը:

Շարունակությունը՝ էջ 6-ում

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ



ԼԵՎՈՆ ԷՔՄԵՔՃՅԱՆ (1958-1983)

1982թ. օգոստոսի 7-ին ՀԱՀԳԲ-ի «Խրիմյան Հայրիկ անձնասպանական ջոկատը» հարձակվեց Անկարայի էսանպողա օդակայանի վրա: Գործողությունն իրականացրեցին Զոհրապ Սարգսյանն ու Լևոն էքմեքճյանը: Զոհրապը կռվեց երկուսուկես ժամ և երբ զինամթերքը սպառվեց, ինքնասպանություն գործեց: Լևոնը վիրավորվեց, անգիտակից վիճակում գերի ընկավ և Թուրքական դատարանի կողմից դատապարտվեց մահվան, որն ի կատար ածվեց 29 հունվար 1983-ին:



ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ (1963-1986)
Նահատակվել է Լիբանանում:

Սկիզբը՝ էջ 5-ում

Զարմանալու բան չկա: Նրանք էլ չեն ցանկանում զոհ գնալ: Որտեղի՞ց գիտեն. գուցե ես ցնորված կամ հիվանդանոցից փախած մեկն եմ, որը զինված է ու կարող է կրակել աջից ձախ: Ես հասկացա խեղճերի դրությունն ու, դիմելով նրանց, ձեռքի նշանով կանչեցի:

Քաղաքացիական զգեստով մեկը վախվխելով մոտեցավ ինձ ու հարցրեց. «Ձենք ունե՞ս...»: Երբ իմացավ, որ զենքերս սենյակում են, ոստիկաններին նշանով հրավիրեց մոտենալ:

Միանգամից կարծես բոլորը լծվեցին գործի: Սկսեցին ներս ու դուրս անել սենյակից, խոսել միմյանց հետ և հավաքված ժողովրդին կարգի հրավիրելով՝ մի որոշ տարածության վրա պահել:

Ինձ մոտեցողն ու հետս խոսողը ոստիկանության հասարակ ծառայող չէր եղել, այլ՝ գաղտնի ոստիկան: Երբ իմացավ, որ զենք չունեմ, ինձ կանգնեցնելով, սկսեց քննել ոտքից մինչև գլուխ, կարծես կոշիկիս մեջը պահած լինեի: Հանեց գրպանից բազուկի շղթաներ և ուզում էր ինձ շղթայել:

- Լավ մարդ,- ասացի ես,- մոտ 20 րոպե ես այստեղ նստած ձեզ եմ սպասում, հիմա դու ուզում ես ինձ շղթայել, որ չփախչե՞մ: Առանց շղթայելու էլ ես կգամ քեզ հետ, ուր որ տանելու ես:

Հանդիսականները հետաքրքրությամբ լսում էին մեր այս խոսակցությունը, որը հետագայում դատավարության ժամանակ ևս պարզաբանվեց: Հանդիսականներից ոմանք, որ կանչված էին դատախազի կողմից, բացատրում էին, որ ես ցանկանում էի ինձ տանեն առանց շղթայի:

Պատմեցին, որ ես 20 րոպե սպասում էի:

Գաղտնի ոստիկանը մերժեց իմ առաջարկը՝ ասելով, որ օրենքը պահանջում է, որ ինձ շղթայեն:

Պաշտոնյան մի քանի անգամ փորձեց, բայց տեսնելով, որ ձեռքերս մինչև իր ուզածի չափ ետ չի գնում, որովհետև ես չէի թողնում, ստիպված եղավ բազուկներս շղթայել՝ դեպի առաջ միացնելով: Սա առաջին սուտն էր, որ ես ասացի ինձ ձերբակալողներին:

Արդեն եկել էին և բարձր պաշտոնյաներն ու բարձրաձայն կարգադրություններ էին անում:

Ես, նայելով շղթայված ձեռքերիս, հիշեցի իմ անմոռանալի հայրիկին, որը միշտ կրկնում էր.

«Տղաքս, ձեզ փող թողի կամ ոչ, նշանակություն չունի ինձ համար: Բայց ես պիտի ձեր բազուկին ոսկի ապարանջան տամ ուսումով, որ երբեք չկորչի»:

Որքան իրավացի էիր դու, սիրելի՛ հայրիկ, իմ անցած կյանքն ապացուցեց: Ափսոս, սիրելիս, որ չես տեսնում այս պողպատե շղթաները, որոնցով հիմա շղթայված եմ, որ համոզվես, որ քո տված ուսումն ապարդյուն չանցավ: Գիտեմ, հայրիկ ջան, եթե դու ողջ լինեիր, պիտի ունենայիր մի ցանկություն, համբուրել ճակատը քո ամենափոքր որդու ու ասել. «Ապրիս տղաս, շատ ապրի՛ս: Ես ցանկություն ունեի քեզ նվիրել Ամենակարողին: Դու քո կամքով քեզ նվիրեցիր քեզ կյանք տվող ազգին: Ապրի՛ս, Գուրգեն ջան, շա՛տ ապրիս: Հպարտ եմ քեզնով, որ տվածս ուսումն ապարդյուն չի անցել: Մեր անթիվ զոհերի անթաղ ոսկորները հիմա կհանգստանան: Դու իմ սիրելի՛, ջահակիր որդի՛ս, այստեղ էլ դու մնացել ես նույնը, ինչ էիր քո երիտասարդության ժամանակ: Մի՛ զղջա, տղաս»:

Կարծես ես զգացի մի համբույր իմ դեմքին: Սթափվեցի:



ՍԱՐԳԻՍ ԴԵՐՁԱԿՅԱՆ (1962-1985)
Նահատակվել է Լիբանանում, փետրվար 28-ին:

ՀՐԱՉ ԹՐԹՌՅԱՆ (1962-1986)
Նահատակվել է փետրվարի 11-ին, ԱՄՆ-ում:



ԽԱՉԱՏՈՒՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ (1966-1987)
Նահատակվել է Լիբանանում, փետրվարի 24-ին:
Կյանքի գնով պաշտպանեց Հայկական ժողովրդային շարժման գրասենյակը օտար պետության հատուկ ծառայությունների աշխատակիցների հարձակումից:

ԱՐԱՄԱՅԻՍ ՕՀԱՆՅԱՆ
(1961-1998)
Հայկական ժողովրդային շարժման գործունյա անդամներից էր:
Նահատակվել է Սիրիայում ավտովթարից:

«Նորագույն շրջանի հայ ազատագրական պայքար ասելով՝ հարկ է առաջին հերթին նկատի ունենալ Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի գործունեությունը»:

Ստեփան Պողոսյան, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն,
Նահատակներ հավերժության, Երևան - 2005, էջ 115

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 14-ԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՋԵՐՄ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՑ

Հունվարի 28-ին հայ ժողովուրդը նշեց Հայոց բանակի տարեդարձը: Ամեն հայ գիտակցում է ուժեղ բանակի կարևորությունը և գոհունակությամբ ինքն իրեն շնորհավորում է, որ իր երկիրն ունի քաջ ու նվիրված զինվորներ, ովքեր իրենց պատրաստվածությամբ միշտ կարող են սարի պես կանգնել պատերազմի վտանգի առջև:

Մեր ժողովրդին և, հատկապես, բանակայիններին շնորհավորում է զինվորական կյանքի բովով անցած մեծ հերոս՝ Արկադի Տեր-Թադևոսյանը.

- Ես շնորհավորում եմ աշխարհի բոլոր հայերին այդ նշանակալից օրվա կապակցությամբ: Ուզում եմ առաջին հերթին մեր զինվորներին մաղթել առողջություն, բարի ծառայություն, շուտ վերադառնան տուն, հասնեն իրենց սրտատրոփ սպասող ծնողներին: Ցանկանում եմ, որ մեր զինվորներին սպասող աղջիկները քաջալերեն ու միշտ ջերմ նամակներ գրեն նրանց, որպեսզի ծառայությունն աննկատ անցնի, ինչպես նաև սպաներին, գեներալներին մաղթում եմ առողջություն, համբերություն և ընտանեկան երջանկություն: Ցանկանում եմ, որ նրանց մեջ ավելի հաճախ արթնանա զինվորների հանդեպ ծնողական վերաբերմունքը, որպեսզի ծնողաբար հոգ տանեն մեր զինվորների մասին: Այդպես հնարավոր կլինի ապահովել ամուր ու միասնական բանակ: Եթե բանակը միշտ պատրաստ լինի պատերազմի, վտանգը շատ քիչ կլինի: Չէ՞ որ ուժեղների վրա չեն հարձակվում: Եթե միշտ լինենք ուժեղ ու պատրաստված, կապրենք ապահով ու երջանիկ՝ չվախենալով պատերազմներից:

Մենք այդ նշանակալից օրվա առիթով միջոցառումներ ու սեմինարներ անցկացրեցինք, որոնք պատրաստել էր մեր երիտասարդական կազմակերպությունը: Ի դեպ, շատ կարևոր է այն փաստը, որ մեր երիտասարդական մասնաճյուղի միջոցով 2006-ին ավելի շատ կլինեն շփումները մեր բանակայինների, ինչպես նաև մեր մյուս երիտասարդների հետ, հետևաբար, հրավիրում ենք ցանկացողներին մեզ հետ համագործակցել:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ՝ մաղթելով մեր զինվորներին ուժ, իսկ ծնողներին՝ մեծ համբերություն:

ՀՀ ՊՄՏՀԿ (ԴՕՍԱՖ) ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում կան բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններ, որոնք մեծ հնարավորություններ ու հորիզոններ են բացում նոր սերնդի առջև: Ի ուրախություն ակտիվ կյանքի սիրահար երիտասարդների, որոնք դեմ չեն ձեռք բերել ֆիզիկական ու մարտական պատրաստվածություն, ՀՀ ՊՄՏՀԿ-ի (Պաշտպանա-մարզատեխնիկական, հասարակական կազմակերպություն) աշխատակազմը Արկադի Տեր-Թադևոսյանի գլխավորությամբ հիմնել է երիտասարդական մասնաճյուղ, որի նախագահ է ընտրվել երիտասարդ տնտեսագետ Դավիթ Դավթյանը: Մինչ կազմակերպության փաստացի ստեղծումը գործում էին առանձին խմբակներ: Դառնալով այս կազմակերպության անդամ՝ երիտասարդները հնարավորություն են ստանում ձեռք բերել մարզական և մարտական պատրաստվածություն, ամրապնդվում է նրանց ռազմահայրենասիրական ոգին, որը մեծ նշանակություն ունի մեր ազգի համար: Անդամագրվող երիտասարդներին առաջին հերթին այստեղ է բերում հետաքրքրասիրությունը, իսկ երբ նրանք հաջողությունների են հասնում, աստիճանաբար այդ պարապմունքները նրանց համար իմաստ են ձեռք բերում:

Դ. Դավթյանը պատմեց կազմակերպության նպատակների ու առաջիկա ծրագրերի մասին: Գլխավոր նպատակն է մասնակցել ժողովրդական լայն զանգվածների հայրենասիրական ոգու ամրապնդմանը՝ համագործակցելով պետական մարմինների և բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ինչպես նաև նպաստել երիտասարդների ու պատանիների ռազմատեխնիկական, ֆիզիկական և բարոյական դաստիարակությանը, հայրենիքի պաշտպանության սուրբ գործին անմնացորդ նվիրվելու և բարոյական բարձր հատկանիշների ձևավորմանը՝ զուգորդելով դրանք ռազմական գիտելիքների գործնական ուսուցման հետ: Կազմակերպությունը համագործակցում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ և պետական պատվերով Ազգային բանակի համար պատրաստում է ռազմատեխնիկական մասնագետներ: Հաճախ են կազմակերպվում մրցույթներ ու մրցելույթներ, որոնք նպաստում են Հայաստանում տեխնիկական և ռազմակիրառական մարզաձևերի զարգացմանը: Կազմակերպությունն այսօր արդեն ակտիվ գործունեություն է ծավալում երիտասարդության շրջանում և, մշտապես, նյութապես ու տեխնիկապես կատարելագործվելով, անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս ժողովրդական կրթության համակարգին դեռահասների նախնական զինվորական ուսուցման բազայի ստեղծման և կատարելագործման ուղղությամբ: Նորաստեղծ կազմակերպությունը մոտ ապագայում նախատեսում է վերակառուցողական աշխատանքներ անցկացնել շուրջ երկու տասնյակ մարզակառույցներում (մայրաքաղաքում և մարզերում), որոնց անցյալում պատշաճ ուշադրություն չի դարձվել: Դրանց նորոգումն ու վերակառուցումը հնարավորություն կտա տասնյակ հազարավոր երիտասարդներ ընդգրկել մարզումների և մրցումների հորձանուտ:

Հուսանք՝ ՀՀ ՊՄՏՀԿ երիտասարդական կազմակերպությունը կհասնի իր նպատակներին, դաստիարակելու նոր սերունդը՝ որպես ուժեղ, արդար ու հայրենասեր երիտասարդություն:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԻԿՏՈՐԻՆԱ

ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Երկու-երեք քարընկեց էր մնացել, որ հասնեի Սուրբ Աղբերիկ, երբ իմ առաջ բացվեց լեռնային աշխարհի անկրկնելի մի տեսարան:

Մի խումբ սասունցիներ, ձորի խոր հատակից քարքաշով, դեպի սարի գլուխն էին հանում մի վիթխարի ջրաղացքար: Քարքաշը երկճղանի կոշտ ու կոպիտ մի փայտ էր՝ ուղղահայաց մի ցից կենտրոնում: Գլխի հաստ կողմում կացնի նեղ բերանով փորված մի անցք կար: Ջրաղացքարը պառկեցրել - հագցրել էին ցցի վրա, փորանցքից մի երկայն շղթա էին անցկացրել, շղթայից՝ հորիզոնական ձողեր: Երկու կողմից երեքական տղամարդ ձեռքերով պինդ բռնած և կրծքերը դեմ տված այդ ձողին, հսկում էին, որ հավասարակշռությունը չխախտվի: Լծել էին նաև յոթ լուծ եզ՝ հոտաղները լուծքերին, և անդունդի թեք քարքարոտ կողերով դեպի վեր էին տանում հսկա քարը՝ ամեն որպես պատրաստ քարքաշով, ջրաղացքարով և լծկաններով ձորը գլորվելու: Թվով տասնութ - քսան հոգի էին՝ բոլորն էլ դարչնագույն թուխ դեմքերով, բրդյա գդակներով և կռնակներին այծամորթի: Ամենից բարձրահասակը մի հաղթանդամ ծերունի էր՝ ալրոտ հագուստով: Նա ետևից էր գալիս, զգուշորեն հետևելով, որ քարը չպոկվի քարքաշից:

...Ամբողջ գիշերը ջրի զորավոր հոսանքը աչքերիս առաջ ուժգնորեն դարձնում էր ջրաղացի թափանիվը, և ես, այդ պտուտակի մոտ կանգնած, մտածում էի հեղեղից քանդված և վերականգնված ջրաղացի մասին և այն զարմանալի տոկուն ջրաղացպանի մասին, որի անունը Միրոն էր, այն լեռնականների մասին, որոնց կամքը ավելի հզոր էր, քան լեռնային ամեհի հեղեղը: Միայն հավատքի ուժը կարող էր անդունդի հատակից վեր բարձրացնել խորտակված ալյուրաքարը: Եվ ակամայից ես մեր ժողովրդի բախտը համեմատում էի խութեցի Միրոյի ջրաղացի հետ: Պատմության դաժան հեղեղը մեր ազգի բախտի ջրաղացքարը նետել էր անդունդ: Ո՞վ պետք է վերևից զգաստ աչքով նկատի ահեղ վտանգը և, սարից - սար գոռալով, առաջինը շտապի օգնության: Ո՞վ պիտի այդ տեղահանված քարը անդունդից հանի և վերստին հաստատի իր հիմքի վրա:

Այդ պետք է անենք մենք: Պետք է անեն հավատի ուժը և հավատավոր մարդիկ: Եթե բոլորս ի մի զորվենք և մեր կամքը դարձնենք մի հսկա քարքաշ, անկարելի բան է, որ մեր բախտի քարը հեղեղից պարտված մնա անդնդում:

Միրելի ընթերցող.

Վիկտորինայի հարցերին առաջինը ճիշտ պատասխանելու դեպքում Ձեզ սպասվում է հաճելի անակնկալ՝ բացառիկ հանդիպում Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի /ASALA/ մարտիկների հետ:

Ո՞վ է այս պատումի հեղինակը:
Ինչպե՞ս է այն կոչվում:
Որտե՞ղ և ե՞րբ են տեղի ունեցել գրքում նկարագրված իրադարձությունները:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱ

Ապրիլի 17-ին, ժամը 10-ին Միացյալ Նահանգների հանրային հեռուստատեսությամբ (PBS) տեղի կունենա փաստագրական ֆիլմի պրեմիերա: «Հայոց ցեղասպանություն» փաստագրական ֆիլմն ամբողջական պատմություն է 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին:

Աննախադեպ և ազդեցիկ մեկժամյա այս ֆիլմը նկարահանել է «Էմմի» մրցանակակիր, պրոդյուսեր Էնդրյու Գոլդբերգը «Թու քեթս փրոդաքշընս» ստուդիայում «Օրեգոն փաբլիկ բրոդքաստինգի» հետ համատեղ: Հարցազրույցներն արված են ոլորտի առաջատար այնպիսի փորձագետների հետ, ինչպիսիք են՝ Պուլիցերյան մրցանակակիր, հեղինակ Սամանտա Փաուերը և «Նյու Յորք թայմսի» բեստսելեր հեղինակ Պիտեր Բալաքյանը: Ֆիլմը ներկայացնում է 20-րդ դարի դեպքերի մինչ այդ երբևէ չցուցադրված պատմական կադրեր և դեռևս չպատմված պատմությունների դերակատարներին: Ֆիլմի տեքստը կարդում է Ջուլիան Մարգուլիսը, ընդգրկված են նաև Էդ Հարիսի, Նատալի Պորտմանի, Օրլանդո Բլումի և այլոց պատմական խոսքերը:

Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում, Թուրքիայում և Սիրիայում նկարահանված այս ֆիլմը ներկայացնում է քննարկումներ քուրդ և թուրք քաղաքացիների հետ ժամանակակից Թուրքիայում, որոնք բացահայտ ներկայացնում են իրենց ծնողների և պապերի պատմած պատմությունները: Մինչդեռ այսօր Թուրքիան ժխտում է ցեղասպանության փաստը: Ֆիլմը ներառում է նաև նախկին թուրք դիվանագետ Գունդուզ Աքթանի վկայությունը Մ. Նահանգների օրենսդիրների առջև, որտեղ նա բացատրում է պաշտոնական Թուրքիայի դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ: «Թուրք ժողովուրդն իսկապես հավատում է, որ այն, ինչ պատահել է հայ ժողովրդին, ցեղասպանություն չէր»,- ասում է Աքթանը:

Ըստ ֆիլմի ռեժիսոր Գոլդբերգի՝ «Քանի որ Թուրքիան ցանկանում է միանալ Եվրոպական միությանը, 90 տարի անց այս ֆիլմը կարող է մարդկանց ավելի լավ պատկերացում տալ, թե ինչո՞ւ այս հարցն այդքան կարևոր է»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ[1]

Լ. Բ. ՏՐՈՑԿԻ (իրական ազգանունը ԲՐՈՆՇՏԵՅՆ, հրապարակվել է Ա. ՍԿԱՉԿՈՎ կեղծանունով)

Արևելյան չորս պետությունների՝ **Սովետական Ռուսաստանի**, **Ադրբեջանի** և իմպերիալիզմի դեմ կռվող **Թուրքիայի** առաջիկա կոնֆերանսը բացառիկ կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն է[2]: Այն շրջադարձային կետ պիտի հանդիսանա Համաշխարհային Հեղափոխության պատմության մեջ: Այդ կոնֆերանսում պետք է կատարվի երկուսից մեկը. կամ արևելյան պետությունները իրար հետ պետք է կապ հաստատեն, և այն ժամանակ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարը կստանա չտեսնված ուժ ու ծավալ, կամ, փոխադարձ համաձայնության չգալով և մեկը մյուսից երես դարձնելով, նրանք դրանով իսկ հարված կհասցնեն հեղափոխության զարգացմանը արևելքում: Իսկ հեղափոխության մասնատումը արևելքում առաջ կբերի հեղափոխության հարատև ձգձգում արևմուտքում:

Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակն այժմ հավասարապես կախված է ինչպես հեղափոխական պրոլետարիատից, այնպես էլ իմպերիալիզմի կողմից ճնշված արևելյան երկրներից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի կոնֆերանսի մասնակից արևելյան երկրները միահամուռ ճակատով ելույթ ունենան ընդդեմ արևմտաեվրոպական իմպերիալիզմի: Դրա համար անհրաժեշտ է, որ այդ պետությունները իրար նկատմամբ այնպիսի զիջումներ անեն, որոնք ի վիճակի լինեն վերացնելու փոխադարձ դժգոհությունը և անվստահության բոլոր առիթները:

Ներկայացված հոդվածը կարևոր է իր արդիականությամբ, երբ կրկին հայության առաջ դրվում է փոխզիջումների, ըստ էության, **զիջումների** խնդիրը: Ակնհայտ է, սակայն, որ հայությունը զիջումների ու նահանջի տեղ չունի այլևս, և որ Արցախյան հիմնախնդրի կարգավորումը ենթադրում է նախ և առաջ 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական դաշնագրով Հայաստանին պարտադրված դրույթների վերանայում - խմբ.:

Ինչպիսին պետք է լինեն այդ զիջումները, և ով պիտի իր վրա վերցնի զիջումների նախաձեռնությունը՝ արևելքում բարեկամական հարաբերություններ ստեղծելու համար: Այստեղ չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, որ կոնֆերանսում հանդիպում կունենան **երեք սոցիալիստական[3] և մեկ բուրժուա-նացիոնալիստական** պետություններ: Կհանդիպեն երկու աշխարհայացքներ և այդ աշխարհայացքների էությունից կբխի, թե ինչ զիջումներ պետք է արվեն: Եվ այդ զիջումներն ում համար կլինեն կարևոր: Այն ժամանակ, երբ ազգայնա-պետական շահերը հետապնդող Անկարայի կառավարության համար չափազանց կարևոր նշանակություն ունի թուրքական տերիտորիայի պահպանման և **գուցե նաև նորերի վերցման[4]** հարցը, որոնք Սոցիալիստական պետությունների համար ոչ տերիտորիայի և ոչ էլ ազգային միասնության համար կարևոր դեր չեն խաղում: Առաջիկա կոնֆերանսում սոցիալիստական պետությունները, իհարկե, կղեկավարվեն ընկեր Վ. Լենինի կողմից ազգային-գաղութային հարցերի մասին առաջ քաշած սկզբունքով, որն ասում է.

«Պրոլետարական ինտերնացիոնալիզմը պահանջում է.

Առաջին՝ մեր երկրում պրոլետարական պայքարի շահերը ենթարկել համաշխարհային մասշտաբով նույն պայքարի շահերին:

Երկրորդ՝ պահանջում է, որպեսզի բուրժուազիայի դեմ հաղթանակ տարած ազգը ազգային մեծագույն զոհաբերությունների ընդունակություն և պատրաստակամություն ցուցաբերի հանուն միջազգային իմպերիալիզմի տապալմանը»:

Համաշխարհային մասշտաբով պրոլետարական պայքարի շահերը պահանջում են իմպերիալիզմի լծից ազատագրել միջազգային կապիտալիզմը սնող գաղութային և կիսագաղութային երկրներին: Հենց դրանով իսկ այդ պայքարի շահերը պահանջում են ամեն կերպ պաշտպանել Թուրքիան, որն առայժմ ԱՆՏԱՆՏԱ-ի իմպերիալիստական պետությունների դեմ ակտիվ պայքարող արևելքի միակ կիսագաղութային երկիրն է: Այդ պայքարում Թուրքիային օժանդակելու համար պայմանավորվող երկրները **պետք է բավարարեն** նրա ազգային պետական պահանջները: Անկարայի ազգային բուրժուական պետությունը չի ցանկացել և այժմ էլ չի ցանկանում հաղթահարել իր նացիոնալիզմը: Սակայն **սոցիալիստական պետությունները[5]**, այնուամենայնիվ, **պետք է** հաղթահարեն իրենց նացիոնալիզմը և համաշխարհային հեղափոխության շահերի համար **զոհաբերեն ոչ միայն իրենց տերիտորիաները, այլև նույնիսկ իրենց ցեղակիցների խմբերին**: Եթե մենք հավատ ունենանք պրոլետարական հեղափոխության նկատմամբ, ապա պետք է հասկանանք, որ այդ բոլոր զոհաբերությունները միայն ժամանակավոր են: Համաշխարհային հեղափոխության հաղթանակից հետո նրանք ամբողջովին չեղյալ կհամարվեն: **Եթե նույնիսկ Անկարայի պետությանը կասկածենք** համաշխարհային իմպերիալիզմին հարելու մեջ, **որ նա ցանկություն ունի իր իշխանության տակ պահելու հայկական բնակչության տերիտորիաները** և նույնիսկ **ցանկանում է գրավել Կովկասը**, ապա այդ դեպքում էլ **հարկ չկա վախենալու Թուրքիայից**, քանի որ նրա իմպերիալիստական մտադրությունները, եթե իրոք գոյություն ունեն, ապարդյուն կլինեն հենց այն պատճառով, որ Եվրոպայում պրոլետարական հեղափոխության հաղթանակի դեպքում անխուսափելի կլինի կոմունիզմի հաղթանակը նաև Թուրքիայում, **որը չունի իր սեփական արդյունաբերությունը և չի էլ կարող Եվրոպայից անկախ գոյություն ունենալ**: Սոցիալիստական պետությունները, հավատալով պրոլետարական հեղափոխության անխուսափելիությանը, պետք է հանուն այդ հեղափոխության հաղթանակի **զիջումներ** անեն նացիոնալիստական պետություններին՝ հիշելով որ այդ **զոհաբերությունները** միայն ժամանակավոր բնույթ են կրում: **Եթե 1920-ին Ռուսաստանը կարող էր զոհաբերել Ուկրաինան[6]**, այսինքն՝ ըստ էության ինքն իրեն, հանուն նոր բոցավառվող կոմունիզմի օջախի փրկության, ապա այժմ արևելքում հեղափոխության զարգացման շահերի համար սոցիալիստական պետությունները պետք է որոշ զիջումներ անեն Թուրքիային, որն արևելյան երկրներում իմպերիալիզմի դեմ պայքարի օջախ է: **Այս բոլոր նկատառումները վերաբերում են Հայաստանին**, քանի որ ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը Թուրքիայի հետ **վիճելի հարցեր** չունեն: **Կոնֆերանսում գլխավոր հարցը Հայկական հարցն** է, այսինքն՝ այն, որ Թուրքիայի և Հայաստանի միջև վերացվեն բոլոր **թյուրիմացությունները** և **հաստատվեն բարեկամական հարաբերություններ[7]**: Հայաստանն անպայմանորեն **պետք է ղեկավարվի ազգային մեծագույն զոհաբերությունների** վերաբերյալ Լենինյան **սկզբունքով**: Նա **պետք է հրաժարվի** ոչ միայն ծովից ծով Հայաստանի մասին դաշնակցական իմպերիալիստական մտադրություններից, այլև **նույնիսկ հայկական անվանվող հողերը**

միացնելու համեստ ցանկությունից[8]:

Այսպես՝ Հայաստանը պետք է հրաժարվի Վանի ու Բաղեշի (Բիթլիսի) վիլայեթները վերադարձնելու պահանջից, քանի որ ներկա պայմաններում այդ պահաջները պետք է համարել անհիմն: Ճիշտ է, այդ վիլայեթներում հայկական բնակչությունը կազմել է 40%, իսկ որոշ սանջակներում նույնիսկ բացարձակ մեծամասնություն: Ճիշտ է և այն, որ պատերազմի ժամանակ հայկական բնակչությունը էնվերի կառավարության կողմից ենթարկվել է բռնության, աքսորվել է, կոտորվել է, ջնջվել, իսկ մի մասն էլ ցրվել է ամբողջ Փոքր Ասիայում, Կովկասում, սակայն ճիշտ է նաև այն, որ այդ տերիտորիաներում հայկական բնակչության թիվը այժմ կազմում է 5-10%, ըստ 1919թ. Հարբորդի ամերիկյան հանձնաժողովի տվյալների:

Հանձնաժողովը ոչ մի հավակնություն չուներ պակասեցնելու հայկական բնակչության թիվը: Բացի դրանից, Վանի և Բիթլիսի **իսկական տերերը** (ըստ ռեալ ուժի) **ոչ թե թուրքերն են, այլ քրդերը**[9], որոնք ոչ մի կերպ չեն համաձայնվի Հայաստանին հանձնելու **իրենց հողերը**: Երբ **թուրքական արտակարգ դեսպանության ներկայացուցիչը Մոսկվայից**[10] վերադառնալուց հետո Անկարայի ազգային ժողովին զեկուցեց, թե Ռուսաստանը հաշտության պայման է դնում Վանի ու Բիթլիսի զիջումը Հայաստանին, քուրդ դեսպանները տեղերից գոռացին՝ «չհանձնել, թող հայերը փորձեն գալ ու վերցնել»: Ուժերի լրջմիտ հաշվառման դեպքում հայերը պետք է հասկանան, որ իրենք ուժեր չունեն այդ վիլայեթները վերցնելու համար: Հայերը կարող են այդ վիլայեթները գրավել միայն Ռուսաստանի օգնությամբ, սակայն, դրա հետ միասին, նրանք պետք է հասկանան, որ Կարմիր բանակը տվյալ պայմաններում նրանց համար չի գրավի Վանը և Բիթլիսը: Հայաստանի շահերի համար Կարմիր բանակի մտնելը Թուրքիա՝ կնշանակեր թուրք ժողովրդին և ամբողջ արևելքին ապացուցել, որ Սովետական Ռուսաստանը շարունակելու է ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, որ ռուսական կոմունիզմը դա ռուսական քողարկված իմպերիալիզմ է: Պայքար սկսել Թուրքիայի դեմ, նշանակում է տապալել հեղափոխությունը և անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարը ամբողջ արևելքում: Պարզ է, որ Սովետական Ռուսաստանը երբեք այդ քայլը չի կատարի, նույնիսկ եթե Հայաստանում Վանից և Բիթլիսից խառնված փախստականները ենթարկվեն անտանելի զրկանքների: Եթե Թուրքիայում մնացած հայությունը կառավարության կողմից այժմ հետապնդվի ու ճնշվի, միևնույնն է, Հայաստանին, մի որոշ ժամանակ, ոչինչ չի մնում անել, քան հաշտվել ստեղծված դրության հետ և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի զոհաբերել, թե՛ իր նախկին տերիտորիաները և թե՛ Թուրքիայում մնացած սեփական ժողովրդի մի մասը:

Հայաստանը պետք է հրաժարվի ոչ միայն այդ տերիտորիաներից, այլ նաև այն տերիտորիաներից, որոնք այժմ գտնվում են անկախ Հայաստանի կազմի մեջ[11]:

Հայկական **Կարսի և Արդահանի մարզերը չպետք է կռվախնձոր դառնան Հայաստանի և Թուրքիայի** միջև[12]: Հայկական կառավարության կողմից այդ տերիտորիաների վերագրավումը պետք է դիտել որպես իմպերիալիստական ակտ, քանի որ այդ տերիտորաների 67%-ը մահմեդականներ են, այդ իսկ պատճառով Հայաստանը ոչ մի իրավունք չունի ազգային ինքնորոշման սկզբունքով այդ տերիտորիաների նկատմամբ պահանջ[13] ներկայացնելու:

> Արցախյան հիմնախնդրի կարգավորումը չի ենթադրում միայն գոյություն ունեցող հայ - ադրբեջանական խնդիրների կարգավորում: 1920-ական թթ. հայությանը պարտադրվեցին այնպիսի «փոխզիջումներ», որոնք Հայկական հարցը վերածեցին մի ավելի բարդ թնջուկի, որի լուծումը հարցի համապարփակ վերանայումն է, այդ թվում՝ Կարսի և Լոզանի դաշնագրերի «ժառանգությունը» հաղթահարելու ճանապարհով: Տես՝ նաև ծանոթագրություն 14, 15 - խմբ.:

Իհարկե, կարելի է ասել, որ Կարսով և Արդահանով շահագրգռված է ոչ միայն Հայաստանը, այլև Ռուսաստանը, քանի որ այդ վայրերը Կովկասում պլացդարմ են ու մատույցներ: **«Ով տիրում է Կարսին, նա տիրում է Կովկասին»**: Սովետական Ռուսաստանը միջազգային հարցերը չի դիտում իր պետական շահերի տեսակետով, նա հավատ ունի համաշխարհային հեղափոխության հաղթանակի նկատմամբ և գիտի, որ այդ հաղթանակից հետո բոլոր պլացդարմներն ու մատույցները կորցնում են իրենց նշանակությունը: Հենց այդ պատճառով **Ռուսաստանը ընդունելի կհամարի Կարսի և Արդահանի զիջումը**[14] և նրանց **ժամանակավոր թողնումը Թուրքիայի իշխանության ներքո**[15] մինչև այն ժամանակ, երբ համաշխարհային հեղափոխությունը ամեն ինչ կարգի բերի:

Եթե աշխատավոր Ռուսաստանը և Հայաստանը հանուն արևելքում հեղափոխության զարգացմանը կարող են հայտնի զիջումներ անել Թուրքիային, ապա Անկարայի կառավարությունը պետք է հասկանա, որ ժամանակակից Սովետական Հայաստանը դաշնակցական Հայաստան չէ, որ հայ կոմունիստների և դաշնակցականների միջև որևէ հաջորդականություն չկա, և որ անմտություն է նրա կողմից **Սովետական Հայաստանի նկատմամբ ցուցաբերել թշնամական վերաբերմունք, ինչպես այդ եղել է դաշնակցականների**[16] ժամանակ: Անկարայի կառավարությունը հայ կոմունիստներից չպետք է պահանջի կատարելու դաշնակցականների հետ կնքված պայմանագրերը: Անկարայի կառավարությունը պետք է հասկանա, որ հեղափոխական Թուրքիայի թշնամին՝ դաշնակցական Հայաստանը, մահացած է, եթե նա փորձի հարություն առնել, ապա դաժան կերպով կջախջախվի ինչպես Հայ ժողովրդի, այնպես էլ նրան պաշտպանող Սովետական Ռուսաստանի կողմից: Այդ իսկ պատճառով կարիք չկա վախենալու դաշնակցականների հարություն առնելուց, այլ կարելի է համարձակ կերպով հավատալ կոմունիստների կողմից ղեկավարվող Հայ ժողովրդի բարեկամական հարաբերություններին և չպահանջել նրանցից ոչ մի **ստորացուցիչ երաշխավորումներ, ինչպիսին է զինաթափումը**[17] և այլն:

Անկարայի կառավարությունը քաջ գիտե, որ **հայ-թուրքական թշնամությունը մեծ տերությունների քաղաքական արդյունքն է**[18]: **Չկա ցարական Ռուսաստանը**[19]: Այժմ, երբ չկա ցարական Ռուսաստանը և Հայաստանը ազատվել է ԱՆՏԱՆՏԱ-ի ազդեցությունից, հայության **թշնամության պատճառները վերանում են** և ոչ մի հիմք չկա նոր շարունակության:

Ազդեցիկ հրապարակախոս Մ. Պավլովիչ Որոնտյովը իր վերջերս լույս տեսած «Ազգային և գաղութային» գրքում գրել է. «**Հայաստանում սովետական կարգերի հաստատումը մի քայլ է**[20] **Կովկասի, Վրաստանի, Հայաստանի և Անատոլիական Թուրքիայի**[21] **ֆեդերացիայի** ստեղծման համար, **ֆեդերացիա,** որի կորիզը կլինի և **որի շուրջը կհամախմբվեն արևելքի մյուս պետությունները»**:

Անկարայի կառավարությունը պիտի հասկանա, որ Հայաստանի սովետականացումից արդեն **հնարավորություն է ստեղծվում ոչ թե նրա դեմ պայքարելու**[22], **այլ նրա հետ համախմբվելու**՝ իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի համար: Եթե մի կողմից Անկարայի կառավարությունը հասկանա դա և կարողանա բարձր կանգնել կույր և տարբերային ազգային ատելությունից, իսկ մյուս կողմից **Հայաստանը հետևի Լենինի ազգային զոհաբերության մասին**

պատգամին, ապա այդ ժամանակ կարելի կլինի համոզվածությամբ պնդել, որ առաջիկա կոնֆերանսը վերջ կտա բոլոր **թյուրիմացություններին**, **անվստահություններին** ու մասնակից պետություններին կմիավորի անխախտելի բարեկամության ամուր շղթայով: Ահա այդ ժամանակ արևելքում հեղափոխության համար կբացվի իմպերիալիզմի դեմ հաղթանակի փայլուն դարաշրջան:

Ա. ՍԿԱՉԿՈՎ

Ծանոթագրություն

1. Նկատի ունի 1921թ. փետրվարի 26 - մարտի 16-ի Մոսկովյան Ռուս-թուրքական կոնֆերանսը, որը սույն հոդվածը հրապարակելու պահին արդեն ընթացքի մեջ էր, և Հայաստանի ու հայությանն առնչվող բոլոր հարցերի շուրջ պայմանավորվող կողմերը՝ Թուրքիան և ՌՍՖՍՌ-ը արդեն իսկ եկել էին վերջնական համաձայնության, որն էլ մարտի 16-ին ամրագրվեց՝ որպես 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական եղբայրության և բարեկամության պայմանագիր:

2. Հոդվածը գրված է եղել ամիսներ առաջ, այդ իսկ պատճառով թվարկման մեջ չորրորդ պետության անունը բացակայում է: Չորրորդ պետությունը Սովետական Հայաստանն էր, որը 1921թ. փետրվարի 18-ից մինչև մայիսի վերջ (ըստ՝ ավելի քան խիստ գաղտնիության պատճառով, դեռևս չճշտված տեղեկությունների) հենց Ալեքսանդր Մյասնիկյանի նախաձեռնությամբ, իրերի դրությունը փրկելու, վերահաս Մեծ Աղետից խուսափելու նպատակով, իրագործված հակահեղափոխության արդյունքում այլևս սովետական չէր:

3. Երրորդ պետություն ասելով, հեղինակը նկատի ունի Սովետական Հայաստանը, որի մասնակցությունը կոնֆերանսիի՝ Թուրքիայի պահանջով, ՄԵՐԺՎԵՑ դեռ հունվարի վերջին, ի դեպ, 1920-ի աշնանը մերժվել էր նաև կոնֆերանսը նախապատրաստող ՌՍՖՍՌ-ի Թուրքիա բանակցություններին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը, չնայած նրան, որ բանակցության հիմնական թեման վերաբերում էր Հայաստանին ու հայությանը:

4. Նկատի ունի Կարսի, Արդահանի, Սուրմալուի, նաև Նախիջևանի ու Զանգեզուրի տարածքները: Նախիջևանը Զանգեզուրի հետ միասին Գարեգին Նժդեհի և Զանգեզուրի բնակչության ջանքերով փրկվեց Թուրքիային բռնակցվելու վտանգից, սակայն, ինչպես հայտնի է, չփրկվեց Հայաստանից բռնանջատվելու և, ըստ թուրքական կողմի առաջարկի նոր տարբերակի, Ադրբեջանին բռնակցվելու ճակատագրից:

5. Նկատի ունի միայն Հայաստանին ու հայությանը, քանզի՝ ինչպես նախատեսված էր կոնֆերանսից դեռ 1-2 տարի առաջ՝ նախապարաստական քննարկումների ժամանակ և դրանց արդյունքը ամրագրող «1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական» կոչվող (ներկայումս գործող) պայմանագրով միակ երկիրն ու ժողովուրդը, որը տվյալ գործարքով դրվեց համաշխարհային հեղափոխության ՁՈՌԱՍԵՂԱՆԻՆ, դա Հայաստանն է ու հայ ժողովուրդը, քանզի հենց միայն Հայաստանն էր ու հայությունը, որ այդ գործարքի արդյունքում «***զոհաբերեց ոչ միայն իր տերիտորիաները, այլև նույնիսկ իր ցեղակիցների խմբերին***»: Ի դեպ, այդ պայմանագիրը Գորբաչովի կողմից 1991թ. մարտի 12-ին երկարածգվեց ևս 20 տարով՝ մինչև 2011թ.:

6. Ինչպես տեսանք, նույն ձեռագրով, Ռուսաստանը վերջերս կրկին «զոհաբերեց» Ուկրաինային: Կարծում ենք՝ կարիք չկա բացատրել, թե հիմա հանուն ինչ ապագայի է Ուկրաինան զոհաբերվում:

7. «Թուրքիայի և Հայաստանի միջև վերացվեն բոլոր **թյուրիմացությունները** և **հաստատվեն բարեկամական հարաբերություններ**». կատարյալ ցինիզմի այս խնդիրն, ի դեպ, մեր օրերում, հիմա էլ, որպես Եվրամիության քաղաքականություն, կրկին կյանքի է կոչվել. սկսել էին իրագործել ԽՍՀՄ-ի ինքնափլուզման՝ «Պերեստոյկայի» դեռ առաջին օրերից, զորօրինակ՝ Վարդգես Պետրոսյանի «13 դատարկ աթոռներ» կամ «Կրակե շապիկ» վերտառությամբ գիրքը, որը Կրեմլի պատվերով գրվեց 1986-ին: Հիշենք նաև 1990-ից իշխանության եկած ՀՀՇ-ի արտաքին քաղաքական գաղափարախոսությունն առ այն, որ մեր ՀԱՑԻ ու ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ ճանապարհը, ոչ այլ ոք, քան բարեկամ Թուրքիան է, որն այլևս այն չէ, ինչ էր 1915-23թթ.:

8. Հեղինակը նկատի ունի միջազգային քաղաքականությունում մոտ հարյուր տարի արծարծվող «Հայկական Հարց» վերտառությամբ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության խնդիրները:

9. Զուգահեռներ տանենք եվրոամերիկյան ներկայիս քաղաքականության հետ, ըստ որի, խնդիր է դրվել առաջիկայում, երբ Իրանի հյուսիսային մասը կանջատվի, զուգահեռաբար կանջատվի նաև Իրաքի հյուսիսային մասը, որի նախապատրաստական աշխատանքներն արդեն իսկ ավարտված են, ու կստեղծվի Քուրդիստան կոչվող երկիր՝ իր մեջ ներառելով Արևմտյան Հայաստանի արևելյան մասը:

10. Նկատի ունի 1919-ի բանակցությունները:

11. Ինչպես ժամանակին՝ 1918-20թթ., անկախ, իսկ 1920 դեկտեմբերից մինչև 1921թ. հուլիսի սկիզբը, ըստ Սովետական Ադրբեջանի վկայության, Հայաստանի անբաժանելի մաս կազմող Արցախի ազատագրումը, անգամ ՀՀ-ին չմիացած՝ Ազատ և Անկախ լինելը, պարզվեց, որ այսօր էլ կրկին տրամագծորեն հակառակ է ու կրկին և լրջորեն խանգարում է միջազգային նույն ծրագրին՝ դրա նորովի իրագործմանը:

12. Ուշադրություն դարձնենք նրան, որ հենց «1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական» պայմանագրով էր, որ հայկական այդ մարզերը տրվեցին Թուրքիային, իսկ այն օրինական ՈՒԺ ստացավ 1921թ. հոկտեմբերի 13-ին ՀԽՍՀ-ի նույն՝ Կարսի պայմանագիրը ստիպողաբար կնքելուց հետո միայն: Միջազգային պրակտիկայում աղաղակող այս տարբերակից հրաժարվելու համար էր, որ Եվրամիության հարկադրանքով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2001-2005թթ. բոլոր տարբերակներում՝ հոդված 6-ով, Հայաստանի Հանրապետության ՀԱՄԱՐ միջազգային պայմանագիր կարող են առանց ՀՀ-ի մասնակցության կնքել ցանկացած երկու և ավելի երկրներ, որն ուժի մեջ կմտնի ՀՀ նախագահի հաստատումից կամ ՀՀ Ազգային Ժողովի վավերացումից հետո:

13. Հեղինակը նկատի ունի ՀՀ վտարանդի կառավարությունը, որը, համաձայն 1920թ. նոյեմբերի 29-ին ՀՀ-ի և ՌՍՖՍՌ-ի միջև կնքած պայմանագրի, լքել էր Հայաստանը և մինչև 1922-ի աշունը գտնվում էր Պարսկաստանում: Թուրքիան, նաև բոլշևիկյան Ռուսաստանը անհանգստանում էին նրանից, որ վտարանդի կառավարությանը կարող էր հաջողվել ազատագրել Արևմտյան Հայաստանը՝ առաջնահերթորեն Կարսն ու Արդահանը, քանզի նրանք տեղյակ էին, որ հայությունը՝ Արևմտյան Հայաստանը ազատագրելու խնդրով, փորձում էր հենց Պարսկաստանում վերամիավորել իր զինյալ ուժերը: Ի դեպ, խնդիրն այդ տարվեց ՌՍՖՍՌ-ի ջանքերով, քանզի 1921-ին՝ Ռուս-թուրքական պայմանագիրը Թուրքիայի կողմից վավերացնելուց 6 օր հետո, նոտայով դիմեց Պարսկաստանին հայկական ուժերը այնտեղից դուրս հանելու հարցով: Այնուհետև մինչև 1922թ. դեկտեմբեր, նոտաների հեղեղ տեղաց, և միայն համաձայն 1921թ. փետրվարի 26-ի Ռուս-պարսկական պայմանագրի 5-րդ կետի, Պարսկաստան զորքեր մտցնելու ՌՍՖՍՌ-ի նոտայից հետո, Պարսկաստանը խնդրեց հայերին հեռանալ երկրից (պատմաքաղաքական մանրամասները տես՝ Սիմոն Շահազիզյանի, «Ժամն է անկախ քաղաքականության ճանապարհով քայլելու» հոդվածում, ՈՒՐԲԱԹ շաբաթաթեթ, 26 ապրիլի և 3 մայիսի 1991թ., Երևան):

14. Այստեղ ուշադրության է արժանի երկու հանգամանք. առաջին, որ բոլշևիկյան Ռուսաստանն է որոշում Կարսն ու Արդահանը զիջել Թուրքիային, և երկրորդ՝ ՁԻՋՈՒՄՆԵՐ հասկացությունը, որն այսօր՝ շուրջ 11 տարի է հնչեցնում են, թե Եվրաքաղաքական ղեկավարությունը և թե ՀՀ իշխանությունները, որպես ազատագրված Արցախի կարգավիճակի լուծման միջոց:

15. Ժամանակի առումով, հայտնի է, որ այն տրված էր 20

տարով, սակայն առ այսօր ժամկետը ԽՍՀՄ-ի կողմից պարբերաբար երկարաձգվել է կրկին 20-ական տարով. չնայած նրան, որ եթե ոչ 1950-ականներին, ապա առնվազն 1991-ին և հենց Գորբաչովին էր քաջ հայտնի, որ համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունն այլևս չի հաղթելու:

16. Կարելի է կարծել, թե 1980-90-ականներին, կամ էլ հենց միայն 1918-20թթ., դեռևս 1915-ից ընթացքի մեջ գտնվող հայերի ցեղասպանությունը Թուրքիան իրագործում էր հենց միայն դաշնակցության պատճառով իմպերիալիստական Հայաստանի Հանրապետությանը սոցիալիստական դարձնելու համար: Չմոռանանք, որ Քեմալ Աթաթուրքի Նոր Թուրքիան շարունակեց Հայերի ցեղասպանության պետական քաղաքականությունը մինչև 1923թ.:

17. Այն ժամանակ զինաթափման հարցն արդեն ավելորդ էր, քանզի նախկին ՀՀ-ն զինաթափված էր՝ համաձայն ՌՍՖՍՌ - ՀՀ պայմանագրի, և 1920թ. նոյեմբերի 29-ից Սովետական Հայաստանը իբր պաշտպանվելու էր Կարմիր բանակի կողմից, որն ինչպես հայտնի է, իր խնդիրն, ըստ էության, այդպես էլ չկատարեց մինչև 1922թ.:

18. Սա հեղինակի միակ ճիշտ պնդումն է, այն էլ սակայն օգտագործում է միայն իր հաջորդ՝ մեծ խաբեություն հանդիսացող սուտ պնդումը իբր հավաստի ու վստահելի դարձնելու համար:

19. Հիմա էլ նույն քաղաքականությունը ասում է. «**Չկա Սովետական Միությունը**»:

20. Ըստ էության, նույնն է ասում և մեզ փորձում համոզել Եվրամիության և ԱՄՆ-ի քաղաքական ղեկավարությունը, ասել, թե իբր 2006-ին բացառիկ հնարավորություններ են ստեղծվել «Ղարաբաղյան կոնֆլիկտը» լուծելու համար, քանի որ 2006–07թթ. Հայաստանում և Ադրբեջանում նախագահական և պառլամենտական ընտրություններ չկան: Կարելի է կարծել, թե 1991-ից Հայաստանում և Ադրբեջանում ամեն տարի ընտրություններ էին, որոնք էլ խանգարում էին «կոնֆլիկտի» եվրակարգավորմանը: Ճշմատությունը նույնն է Սկաչկով-Տրոցկի ձեռագրով, կրկին նույն՝ որպես պարտադրող՝ գաղափարախոսական-առաջնորդող տարբերակով, ասված է օրեր առաջ «Ռեգնիում» ինտերնետ կայքում դրված Մամեդ Առաքելով կեղծանունով «Անդրկովկասյան ֆեդերացիայի երրորդ փորձը» վերնագրով հոդվածում, ուր բառացիորեն ասված է՝ “Между тем формарования Закавказской или, как принято сейчас говорить, Южнокавказской федерации или конфедерации продолжает литать в воздухе и даже обретать некие зримые очертания. кроме очень медленно, но все же набирающей обороты Южнокавказской парламентской инициативы, в конце 2005 года произошли события, которые некоторые наблюдатели склонны увязывать именно с перспективой создания такого гособразования. Речь идет о состоявшемся 29 ноября 2005 в Армении референдуме по конституционным поправкам, который очень активно лоббировался европейскими структурами.”:

21. Հարկ է լուրջ ուշադրություն դարձնել այստեղ նրան, որ այն ժամանակ խնդիր չէր դրված այդ անդրֆեդերացիան ստեղծել միայն Հայաստան, Վրաստան և Ադրբեջան երկրներով: Այն ժամանակ, ինչպես և հիմա, այդ նորաստեղծ երկրում իր կարևոր դերը պետք է ունենար նաև Թուրքիան: Մի բան, որն այսօր, շուրջ 14 տարի է ինչ՝ սկսած 1992-ից, այդուհանդերձ աստիճանական համբերությամբ, քայլ առ քայլ կառուցում է Եվրամիությունը. դեռևս բավարարվելով այսպես կոչված «Սևծովյան երկրների համագործակցությունով», ուր խնդիր է դրվել ապագա այդ նորաստեղծ երկրում, որը դեռ 1903-08թթ. աշխարհատիրակալական արևմուտքն անվանում էր «Եվրասիական Միացյալ Նահանգներ», քանզի այն պետք է ներառեր ոչ միայն ամբողջ Կովկասի տարածքը, այլև Բալկանյան թերակղզու երկրների, Քիրքուկ - Մոսուլի և Պարսկաստանի հյուսիսային տարածքներով, Ղրիմի և Օդեսայի, նաև Աֆղանստանի տարածքները: Ի դեպ, հիշեցման կարգով նշենք ներկայիս «Սևծովյան համագործակցության» երկրների ցանկը. 1.Ալբանիա, 2.Հայաստան, 3.Ադրբեջան, 4.Բուլղարիա, 5.Վրաստան, 6.Մոլդովա, 7.Ռումինիա, 8.Ռուսաստան, 10.Սերբիա և Մոնտենեգրո, 11.Թուրքիա, 12.Ուկրաինա: Կարծում ենք՝ ակնհայտ է, որ 1920-ականների քաղաքականությունը ոչ միայն չի փոխվել, այլև շատ ավելի նեգատիվ զարգացում է ապրել: Պարզ է, անթաքույց է, ուստի և հեշտ է պատկերացնել Կովկասյան ընդհանուր պետություն ասվածը ստեղծելու խնդիրը, որպես նախկին անվանումով Եվրասիական Միացյալ Նահանգներ, ինչպիսի հեռանկարներ է ներառում:

22. Ասել է թե, Թուրքիայի կողմից դեռևս իրագործվող ցեղասպանությունը, ըստ Տրոցկու, ռուսական բոլշևիզմի, դա ընդամենը հայերի դեմ պայքարել է, իսկ Հայաստանը Թուրքիայի, որ Ադրբեջանի հետ միավորել մեկ ընդհանուր ֆեդերացիայի մեջ, հայությունը, երբ թուրքերը դադարեցնեն ցեղասպանությունը, թուրքերի հետ ձեռք-ձեռքի և մեծ ոգևորությամբ պետք է պայքարի համաշխարհային իմպերիալիզմի դեմ: Հարց է, թե հիմա, այս նոր ֆեդերացիայում, հայությունը թուրքերի, ադրբեջանցիների ու վրացիների հետ ո՞ւմ դեմ պետք է պայքարի՝ իբր հանուն ժողովրդավարության ու մարդու իրավունքների: Հարց, որի պատասխանը, ի տարբերություն Տրոցկու հոդվածի, դեռևս տրված չէ Մամեդ Առաքելով կեղծանվան տակ թաքնված հեղինակի հոդվածում:

Հ. Գ. - Տրոցկու սույն հոդվածը լույս է տեսել «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթում՝ Ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատի պարբերականում, 4 մարտի, 1921թ., Մոսկվա:

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՁԵՌՔՈ՞ՒՄ

ԱՄՆ պետքարտուղարության դիվանագիտական հաղորդագրությունների մի քանի հարյուր էջ փաստաթղթեր, այդ թվում՝ «գաղտնի» մեկնաբանությամբ, հայտնվել են ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի ձեռքում: Հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանի խոսքերի մեջբերմամբ, «Ռեգնում» գործակալությունը տեղեկացնում է, որ այդ փաստաթղթերը վերաբերում են Օսմանյան Թուրքիայում Հայերի ցեղասպանությանը, ընդ որում, ըստ այդ թղթերի, 2000-ին Պետդեպարտամենտն աշխատանք է իրականացրել Հայոց ցեղասպանության բանաձևի ուղղությամբ: Բանաձևը ծրագրվում էր հանձնել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի քվեարկությանը, սակայն վերջին պահին արդեն էքս նախագահ Բիլ Քլինթոնի ցուցումով փաստաթուղթը հետ է կանչվել պատճառաբանությամբ, թե «կարող է Միացյալ Նահանգների համար ունենալ հնարավոր բացասական հետևանքներ»:

Փաստաթղթերի մի մասը, նույն աղբյուրի համաձայն, վերաբերում է Պետքարտուղարության և Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի կապերին: «Փաստաթղթերը վկայում են, որ 2000թ. աշնանը Պետքարտուղարության չինովնիկները գիտեին թուրքական սպառնալիքի անհիմն լինելու մասին: Չնայած դրան, նրանք մոլորության մեջ էին գցել Կոնգրեսին և ամերիկյան հասարակությանը, պնդելով, որ Հայերի ցեղասպանության բանաձևի ընդունումը կարող է լուրջ վնաս հասցնել ամերիկա-թուրքական հարաբերություններին»,- հայտարարել է Արամ Համբարձումյանը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Թուրքիան երկար ժամանակ է համառորեն ցանկանում է ինտեգրվել Եվրամիությանը: Վերջապես 2005թ. հոկտեմբերին Լյուքսեմբուրգում ընդունվեց մի որոշում, որով նախատեսվում է բանակցություններ սկսել Թուրքիայի Հանրապետության հետ: Այդ բանակցությունների վերջնարդյունքը, կարծես թե, պետք է լինի Թուրքիայի լիիրավ անդամակցությունը Եվրամիությանը: Սակայն, նախևառաջ, մեծ ուշադրություն պետք է հատկացվի այն հիմնական կետերին, որոնք ընկած են այն փաստաթղթի հիմքում, որին իրենց համաձայնությունն են տվել և՛ Եվրամիությունը, և՛ Թուրքիան: Այս խնդիրներն են՝ կիպրական, քրդական, Հայերի ցեղասպանության հետ կապված խնդիրները, երկրի ներսում ժողովրդավարության, խոսքի ազատության, մարդու իրավունքների ոտնահարման, անչափահաս երեխաների աշխատուժի օգտագործման հետ կապված որոշ խնդիրներ և այլն:

Կիպրական խնդիրն արդեն ավելի քան երեք տասնամյակի պատմություն ունի: Այն սկիզբ է առնում 1974թ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Կիպրոս և զավթեցին կղզու զգալի հատվածը՝ այնտեղ հիմնելով աշխարհի կողմից չճանաչված մի նոր պետական միավորում՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն: Կիպրական կնճռոտ այս խնդիրը Թուրքիայի ամենամեծ գլխացավանքներից մեկն է: Առավել ևս, որ Կիպրոսին աջակցում է Հունաստանը: Այս երկու պետություններն արդեն իսկ Եվրամիության անդամ են և ի դեմս այս երկու ախոյանների՝ Թուրքիան արդեն իսկ ունի լուրջ խոչընդոտներ:

Թուրք ցուցարարների պաստառին գրված է. «Հայկական հարցը միջազգային մի սուտ է»:

Քրդական գործոնն էլ լուրջ խնդիրներ է հարուցում Թուրքիայի առջև: Քրդերն ամենամեծ փոքրամասնությունն են կազմում այստեղ և Թուրքիային խստորեն անհանգստացնում է երբեմն-երբեմն արծարծվող (թեկուզ ոչ ամենաբարձր մակարդակներում և ոչ շատ բարձրաձայն) քրդական անկախ պետության ստեղծման տեսլականը:

Կնճռոտ հարց է Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված խնդիրը: Գնալով ավելի ու ավելի շատ երկրներ են ընդունում, ճանաչում և դատապարտում Օսմանյան կայսրության կողմից նախորդ դարասկզբին իրականացված Հայերի ցեղասպանությունը: Դրանցից ոմանք Եվրամիության անդամներ են՝ Ֆրանսիա, Հունաստան, Բելգիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա, Ռումինիա, Շվեդիա, Գերմանիա: Քանի որ Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է ցեղասպանություն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդը, նա պատասխանատու է նաև դրա համար: Նորանոր երկրների կողմից ցեղասպանության ճանաչման և դատապարտման հանգամանքն էլ ավելի բարդ խնդիրներ է առաջացնում Թուրքիայի կառավարության համար: Նրանք փորձում են հակազդել տնտեսական, ռազմավարական և այլ գործոններով՝ շահարկելով այս կամ այն հանգամանքը: Թվում էր՝ ուր որ է Միացյալ Նահանգներն էլ կճանաչի Հայոց ցեղասպանությունը, բայց առայժմ, արհեստականորեն, առաջին պլան են մղվում միջպետական հարաբերություններն ու երկրի շահերը: Կարևոր հանգամանք է նաև թուրք-հայկական դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, պաշտոնապես շարունակվող տնտեսական շրջափակումը:

Այս ամենից բացի Թուրքիան լուրջ շտկումների կարիք ունի այլ բնագավառներում ևս: Խոսքը վերաբերում է երկրի ներքին կյանքին: Այստեղ լայնորեն օգտագործվում են անչափահաս երեխաների աշխատուժը, որոնց թիվը, ըստ որոշ մասնագետների, անցնում է մեկ միլիոնից:

Թուրքական բանտերում առկա ծանր վիճակի բարելավումը ևս բխում է Թուրքիայի շահերից Եվրամիությանն անդամագրվելու ճանապարհին: Կարևոր գործոն է նաև կանանց սոցիալական դերի բարձրացման անհրաժեշտությունը:

Երկրում կա ժողովրդավարության խնդիր ևս: Բնականաբար, ազատ մամուլի բացակայության հանգամանքը ևս մեծ հարված է Թուրքիային այս փորձության ճանապարհին: Միայն վերջին ժամանակահատվածում դատական հայցեր են ներկայացվել ավելի քան քսան լրագրողների նկատմամբ՝ էրքան Աքայ, Ազիզ Օզեր, Օրհան Փամուք, Հրանտ Դինք և շատ ուրիշներ: Սա լուրջ մտորումների տեղիք է տալիս, քանի որ պարզ է դառնում, որ երկրում ազատ մամուլի գոյության մասին խոսելն իսկ ավելորդ է:

Բացի այդ, եթե մի պահ մոռանանք Թուրքիայի եվրոպական մասը և ծովեզրը, Թուրքիան բավականին աղքատ երկիր է: Այդ աղքատությունը հատկապես աչքի է ընկնում երկրի արևելքում, որտեղ ապրում է քուրդ ազգաբնակչությունը: Միաժամանակ, եվրոպական երկրների կառավարությունները հասկանում են, որ անդամակցության դեպքում իրենց երկրները կողողվեն էժան աշխատուժով: Առանց այդ էլ թուրքերը զգալի թիվ են կազմում Եվրոպայում: Նրանց ամենամեծ զանգվածը բնակություն է հաստատել Եվրամիության հյուսիսային մեկի՝ Գերմանիայի Դաշնության տարածքում: Տարբեր հաշվարկներով նրանց թիվը այստեղ տատանվում է 3,5-ից 6 միլիոնի սահմաններում: Ընդհանրապես, էմիգրանտների և փախստականների «ջանքերով» տարեկան Գերմանիայից տեղի է ունենում ավելի քան 5 միլիարդ ԱՄՆ դոլարի արտահոսք: Եվ եթե հաշվի առնենք թուրքերի մեծաթիվությունն այստեղ, ապա պարզ կդառնա, թե այդ գումարները հիմնականում, որ երկրներում են «հանգրվանում»: Հետաքրքիրն այն է, որ եվրոպական երկրներից կապիտալի ամենամեծ արտահոսքը հենց Գերմանիայից է:

Գերմանիայի հետ կապված պետք է մի կարևոր հանգամանք ևս հաշվի առնել. այստեղ բնակություն հաստատած թուրքերի բնական աճը ևս շատ բարձր է գերմանական «չափանիշներից»: Այն առնվազն չորս անգամ գերազանցում է գերմանական ընտանիքներում ծնվող երեխաների միջին թվին:

Պետք է նշել նաև, որ Թուրքիան բնակչության թվով (70 միլիոն) Եվրամիությունում կզիջի միայն ավելի քան 82 միլիոն բնակչություն ունեցող Գերմանիային: Սակայն հաշվի առնելով երկու երկրներում բնակչության աճի տեմպերը, կարելի է ենթադրել, որ սարերի հետևում չէ այն

օրը, երբ Թուրքիան իր բնակչության թվով կգերազանցի Գերմանիային (իսկ եթե պայմանականորեն Գերմանիայի բնակչության թվից հանենք մինչև 6 միլիոն գերմանաբնակ թուրքերին...): Բացի էժան աշխատուժից, խնդիրներ կհարուցեն նաև էժան, թող որ ոչ շատ որակյալ ապրանքները: Այսինքն՝ տնտեսական գործոնը, ամենայն հավանականությամբ, այստեղ խաղալու է ոչ վերջին դերը:

Պետք է հաշվի առնել նաև, որ Թուրքիայի անդամակցության դեպքում կարող են տատանվել Ֆրանսիայի ու Գերմանիայի այսօրվա ամուր դիրքերն այս միության շրջանակներում: Թուրքիան կարող է դիտվել որպես լուրջ հակառակորդ՝ հաշվի առնելով նաև Միացյալ Նահանգների աջակցությունն ու պատրաստակամությունը՝ շատ ու շատ հարցերում զորավիգ լինելու Թուրքիային: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Միացյալ Նահանգները մեծ տեղ է հատկացնում Թուրքիային՝ իր հետագա ռազմավարական մտահղացումներն իրագործելու համար, պարզ կդառնա, որ Թուրքիան այնքան էլ հարմար անդամ կամ, առավել ևս, «դաշնակից» չէ մեկ միության շրջանակներում երկու հսկաների համար:

Թուրքիայի վերնախավում անդամակցության վերաբերյալ տարաձայնություններ կան վճռորոշ խոսքը մշտապես ասող բանակում, քանի որ կա մտավախություն, որ անդամակցության դեպքում ստիպված կլինեն որոշակիորեն նվազեցնել զորքերի քանակը և դերը երկրի քաղաքականության ձևավորման ու իրականացման մեջ: Կա մտավախություն նույնիսկ, որ կարող է արգելվել քրդերի նկատմամբ ժամանակ առ ժամանակ իրականացվող «զսպող ուժի» գործադրումը:

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԹՌՉՆԻ ԳՐԻՊԸ

Հայտնի ասացվածքն ասում է. «Կարկուտը ծեծած տեղն է ծեծում»: Այս խոսքերն առավել քան տեղին են Թուրքիայի, իսկ ավելի ճիշտ՝ տասնամյակներ շարունակ հետամնաց և համարյա թե նախնադարյան կենսակերպ վարող արևելյան՝ հիմնականում քրդաբնակ վիլայեթների դեպքում:

Ի՞նչ կորուստներ կրեց Թուրքիան տարեսկզբին գրանցված թռչնի գրիպի համաճարակի տարածման արդյունքում և ի՞նչ հետևանքներ այն կարող է ունենալ ապագայում:

Առաջին հերթին, իհարկե, լրջորեն խաթարվեց Թուրքիայի միջազգային հեղինակությունը: Համաշխարհային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում «վարակված» կերպարով ներկայանալը լուրջ հարված էր թուրքական պետության միջազգային հեղինակությանը: Իսկ որ այն ուղղակիորեն ներազդելու է նաև Թուրքիայի եվրոպական քաղաքականության, ավելի ճիշտ՝ միացյալ Եվրոպայի «թուրքական» քաղաքականության վրա, կասկածի որևէ տեղիք չի թողնում: Թուրքիայի բացասական կերպարը հատուկ կերպով շեշտվեց հենց եվրոպական լրատվամիջոցների կողմից, հընթացս անելով շատ ճիշտ հարցադրում. ինչպե՞ս կարելի է մտնել Եվրոպական Միություն՝ նման պայմաններ ունենալով սեփական

երկրում: Այսպիսով, կարող ենք փաստել, որ այս խնդիրը Թուրքիայի համար դեռ երկար ժամանակ արարծվելու է:

Թռչնի գրիպի հետևանքները աղետալի են լինելու նաև տնտեսական ու քաղաքական առումներով, որոնք կարող են դրսևորվել ավելի ուժգին կեր, քան՝ 1999թ. օգոստոսյան երկրաշարժից հետո: Սա հասկանալի է, քանզի այս հիվանդության առաջին զոհը դարձավ բնակչության այն չքավոր զանգվածը, որի սննդի հիմնական աղբյուրը հանդիսանում է հենց թռչնամիսը, որը փաստորեն վերացավ նրանց կերակրացանկից՝ այն էլ ձմեռվա կեսին: Ինչպես երկրաշարժի ժամանակ, այս անգամ էլ բնակչության շրջանում բողոքի լայն ալիք տարածվեց իշխանությունների անգործության կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ անկարողության դեմ: Սա որակական նոր դրսևորում է թուրքական բնակչության շրջանում, քանզի նախկինում պետության, կամ ինչպես թուրքերն են ասում, «դեվլեթ-բաբայի» հեղինակության վերանայումն ու վերարժեքավորումը լուրջ քաղաքական հետևանքներ կարող է ունենալ:

Պետք է նշել նաև, որ եթե ձմեռային պայմաններում հայտնի վարակը կարող է կենսադադարի (անաբիոզ) վիճակում հայտնվել և դրանով հանդերձ մեղմացնել հիվանդության տարածումը, սակայն թուրքական զբոսաշրջիկության վրա հիվանդության և նրա շուրջ ստեղծված քարոզչական-տեղեկատվական հոսքերը կաթվածահար կարող են անել թուրքական գանձարանը միլիարդավոր դոլարներ ապահովող տնտեսության այս ոլորտը: Զբոսաշրջիկների հոսքը դեպի Թուրքիա կարող է կրճատվել երեք անգամ: Սա կարող է թուրքական տնտեսության նոր ու երկարատև ճգնաժամի պատճառ լինել նույն սցենարով, ինչ՝ 1999-2001թթ.:

Նշենք, որ այս ընթացքում թուրքական կողմը փորձեց իբրև թռչնի գրիպի տարածման աղբյուր մատնացույց անել նաև Հայաստանի Հանրապետությանը, ակնհայտորեն քաղաքական և հեռուն գնացող նպատակներով:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԹԵՀՐԱՆԸ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է ԻՐԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԱՄՈՒՂԻ ԵՐԿՐՈՐԴ ՃՅՈՒՂԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Թեհրանը շահագրգռված է Իրան - Հայաստանի գազամուղի շինարարությունն արագորեն ավարտելու հարցում, ինչպես նաև պաշտպանում է այդ գազամուղի երկրորդ ճյուղի կառուցման նախագիծը,- հայտարարել է Իրանի էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Դավուդ Դանեշա Զաֆարին Թեհրանում բացված հայ - իրանական միջկառավարական հանձնախմբի վեցերորդ նիստի ընթացքում:

Նախարարն ասել է, որ Իրանը պատրաստ է կատարել տարբեր բնագավառներում Հայաստանի հետ համագործակցության վերաբերյալ ավելի վաղ ստորագրված բոլոր համաձայնագրերը: Զաֆարին նշել է, որ իրանական ընկերությունները կմասնակցեն գազով աշխատող ջերմաէլեկտրակայանի, էլեկտրահաղորդման գծերի և Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի մատակարարումների համար էլեկտրական ենթակայանի շինարարությանը:

ԲԱՔՎԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1905Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 6-9-Ը

1905թ. Բաքվի փետրվարյան դեպքերով սկսվեցին հայ-թաթարական ընդհարումներն Այսրկովկասում: Բաքվի անզեն հայությունը դատապարտված էր կործանման, եթե հայ մարտիկներն արագ չկազմակերպեին Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը:

Հայերի համար թուրքերի հարձակումն անսպասելի էր: Հայկական ուժերը ցրված էին քաղաքին հարող շրջաններում, իսկ զենքի թաքստոցը թուրքական թաղում էր: Այսպիսով, մեծ ջանքեր էին պետք ուժերը կենտրոնացնելու և զենքը տեղափոխելու համար: Ոստիկանությունը փակել էր փողոցները, խոչընդոտում էր մարտիկների անցումը դեպի քաղաք, զինաթափում նրանց: Մեկ ու կես օր սպասելուց հետո, համոզվելով, որ թաթարները մտադիր չեն դադարեցնելու արյունոտ սպանդը, հայ մարտիկները որոշեցին բեմ նետվել եղած փոքրաթիվ զենքերով ու փամփուշտներով:

Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) Բալախանիի նավթահանքերից անմիջապես անցավ Բաքու և կազմակերպեց ինքնապաշտպանությունը: Նա մտավորական մարտիկ էր՝ օժտված մեծ վճռականությամբ, կամքի ուժով, բնական խելքով: Դումանը հայ մարտնչող երիտասարդության իդեալն էր: Այնտեղ էին Մարտիրոս Չարուխչյանը, Մկրտիչ Աղամալյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Հմայակ Ջանփոլադյանը և ուրիշներ:

Պայքարն անհավասար էր. թաթարներին օգնում էին ռուս կոզակները:

Մելիքյանի լուսանկարչատան սենյակը վերածվեց զինանոցի: Ն. Դումանը կտրուկ ու վճռական հրահանգներ տվեց. «Ովքեր զենք ունեն անմիջապես ելնեն փողոց, դիրքավորվեն փողոցի անկյուններում և խփեն՝ առանց վարանելու ամեն հանդիպած զինված թուրքի, աստիճանաբար պետք է լայնացնել շրջանակը, որպեսզի քաղաքի տարբեր մասերը չկտրվեն իրարից, և մենք կարողանանք անվտանգ անցուդարձ անել»: Թաթարները իրենց ձեռքն էին վերցրել Շեմախինկա, Հայոց և Վարանցովկա փողոցները, Պարապետի որոշ մասը մինչև ծովափ, Սև քաղաքի կողմից մինչև Տելեֆոննայա փողոցը: Նրանք գալիս էին դեպի կենտրոն՝ Մալականսկայա և Տորգովայա փողոցները, որպեսզի կտրեն հայկական կենտրոնները իրարից՝ ճանապարհին կոտորելով հանդիպած հայերին: Եթե մի փոքր դանդաղեր հայ խմբերի մուտքը կռվի թատերաբեմ, թաթարները կգրավեին կենտրոնը և Բաքվի հայությունն ամբողջությամբ հրոսակների զոհ կդառնար:

7-8 հոգի հայ մարտիկներ դիմադրեցին թվով 12-15 հոգի զինված թաթարական խմբին, ջարդեցին նրանց, մաքրեցին բոլոր դիմադրական օղակները, լայնացրեցին կենտրոնի շրջագիծը, և հայկական թաղամասերի մեծ մասը կապվեցին իրար: Այս մարտական գործողությունը հնարավորություն ստեղծեց հայերին գրեթե անվտանգ անցնել կայարանից մինչև հայոց եկեղեցու հրապարակը՝ Պարապետը, իսկ տներում թաքնվածները կարողացան շարժվել կենտրոն ու միանալ կռվողներին՝ իրենց հետ բերելով նաև իրենց ունեցած զենքերը: Դժբախտաբար, Բաքվի հայությունը մեծամասամբ անզեն էր:

Մի պահ Ն. Դումանը նկատեց, որ Կոլյուբիակինսկայա փողոցում թաթարները թալանում են հայերի խանութները զորքի անտարբեր ներկայությամբ: Նա անմիջապես դուրս եկավ փողոց, դիրքավորվեց մոտ 150-200 քայլ հեռավորության վրա, չոքեց և սկսեց կրակել թալանչիների վրա, որոնք մեկը մյուսի ետևից վայր ընկան Նիկոլի արձակած դիպուկ գնդակներից: Հայ երիտասարդները այդ տեսարանից առյուծ կտրեցին. նույնպես դուրս եկան փողոց, և մի քանի րոպեից ամբողջ փողոցը մաքրված էր, և ամենուրեք թափված էին թաթար թալանչիների դիակները: Այդժամ ռուսական զորքը կրակ բացեց կռվող հայերի վրա: Երբ հայերը համոզվեցին, որ թաթարներին օգնում են ռուս զինվորները, նոր տակտիկայի մշակման անհրաժեշտություն առաջացավ: Պարզ էր, որ եղած զենքն արդեն բավարար չէր, իսկ կռվի պատրաստ հայերի թիվը ժամ առ ժամ ավելանում էր: Չորս երիտասարդներ գիշերով աննկատ մտան թուրքական թաղ, որտեղ գտնվում էր Դաշնակցության զենքերի պահեստը և տեղափոխեցին 10-12 հրացաններ, այնուհետև ռուսական բանակի մի քանի հայ զինվորներ անցան հայոց ինքնապաշտպանական ջոկատի շարքերը՝ իրենց հետ բերելով զենք ու փամփուշտներ պետական զորանոցից: Ծովափի և հայոց եկեղեցու միջև, Վելիկոկնյաժեսկայա փողոցում գտնվում էր Պետրոսյանի՝ կառավարության կողմից թույլատրված զինախանութը: Անհրաժեշտ էր փողոցը ազատել թաթարներից և վերցնել խանութի զենքերը: Այս առաջադրանքը նույնպես իրագործվեց մի գիշերվա ընթացքում, մի քանի խիզախ մարտիկների կողմից: Հրահանգ էր տրված մարտիկներին, դիմադրե՛լ, եթե ոստիկանները փորձեն խուզարկել և խլել իրենց զենքերը: Հայերի այդ պահվածքը վախեցրեց նաև ոստիկաններին, որոնք այլևս չէին համարձակվում զինաթափել հայերին:

Հայկական խմբերը ավելի ազատ էին գործում գիշերը, իրար ճանաչելու համար նշանախոս արձակվեց՝ «կռիվ» բառը, որի շնորհիվ դիրքերի պահապանները տարբերակում էին յուրայիններին:

Երրորդ օրն արդեն հնարավոր դարձավ մտածել թաթարական թաղերում բնակվող անպաշտպան հայերի մասին: Որոշվեց գնալ օգնության. դա նշանակում էր պաշտպանական մարտավարությունից անցնել հարձակողականի: Դումանի գծած շրջագծով հայոց ուժերը սկսեցին հարձակումը: Թուրքերը, տեսնելով մեր մարտիկներին և լսելով նրանց զենքի կրակոցները, սարսափահար փախան: Մոտ 100 հայ դեռ ողջ էր մնացել թաթարական թաղամասերում: Նրանք փրկվեցին և արագ տեղափոխվեցին անվտանգ վայրեր:

Փոքրաթիվ ուժերով հայ մարտիկների մուտքը թատերաբեմ ապշեցուցիչ էր: Հռչակավոր հայդուկապետի ղեկավարությամբ կազմակերպված, հմուտ, փորձված հայ ռազմիկների անվրեպ գնդակները մեկ մյուսի ետևից գետնին էին փռում հակառակորդի դիակները:

Ինքնապաշտպանության հաջորդ օրն արդեն հայկական թաղերը մաքրվել էին թուրքական հրոսակներից: Թուրքերը կենտրոնացել էին Ղուբա և Շեմախինկա թաղերում: ***Ինքնապաշտպանության մեկ օրվա ընթացքում Բաքվի չորս հինգերորդ մասը գտնվում էր հայ պաշտպանների ձեռքին:***

Կռվողներին մեծ օգնություն էին ցուցաբերում ռուս կանայք, հայ կանայք և մանավանդ հայ օրիորդները: Նրանք գնդակների տարափի տակ անցնում էին թշնա-

մու միջով և կարևոր հրահանգներ կատարում՝ տեղափոխում տեղեկություններ, ռազմամթերք, նույնիսկ կռվող ուժեր:

Հայության հակահարվածը պայթող ռումբի ազդեցություն ունեցավ, այն անակնկալ էր թե՛ թաթարների և թե՛ ռուսական իշխանությունների համար:

Ի տարբերություն թալանչի ու բարբարոս թուրքի, որ այդ օրերին կողոպտում էր հայկական խանութները, հրկիզում տները և կոտորում անզեն հայությանը, մեր մարտիկները չափազանց բարձր գտնվեցին և թուրքական խուժանից ազատագրված թաղերում գտնվող թուրքերի խանութներն ու տները մնացին անվնաս: Չորս օրվա ընթացքում հայերը ունեցան 205 սպանված, 121 վիրավոր, իսկ թաթարները՝ 111 սպանված և 128 վիրավոր: Ոչ մի թաթար երեխա կամ կին չէր սպանվել հայ մարտիկների գնդակներից (միայն 2 թաթար կին՝ պատահական գնդակից էին զոհվել): Փոխարենը սպանված հայերի մեծ մասն անզեն ու անպաշտպան կանայք, ծերեր ու երեխաներ էին:

Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը ունեցավ մի շարք հետևանքներ.

Առաջին՝ ապացուցվեց, որ հայերը տիրապետում են մարտավարական փայլուն հմտությունների և կարող են պայքարի ընթացքում ռազմավարական աննախադեպ գիտելիքներ դրսևորել:

Երկրորդ՝ հայության, հատկապես կռվող հատվածի համար, պարզ դարձավ, որ հայոց ազատագրական պայքարի աշխարհագրական շրջանակներն ընդլայնվում են, որ հայն անգամ քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո պետք է միշտ զգոն լինի, պատրաստ՝ զենքով պաշտպանելու ինքն իրեն, իր կյանքն ու պատիվը:

Երրորդ՝ որը թերևս այդ պահի համար ամենակարևորն էր, այն, որ անհրաժեշտ է զինել ու զինական հմտությունների վարժեցնել ողջ հայությանը:

Չնայած Բաքվի դեպքերը անակնկալ էին հայերի համար, այնուամենայնիվ, մեր կողմին հաջողվեց ոչ միայն արժանի հակահարված տալ թշնամուն, այլև, անցնելով հարձակողական մարտավարության, ստիպել հակառակորդին, որպեսզի վերջինս հաշտություն աղերսի մեզանից:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆ ԱՎԵԼԻ ՀՈՒՍԱԼԻ ԽԱՂԱՂԱՐԱՐ Է

ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ներկայացնելով Արցախի բանակում անցյալ տարվա կատարած աշխատանքը, 2005 թվականը Ղարաբաղի բանակի համար համարեց հաջողությունների տարի: Միևնույն ժամանակ նա նշեց, որ ինչպես նախորդ տարիներին, 2005 թվականը ևս լարված տարի է եղել, առանձնապես առաջնային գծում: Այդ լարվածությունը որոշ զորամասերում հակառակորդի կողմից վերածվել է սադրանքների՝ ընդհուպ վերածվելով փոքր մարտական գործողությունների: Պաշտպանության բանակի մարտիկները բոլոր դեպքերում համարժեք պատասխան են տվել հակառակորդին: Որպես նորարարություն՝ Ս. Օհանյանը մատնանշեց ՊԲ-ում մարտական հերթապահության նախապատրաստումը: Նա իր գոհունակությունը հայտնեց այն փաստի առթիվ, որ ռազմական տեսչության կատարած ստուգումներով՝ զորամասերում մարտական պատրաստականության և այլ առումներով լավ գնահատական է տրվել:

Զգալի աշխատանք է տարվել նաև զինծառայողների սոցիալական ու բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ: Մասնավորապես շուրջ 750 մլն դրամ է հատկացվել զինծառայողների համար բնակարաններ ձեռք բերելու նպատակով: Եվս 300 մլն դրամ հատկացվել է զոհված ազատամարտիկների ընտանիքներին բնակարաններով ապահովելուն: Ըստ նախարարի, նշված գումարները ընթացիկ տարում կավելանան՝ կազմելով համապատասխանաբար 1 մլրդ 200 մլն և 600 մլն դրամ:

Ադրբեջանը վերջերս երկու նոր նախարարություններ է ստեղծել՝ ի դեմս ռազմական արդյունաբերության և արտակարգ իրավիճակների գերատեսչությունների: Ս. Օհանյանը հիշեցրեց, որ Ադրբեջանը միշտ էլ սպառնացել է Ղարաբաղի հիմնախնդիրը նաև ռազմական ուղիով լուծել: Հայկական կողմն այսօր ոչնչով չի զիջում Ադրբեջանին, իսկ թե ի՞նչ համարժեք քայլեր են արվում Ադրբեջանի այդ նախաձեռնությունների դեմ՝ նա զերծ մնաց մեկնաբանելուց՝ պատճառաբանելով դրանց պետական գաղտնիությունը:

Իրանի սահմանների անհանգիստ դառնալու հավանականությանը՝ ատոմային էներգիայի ծրագրի առաջացրած միջազգային աղմուկի առնչությամբ, նախարարն ասաց, որ դա անցանկալի կլինի Ղարաբաղի համար, իսկ այդ դեպքում՝ Ադրբեջանի հետ ռազմական շփման փորձը և բանակի իրական ուժը բավարար են լինելու ԼՂՀ-ի անվտանգության ապահովման համար:

ԵԱՀԿ-ի պարբերաբար դիտարկումները ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը դրական գնահատեց ամենից առաջ այն առումով, որ դիտարկումների ընթացքում առաջնագծի տարբեր հատվածներում ստեղծված լարվածությունը թուլանում է:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ՏԵՍԼԱԿԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Փարիզի մերձակա Քլամար քաղաք-թաղամասում նա թերևս միակ հայն է, որ մորուք է պահում: Եթե անգամ սափրվում է՝ առիթից առիթ: Երբ հարցնում են պատճառը, ասում է՝ *«Ղարաբաղի պատերազմից մնացած սովորություն է»*: Ժորժը շարունակում է իր պատերազմը: Յուրովի:

Բարձրահասակ է, վճռական, լավատես թվալու չափ ժպտադեմ: Իր ճակատագիրն ինքն է ընտրել ու համոզված է, որ ճիշտ է ապրում: Ուրեմն, երջանիկ է: Ժորժը՝ երջանի՞կ:

Մորը չի հիշում, չգիտի, երբ են ծնողները բաժանվել, ինչու են իրեն ու քրոջը հոր խնամքին հանձնել: Եթե անգամ գիտեր՝ չասաց: Թեկուզ այն պատճառով, որ իր նկատմամբ կարեկցանք, առավել ևս խղճահարություն չի կարող հանդուրժել: Խորթ մայրն իրեն ու քրոջը չէր ընդունել, հայրը ճարահատ նրանց Բեյրութի հայկական «Մանսուրիե» որբանոցն էր հանձնել: Հետո, իհարկե, զղջացել, ապաշխարել, զավակներին տուն էր տարել, բայց Ժորժը չէր ներել: Ապրել էր փողոցներում, քնել՝ տանիքներում: Հիմա, անցյալը հիշելիս, ժպտում է.

- Շատ շուտով Բեյրութի պատերազմը սկսվեց, ու տան կարիք ընդհանրապես չզգացի: Դեռահաս պատանիներ էինք, բայց զենքերը ուսերիս պաշտպանում էինք հայկական թաղերը: Բոլորս էլ մեր ժողովրդի հանդեպ պարտքի, պատվախնդրության այնպիսի զգացումով էինք համակված, որ օրերով, շաբաթներով դիրքերից չէինք հեռանում, հազվադեպ, իրար փոխարինելով էինք քնելու գնում:

Պատերազմի ավարտից հետո Ժորժը, ինչպես հասակակիցներից շատերը, որոշում է Բեյրութից Փարիզ մեկնել՝ եկամտաբեր գործ ձեռնարկելու, ինչպես նաև քրոջը եղբայրաբար թիկունք կանգնելու: Նա գրպանում վեց հազար ֆրանկ ուներ, ֆրանսերեն ոչ մի բառ չգիտեր: Հակառակի պես Փարիզ հասնելու օրը հայի չի հանդիպում, արաբներ են պատահում, որոնք խոստանում են օգնել ու նույն գիշերը դրամները գողանում, անհետանում են: Ընկերները Բեյրութից հեռագրով փող են հասցնում, որպեսզի վերադառնա:

- Օդակայանի ճանապարհին, սակայն, ինքս ինձ սաստեցի: «Ժորժ,- ասացի,- այս ի՞նչ ես անում: Նոր-նոր կյանք ես մտնում, ինքնուրույն քայլ ձեռնարկում ու առաջին իսկ դժվարությունից ընկճվում, ընկրկո՞ւմ ես»: Մի խոսքով, տոմսս հանձնեցի, հետ եկա Փարիզ:

Այդ օրերից շատ չէ, ընդամենը մի քանի տարի պիտի անցներ, որ նա հյուսվածքեղենի իր արհեստանոցը, ամերիկյան ինքնաշարժը, կահավորված հարկաբաժինն ունենար: Մտածում է, որ ժամանակն է քրոջը Ֆրանսիա տեղափոխել, սկսվում է Ղարաբաղի պատերազմը:

- Ես, իհարկե, ունեի հայ լինելու ոչ միայն զգացումը, այլև ըմբռնումը, մասնակցում էի Փարիզի ապրիլքսանչորսյան քայլերթերին, Թուրքիայի դեսպանատան առջև կազմակերպվող բողոքի ցույցերին, պաստառներ էի գծանկարում ու թափահարում, բայց Հայաստանն ինձ համար տեսլական հայրենիք էր, որի խորհրդանիշների՝ Արարատ լեռան, Սևանա լճի, Անդրանիկ Զորավարի նկարները փակցրել էի աշխատասենյակիս պատերին: Երբ Ղարաբաղի պատերազմը սկսվեց, Հայաստանը Լիբանանի, Ֆրանսիայի նման իրական երկիր դարձավ, երկիր, որը մեր՝ իր զավակների կարիքն ուներ:

Արցախյան ազատամարտի ժամանակ ֆրանսահայերը հանգանակություններ էին կատարում. զինամթերք, հանդերձանք, դեղորայք հայթայթում, օրինակ՝ Մոնթեի ղեկավարած զորամիավորումներին, որոնք կանոնավոր պարբերականությամբ տեղ էր հասցնում Ֆրանսիայի հայ մարտիկներին սատարող ընկերակցության նախագահը՝ Աշոտ Շմավոնյանը: Հերթական անգամ, սակայն, նա Արցախից, ավելի ճիշտ՝ Մարտունու դիրքերից, տրտում է վերադառնում:

- Խրամատները մտնում, ամաչում էի,- ասում է 60-ն անց Աշոտը,- մեր տարած օգնությունն ի՞նչ է, Արցախին զինվոր է պետք, մարտնչող մարտիկ: Հակառակ դեպքում...

Ընկերակցության գրասենյակից Ժորժը վերադառնում է տուն ու, ո՛չ, անքուն գիշեր չի անցկացնում, մինչև լույս անկողնում անհանգիստ շուռումուռ չի գալիս: Նախ՝ տանում, ինքնաշարժը պահ է տալիս ընկերոջը: Հետո վերադառնում, հերթով թակում է հարևանների դռները:

- Այսքան տարի դուք ինձ հարազատի պես եք վերաբերվել,- ասում է,- մեկ-մեկ մտեք իմ սենյակները, ինչը որ հավանում եք, վերցրեք: Ես գնում եմ:

- Ո՞ւր,- անակնկալի են գալիս հարևանները:

- Եթե վերադառնամ՝ կասեմ, իսկ եթե չվերադառնամ՝, ինքներդ կիմանաք...

Ինքնաթիռը Երևանի օդանավակայանում վայրէջք է կատարում կեսգիշերին: Ժորժը նստում է պատահած առաջին ինքնաշարժը և խնդրում.

- Ինձ Ղարաբաղ հասցրու:

Վարորդը արգելակում է նոր գործի գցած շարժիչը.

- Հո՞ դու գիշերվա շառ չես: Ղարաբաղում պատերազմ է...

- Ուրեմն, մոտակա զորանոցը տար...

Վարորդը համառում է.

- Տղա ջան, լավ մտածիր, հլա մի տեսքիդ, շնորհքիդ նայիր, Փարիզի ինքնաթիռից նոր չիջա՞ր...

- Շուտ արա, առանց այն էլ ուշացել եմ...

Ինքնաշարժը ցուրտ, խավար Երևանում պտտվում, պտտվում, կանգ է առնում առաջին իսկ զորամասի առջև:

Հաջորդ առավոտյան նա արդեն Արցախում էր:

Նոր եմ նկատում, որ Ժորժը, որքան խոսակցությունը երկարում, այնքան հաճախակի է ծխում: Ու երբ գլանակը մոտեցնում է շրթունքներին, մատները դողում են: Պատերազմի հուշերի՞ց: Պարզվում է՝ ոչ:

- Եթե ասեմ, որ դրանք իմ կյանքի ամենաերջանիկ օրերն էին, հավատա: Գիտե՞ս՝ Հայրենիքի համար կռվել ի՛նչ է նշանակում:

Դու էլ ի՛նձ հավատա, ընթերցող, Ժորժը կարոտով, այո՛, կարոտով էր պատմում անտառային՝ մշտապես խոնավ զինվորական վրանի, մսի պահածոների մասին, որ գցում էին անթեղված կրակի մեջ, տաքացնում, ուտում: Ու քանի որ երկու զինվորին մեկ տուփ էր հասնում, յուրաքանչյուրը դանդաղ էր ուտում, որ ընկերոջն ավելի շատ հասներ: Հետո, վերջապես, դիրքավորվելու հրաման ստացան, ինքն առաջին ճակատամարտին մասնակցեց: Ժորժը պահունակ պահունակի հետևից պարպում ու չէր հանգստանում, որովհետև կրակում էր Արցախը բռնազավթել ձգ-

տողների ու նաև նրանց դեմ, ովքեր Լեռնային Կիլիկիայում սրախողխող էին արել իր նախնիներին, ողջ մնացածներին լլկել, վտարանդի էին դարձրել: Ժորժը կրակում էր Արարատի, Սևանի, Անդրանիկի համար, որոնք այլևս Քլամարի տան պատին փակցված խորհրդանիշներ չէին, իր էությունն էին ու իրենից անբաժան էին մնալու: Հերթական ճակատամարտի ժամանակ նա վիրավորվեց, բայց ոչ մեկին չասաց, որ թիկունք չուղարկեն: Վրեժխնդրություն, քինախնդրություն, չէ, չէր զգում, արդարության էր ձգտում:

Աչքերն անսպասելի խոնավանում են:

- Մի Բաշիրի դիրքային փոխհրաձգության պահին, կողքիս զոհվեց ընկերս՝ բաքվեցի Վալոդը: Ու ես, մինչև հիմա ամոթով եմ հիշում, չդիմացա, հոնգուր-հոնգուր լաց եղա...

Ոտքի կանգնեց, շպրտեց կիսավառ ծխախոտը.

- Գիտե՞ս իսկական հայերն ովքեր են: Իսկական հայերն իմ մարտընկերներն են՝ Զարգանդը, Խուդոյ Դավիթը, Բաչոկ Աշոտը, ովքեր ընդմիշտ այնտեղ՝ Ղարաբաղում, մնացին:

Պատերազմի ավարտից հետո Ժորժն էլ է ուզում Արցախում հաստատվել. Ումուդլուլում մի տուն շատ է հավանում, գնում, բայց ձևակերպման ժամանակ պարզվում է, որ արտասահմանյան քաղաքացի է, մի ամսվա թույլտվություն է ունեցել, մի տարուց ավելի Արցախում է եղել: Ուղարկում են Հայաստան: Հայաստանում, թե դու միջազգային բոլոր չափանիշները խախտել ես՝ պիտի Ֆրանսիա վերադառնաս, ուղեթղթերդ կանոնավորես: Հրամանատարները՝ հայկական բանակի բարձրաստիճան սպաներն, անձամբ գնում, բացատրում, վիճում են, թե՝ էս տղան կամավոր եկել, մեր երկրի համար կռվել է, հիմա դուք մեր երկրից դո՞ւրս եք անում:

Չէ, որ չէ, խախտել է...

Ժորժը ձայնը բարձրացնում է

- Արմինե...

Ներս է մտնում մի դեռատի, հմայիչ հայուհի:

- Հայաստանից հո առանց ավարի չէի վերադառնալու, Արմինեի պես աղջկա հետ ամուսնացա: Երկու հարսանիք ենք արել, մեկը՝ Երևանում, մյուսը՝ Փարիզում:

Ավելի է բարձրացնում ձայնը.

- Նարեկ, Մարո...

Մի տղա ու մի աղջիկ են հայտնվում՝ երկուսն էլ սևաչ, սևահոն, համակ հայություն...

- Ձավակներս են, Հայաստանում եմ կնքել, ամառները Երևան եմ ուղարկում, որ մայրենի լեզուն լավ սովորեն:

Դրա համար էին երևի հետս խոսելիս շիկնում, արևելահայերենն ու արևմտահայերենը խառնում:

Ժորժն իր ձեռնարկությունն էլ է ինձ ցույց տալիս, որ իր ազգանունով՝ «Պողոսյան հաստատություն» է կոչվում:

- Վերջերս 80. 000 եվրո եմ տվել, հյուսվածքի յոթը արդիական համակարգ գնել, բայց եթե հայրենիքս ասի՝ «Ժո՛րժ, քո կարիքը զգում եմ, արի՛», այս ամենը կթողնեմ, կնոջս, երեխաներիս կվերցնեմ, կգամ:

Փարիզում, նույնիսկ քաղաքամերձ արվարձանում, երբ գիշերը վրա է հասնում, փողոցները ոչ թե մթնում են, այլ դեղնակարմրավուն, շենշող լույսերով, գովազդների գունեղ ճայթյունով են լցվում: Ասես տոնական հրավառություն է սկսվում, որի միջով քայլում ենք ես ու Ժորժը: Նա չի խոսում, բայց և չի շտապում: Հասկանում եմ, թե ինչու: Մետրոյի կայարանի մատույցներում կանգ առանք:

- Բարևներս կտանես Հայաստան:

- Ո՞ւմ:

- Ո՞նց ասեմ: Հենց իջնես օդակայան, կասես՝ Ժորժը շատ բարև էր անում: Բա՞ ոնր կասես:

Շարժասանդուղքով իջնելիս՝ ուզում էի, բայց հետ չշրջվեցի: Գիտեի, որ կանգնած ինձ է նայում: Ու մտքով գալիս է հետս:

Հայաստան:

ԳՐԻԳՈՐ ՁԱՆԻԿՅԱՆ
Լուսանկարները՝ ԱՇՈՏ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ (Փարիզ)

«ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՍ» ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հունվարի 31-ին, Հայաստանում մեկնարկած «Եվրամիությունը և ես» ցուցահանդեսը կազմակերպել էին Հայաստանում Բրիտանական Խորհրդի գրասենյակը և Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը:

Լուսանկարների հեղինակների աշխատանքների և կարծիքների հիման վրա փորձել էին ցույց տալ Հայաստանի և Եվրոպայի մարդկանց առանձնահատկությունները:

«Մեր սերունդը սովոր է ապրել անկայուն և խառը իրավիճակում: Հանգամանքների բերումով դարձել ենք հարմարվող: Եվրամիությանն անդամագրվելու դեպքում բոլոր անհարմարություններին զուգահեռ մեզ հնարավորություն կտրվի շփվել այլ ազգերի հետ»:

«Եվրամիությանը Հայաստանի անդամակցության դեպքում կարող ենք կանգնել ազգային արժեքների կորստի վտանգի առջև: Ինչ կարող է սովորել հայ երիտասարդությունը

եվրոպացուց՝ համասեռամոլությունից բացի»:

«Առաջին բանը, որ պետք է սովորել Եվրոպայից ժողովրդավարությունն է, և մարդու դերը հասարակության մեջ»:

Այսպես էին արձագանքում հայ երիտասարդները Հայաստանի Եվրամիությանը ինտեգրվելու հարցերին:

Ցուցահանդեսը Հայաստանում Բրիտանական Խորհրդի «Եվրամիություն և ես» ծրագրի մի մասն է կազմում: Ծրագրի նպատակն է իրար ճանաչելու և ընկալելու հնարավորություն ստեղծել հարավարևելյան 10 երկրների՝ Հայաստան, Ադրբեջան, Բուլղարիա, Կիպրոս, Հունաստան, Ռումինիա, Մակեդոնիա, Սերբիա, Թուրքիա և Միացյալ Թագավորության երիտասարդների միջև (երկրների այս հետաքրքրական ցանկը տես՝ նաև էջ 13-ում՝ ծանոթագրություն 21-ում - խմբ.):

Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր Մեծ Բրիտանիայի դեսպան Տոնի Քենթրին:

Երևանում ցուցահանդեսը յոթ օր ներկայացնելուց հետո ներկայացվեց նաև Հայաստանի տարբեր մարզերում:

ԱՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼՅԱՆ

ԱՄՆ-ՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

«Որքան անհրաժեշտ է Հայ ցեղին համար ունենալ տեսիլք մը, բեւեռային աստղ մը, անոր ուղղելու համար մեր բոլոր քայլերը»: «Ինծի համար հայրենասիրութիւնը արժանապատվութեան խնդիր է»: (Մ. Սվալզյան)

Ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, հրապարակախոս, գրող Միհրան Սվազլյանը (Սվազլը) (1863, Զմյուռնիա - 1935, Բոստոն) սովորել է Զմյուռնիայի անգլիական կոլեջում: Դեռևս 18 տարեկանից անգլերենի իմացության շնորհիվ քարտուղարի և գանձապետի պաշտոնով ծառայել է Կիպրոսի անգլիական կառավարական պալատում:

Ավարտելով Ֆրանսիայի էքսի համալսարանի իրավաբանական բաժինը՝ 1888 թ. Մանչեսթրի հայերի կազմակերպած հանգանակություններով Ժան Պրուսալյանի հետ Լոնդոնում հրատարակել է Հայ դատը Եվրոպային առաջին անգամ ներկայացնող «Հայաստան» թերթը, որտեղ իրենց հոդվածներն են տպագրել և հայասիրությամբ թրծվել անգլիացի և ֆրանսիացի քաղաքական գործիչներ Լորդ Ջեյմս Բրայսը, Էմիլ դը Լավլեն, ինչպես նաև թերթի շուրջ են համախմբվել եվրոպացի առաջավոր մտածողներ՝ Ռոլեն Ժաքմենսը, Լյունչելին, Ժյուլ Սիմոնը, Բարթելեմի Սենթ Հիլերը, Ուիլյամ Էվարթ Գլադստոնը և ուրիշներ: Լորդ Ջեյմս Բրայսի նախագահությամբ, Միհրան Սվազլյանը մարդաշատ հավաքներ է կազմակերպել Լոնդոնում, աշխատակցել «Դեյլի նյուզ» և «Նյուզ ռիվյու» պարբերականներին: Արդյունքում հիմնադրվել է Անգլո-հայկական ընկերությունը, որին անդամակցել են Սըր Էդուարդ Գրեյը, Ջեյմս Բրայսը, Շուան և ուրիշներ: Հրատարակել է հասարակական-քաղաքական բնույթի հայերեն, ֆրանսերեն, անգլերեն բազմաթիվ հոդվածներ եվրոպական և ամերիկյան մամուլում:

1893թ., վերադառնալով Կիպրոս, զբաղվել է փաստաբանական գործունեությամբ՝ միաժամանակ աշխատակցելով Բոստոնում լույս տեսնող «Արմենիա» (1890-ական թթ.) պարբերականին: Կիպրոսում տասը տարի իրականացրել է հայանպաստ գործունեություն, մասնակցել հունական քաղաքական կյանքին, ազատական գաղափարներով հանդես եկել տեղի մամուլում: Մասնակցել է Եվրոպայի հեղափոխական շարժումներին՝ ձգտելով Հայկական հարցը ծանոթացնել օտարներին և հայասեր բարեկամներ ձեռք բերել: 1908թ. մեկնել է ԱՄՆ:

Մ. Սվազլյանն աջակցել է Հնչակյան կուսակցությանը (1887թ.), եղել Վերակազմյալ Հնչակյան (1896թ.), ապա՝ միացյալ Ռամկավար-Ազատական (1921թ.) կուսակցությունների հիմնադիր-ղեկավարներից: Նա եղել է 1917թ. մարտին Բոստոնում հիմնադրված Ամերիկայի հայ ազգային միության նախագահ, Փարիզի Հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչը Վաշինգտոնում, իսկ զինադադարից հետո՝ նաև Աթենքում:

Ըստ նրա՝ ժամանակակից Հ. Դարբինյանի, Մ. Սվազլյանը եղել է «հայ ազատագրական պայքարի առաջին ռահվիրաներէն՝ մինչեւ վերջը մնացած է պատնէշին վրայ անդրդուելի, առաջին շարքերուն մէջ, երիտասարդի մը խանդավառութիւնով ու տարեցի մը փորձառութիւնով»: Իսկ Արշակ Չոպանյանը նրա մասին գրել է. «Միհրան Սվազլը… ժամանակակից հայ կեանքի ամենէն ինքնուրոյն ու սիրելի դէմքերէն մինն է: Վճիտ ու թրթռուն սիրտ մը, խանդավառ ու ազնիւ միտք մը, հայ ցեղին լաւագոյն աւանդութեանց շունչով կազմուած, հելլէն քաղաքակրթութեան աստուածային ժպիտին մէկ կայծովը լուսաւորուած, ֆրանսիական յստակ ու վեհանձն մշակոյթին ջերմութեամբ տոգորուած, անշահախնդիր գորովով մը, մշտադալար աւիւնով մը հայրենիքի կրօնքին նուիրուած,- ա՛յս է էութիւնը ազգային դատի այդ վեթերան ախոյեանին բարոյական դիմագծութեան: …Լաւ տեսակի «ռոմանթիկ» մը, ահա՛ մէկ բառով Միհրան Սվազլը: …Խանդավառութիւնը միացած ողջմտութեան, հոգեկան ջերմութիւնը՝ լուրջ դատումի եւ ինքնազսպումի կարողութեամբ ընկերացած, երեւան կը բերեն մարդկային տիպար մը, այնքան բեղմնաւոր, որքան գրաւիչ»:

Մ. Սվազլյանի ղեկավարած Ամերիկայի հայ ազգային միությունը ներառում էր համերաշխ գործելու պատրաստակամություն՝ դրսևորած հայ քաղաքական չորս կուսակցությունների (Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան, Վերակազմյալ Հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Սահմանադրական Ռամկավար), ազգային երկու եկեղեցիների (Առաքելական, Ավետարանական) և Հայ Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) ներկայացուցիչներ:

Առաջին աշխարհամարտն սկսելուց ի վեր առաջին անգամն էր, որ հայ քաղաքական կուսակցությունները (մասնավորապես՝ ՀՀԴ) միասնականություն էին հանդես բերում ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: «Քոյր կուսակցութիւնները» միավորելու առիթով Մ. Սվազլյանը գրել է. «Ես յաւակնոտ ու պարծեցող չեմ, ու չեմ ալ սիրեր այդպիսի մարդիկ, սակայն թոյլ տուէք ինձ անգամ մը այդպիսի թերացումի մէջ գտնուելու, եթէ ինքզինքս հռչակեմ այս միութեան հայրը: Գիտէ՞ք, ի՜նչ մեծ մխիթարութիւն մըն է ինծի պէս անզաւակ մարդու մը համար ունենալ այդպիսի միութիւն մը իբր զաւակ: Տասը տարի առաջ յղացած էի այդպիսի միացում մը»: Ապա միասնականության իր իմաստուն պատգամն է հղել հայ քաղաքական կուսակցություններին. «…Թող ձեր մեծութիւնը, ձեր արժանիքը եւ փառքը ընդհանուրին, ազգին ու հայրենիքին երջանկութեան բոցին մէջ աներեւութանայ եւ դուք, իբր խոնարհութեան, միութեան, համերաշխութեան տիպարներ, արժեցնէք կուսակցութիւններու դիրքն ու համբաւը մեր դժբախտ ազգի մէջ: Հեղինակ մը ըսած է տեղ մը՝ ազատութեան եւ անկախութեան գինը մշտնջենական աչալրջութենէն կախում ունի: Միացած կը յաղթենք, անմիաբան կը յաղթուինք: Կեցցէ՜ միութիւնը»:

ԱՄՆ-ում ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: Միության նպատակն էր ամերիկահայ համայնքի նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի ազատագրմանը, նաև հայանպաստ քարոզչություն և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել:

Ամերիկայի հայ ազգային միությունը Մ. Սվազլյանի խմբագրությամբ լույս է ընծայել «Դը Արմինյըն Հերալդ» (1917-1919 թթ., Բոստոն) պաշտոնաթերթը:

Հեռավոր հայրենիքին ու թշվառության մեջ հայտնված հայրենակիցներին սատարելու նպատակով նշանակալից գործունեություն ծավալած Ամերիկայի հայ ազգային միության ընդհանուր դրամագլուխն իր գոյության հինգ տարիների ընթացքում կազմել է շուրջ 930.000 դոլար: Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ձեռնարկներից էր ամերիկահայության շրջանում կամավորական շարժման կազմակերպումը: Կարճ ժամանակում՝ 1917թ. հունիսի 9-նոյեմբերի 3, Ֆրանսիայի հովանավորության ներքո Կիլիկիայի ազատագրման համար սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգներից արձանագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն էր ընձեռվել միայն 1.172-ին: Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով նրանցից շատերն իրենց ուժն ու կարողությունը ծառայեցրել են նաև որդեգրած հյուրընկալ երկրի պաշտպանությանը՝ անդամագրվելով դաշնակ-

ցային զինված ուժերին: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով հայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել էր բարձր պարգևների, շնորհել մեծ արտոնություններ ու նպաստներ: Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ ամերիկահայ շատ ու շատ վիրավոր ու կարիքավոր կամավորներ ստացել էին նյութական օգնություն, բազմաթիվ կամավորների շնորհվել էր Միության Պատվո Վկայագիր:

Միությունը 1919թ. փետրվարի 1-ին՝ գաղութի պատմության մեջ առաջին անգամ իրականացրել ազգային մակարդակի ընտրություններ՝ Փարիզում գումարվելիք Համազգային ժողովին ներկայացնելով 4 պատգամավոր:

Միությունն ամերիկյան մամուլում և հասարակության շրջանում հայանպաստ շարժում սկզբնավորելու նպատակով 1918-ի սկզբին Նյու Յորքում հիմնել է Հանրականության գրասենյակ, որը հետագայում դարձել է Մամլո գրասենյակ, ապա՝ Հանրականության կոմիտե: Վերջինս իր ծրագրերի իրականացման համար 1920-ին որոշել էր ստեղծել կազմակերպված մի միավոր, որը պետք է միջազգային շրջաններում ջատագովեր Հայաստանի անկախության ճանաչումն իր պատմական սահմաններում, հայ կարիքավորներին ապահովեր ամերիկյան օգնությամբ, մինչև որ Հայաստանի Հանրապետությունը (1918-1920թթ.) դառնար ինքնաբավ երկիր, ինչպես նաև՝ աջակցեր հայ կանանց ու աղջիկների ազատագրմանը մահմեդական հարեմներից ու տներից և այլն: Ազգային Միությունը, հավանություն տալով Հանրականության կոմիտեի այդ ծրագրին, դրա իրագործմանն ի խնդիր տրամադրել էր 15.000 դոլար: Միությունը ԱՄՆ-ի, ինչպես նաև եվրոպական երկրների անտեղյակ հասարակայնությանը Հայ դատին ծանոթացնելու նպատակով հրատարակել ու տարածել է քաղաքական, պատմական ու գեղարվեստական բնույթի մի շարք աշխատություններ:

ԱՄՆ-ի ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության և անձամբ Մ. Սվազլյանի ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տվել է իր դրական արդյունքները. ԱՄՆ-ի նախագահ Ուդրո Ուիլսոնը Հայաստանի Հանրապետություն է առաքել գեներալ Ջեյմս Հարբորդի ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ՝ տեղում ուսումնասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները, ինչպես նաև՝ Հայաստանի նորահաստատ հանրապետությանը տնտեսական օգնություն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորրեն Հարդինգ) 1918թ. սեպտեմբերին և հոկտեմբերին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների՝ Հայոց հարցին առնչվող հաղորդումները: Ելույթ էին ունեցել Ամերիկայի հայ ազգային միության ատենապետ Մ. Սվազլյանը, նրա գործակից Վարդան Մալքոմը, ԱՄՆ-ի Արտաքին գործերի քարտուղարի օգնական Ու. Ֆիլիպսը, Նպաստամատույց կոմիտեի քարտուղարի օգնական Հ. Իեքուիթը:

Միության ջանքերի շնորհիվ 1919թ. մարտին ամերիկյան առաջավոր հասարակայնության 15.300 ներկայացուցիչներ (15.000 բողոքական և 75 եպիսկոպոսական եկեղեցականներ, 35 նահանգների կառավարիչներ, 200 քոլեջների ու համալսարանների նախագահներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի Խաղաղության ժողովում ձեռնարկվելիք ջանքերը, և դրանք վերածելու գործուն քայլերի: Միությունը գաղութի հայրենակիցներ ազգային ու կուսակցական գործիչների հետ միասին ոչ մի ջանք չի խնայել՝ հարթելու ՀՀ ստեղծումով Փարիզի Ազգային պատվիրակության ներսում առաջացած երկփեղկվածությունը, երբ նախագահ Պողոս Նուբարի կողքին ազգային խնդիրների իրականացման համար, որպես նորաստեղծ պետության ներկայացուցիչ, 1919թ. սկսել էր հանդես գալ նաև դաշնակցական գործիչ Ավետիս Ահարոնյանը:

Այդ մասին Մ. Սվազլյանը մասնավորապես գրել է. «Ունենալ Բարիզի մէջ երկու տեղեկատու պիւրօներ առ երեւոյթս նոյն նպատակի ձգտող երկու պատուիրակութիւններու յարակից, ամենատարօրինակ երեւոյթներէն մէկն էր մեր ժամանակակից պատմութեան մէջ: Դրամի եւ ժամանակի կորուստ լինելէ զատ, երկու պատուիրակութեանց միջեւ արտաքին աշխարհի առջեւ աչքի զարնող անհերդաշնակութեան կենդանի ապացոյցն էր»:

Ամերիկայի հայ ազգային միությունը երկրի ողջ հայության հետ միասին իր գործուն մասնակցությունն է ունեցել ամերիկյան Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի՝ եղեռնից հրաշքով վերապրած հայ որբերին ու կարոտյալներին օգնություն ցույց տալու գործին, ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու՝ ԱՄՆ-ում ի նպաստ հայոց բանակին կազմակերպված հանգանակությանը, ինչպես նաև Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի հանձնարարությամբ 1919թ. նոյեմբերին Զորավար Անդրանիկի և հրամանատար Հակոբ Բոնապարտյանի Ամերիկա կատարած ազգանպաստ առաքելությանը, քաջալերել ու նյութապես օգնել է նաև նույն ժամանակ կազմավորված Ամերիկահայ տիկնանց միությանը, որը ամերիկացի քվեատու կանանց և բարձրաստիճան պաշտոնյաներին լուսաբանում էր Հայ դատը՝ փորձելով նրանց միջոցով ազդել Կոնգրեսի վրա՝ վավերացնելու հայանպաստ որոշումները:

Ամերիկայի հայ ազգային միության և ամերիկահայ համայնքի ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել համախմբել հայասեր ամերիկացիներին՝ 1919-ին կազմելով Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որն իր առջև խնդիր էր դրել բոլոր միջոցներով օգնել Հայաստանին, ամերիկյան ժողովրդին ու քաղաքական բարձրաստիճան շրջաններին լուսաբանել Հայկական հարցը, հայերի հանդեպ համակրանք ստեղծելու նպատակով փաստացի ներկայացնել Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի կրած տառապանքները, ինչպես նաև ճնշում գործադրել ամերիկյան կառավարության վրա՝ ճանաչելու Հայաստանի լիակատար անկախության իրավունքը: Կոմիտեի նախագահն էր ամերիկացի փաստաբան, Բեռլինում ԱՄՆ-ի նախկին դեսպան, սենատոր Ջեյմս Ջերարդը:

Հայաստանի ամերիկացի բարեկամների Հայաստան - Ամերիկա ընկերությունը ֆիլադելֆիացի հայտնի իրավաբան, հայասեր Ուոլթեր Ջորջ Սմիթի նախագահությամբ (քարտուղար՝ Ջ. Մոնթգոմերի) իր հայկական հանձնախմբի խորհրդատվությամբ, մինչև Լոզանի վեհաժողովը (1922թ. նոյեմբեր 20 - 1923թ. հուլիս 24) ամերիկյան հասարակության և կառավարության առջև իրականացրել է Հայ դատին ի նպաստ ձեռնարկներ:

Մ. Սվազլյանի անմիջական գործուն ջանքերի շնորհիվ էր, որ ԱՄՆ-ի հայասեր նախագահ Ու. Ուիլսոնը հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողություն հաստատելու առաջարկով 1920թ. հանդես էր եկել երկրի Կոնգրեսի առջև:

Առաջին աշխարհամարտից հետո միությունը ԱՄՆ-ի և եվրոպական պաշտոնատարների կողմից ճանաչված անցագիր-վկայականներ է տրամադրել դեպի հայրենիք մեկնող իր հայրենակիցներին:

Երվանդ Մեսիայանի բնորոշմամբ, «յառաջդիմող իմաստութեան կատարեալ մարմնացում», հմուտ դիվանագետ Միհրան Սվազլյանի ղեկավարած՝ Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համագաղութային, մինչև անգամ միջազգային և հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Գիտնականը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի մոտ:

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Ռուբեն Սահակյանը ծնվել է 1929թ. հոկտեմբերի 15-ին, Թիֆլիսում: 1948-ին ընդունվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն ավարտել է 1953-ին՝ ստանալով պատմաբան-միջազգայնագետի որակավորում: Տիրապետելով արևմտյան և արևելյան մի շարք լեզուների՝ նա 1954-ին ընդունվում է Պատմության ինստիտուտի ասպիրանտուրայի բաժին և ձեռնամուխ լինում թուրքագիտության հիմնավոր ուսումնասիրությանը:

Հետագա տարիներին նա աշխատել է Պատմության ինստիտուտում, ԳԱ արևելագիտության սեկտորում, իսկ 1961-63թթ. ստանձնել Գիտությունների ակադեմիայի հրատարակած հասարակական գիտությունների «Տեղեկագրի» պատասխանատու քարտուղարի պարտականությունը: 1975-1981թթ. աշխատել է Ֆրանսիայում՝ որպես ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղար:

Վերադառնալով Խորհրդային Հայաստան՝ Ռ. Սահակյանը 1981թ. աշխատանքի է անցնում ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, նախ՝ զբաղեցնում է Իրանի բաժնի վարիչի պաշտոնակատարի (1981-1983թթ.), իսկ 1983թ. մինչև կյանքի վերջը, այն է՝ 1998թ. սեպտեմբերի 12-ը՝ Թուրքիայի բաժնի վարիչի պաշտոնները:

Ռ. Սահակյանի աշխատությունները նվիրված են նոր և նորագույն ժամանակաշրջանի Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը, թուրքական և արևմտյան պատմագրության լուսաբանմանը, թուրք-ֆրանսիական հարաբերություններին, Հայկական հարցին ու Հայերի ցեղասպանությանը, հայ - ֆրանսիական պատմամշակութային առնչություններին:

Նրա թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր 1925-1935թթ. Խորհրդա-թուրքական դիվանագիտական հարաբերությունների պատմությանը, թեպետ չհրատարակվեց առանձին գրքով, այնուհանդերձ հիմք հանդիսացավ նրա «Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից պատմագրության մեջ» մենագրության համար (լույս է տեսել 1964թ.): Հիշյալ աշխատության մեջ գիտնականն անդրադառնում է Թուրքիայում, ինչպես նաև ԱՄՆ-ում լույս տեսած թուրք հեղինակների՝ պատմաբանների, քաղաքական, պետական և ռազմական գործիչների այն աշխատություններին, որոնցում զգալի տեղ է հատկացված սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հարցերին: Հենվելով արխիվային և հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի վրա՝ նա հիմնավորապես բացահայտում է թուրք պատմաբանների ձեռնարկած պատմական անցյալի մեկնաբանման աղավաղման փորձերը: Այս համատեքստում նշեմ, որ Ռ. Սահակյանը այդպիսի հարուստ փաստագրական վկայաբերումներով ու վերլուծություններով մի աշխատություն էր հրատարակել դեռ 1957-ին՝ «Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետո»:

Իր «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ.» (1970թ.) և «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1918-1923թ.» («Турецко-французские отношения и Киликия в 1918-1923гг.», 1985թ.) մենագրություններում, որոնցից վերջինը Ռ. Սահակյանը 1985թ. պաշտպանեց՝ իբրև դոկտորական ատենախոսություն, Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների լայն հենքի վրա, մանրազնին վերլուծության է ենթարկել թուրք-ֆրանսիական դիվանագիտական կապերի զարգացումը, քեմալականների սանձազերծած հայկական կոտորածների, հայերի ինքնապաշտպանական մարտերի պատմությունը: Նա միաժամանակ խորությամբ բացահայտել է ֆրանսիական կառավարական շրջանակների վարած թուրքամետ քաղաքականության բնույթն ու դրա կործանարար հետևանքները կիլիկիաբնակ հազարավոր հայերի համար:

1990թ. հրատարակած «Ցեղասպանության պատմությունից» ժողովածուում հեղինակը զգալի տեղ է հատկացրել 1915թ. Եղեռնի միջազգային արձագանքներին, որը հույժ կարևոր ու արդիական է Հայոց եղեռնի պատմության համակողմանի լուսաբանման դիտանկյունից:

Ռ. Սահակյանը մեծ ավանդ ունի Հայերի ցեղասպանությանը, Հայկական հարցի պատմությանը նվիրված «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» («Геноцид армян в Османской империи», 1966թ.), «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» 1972թ. ժողովածուները հրատարակության պատրաստելու գործում: Նա ոչ միայն այդ ժողովածուները կազմող հեղինակներից էր, այլև դրանցում ընդգրկված նյութերի ծանոթագրողը: Անուրանալի է նրա ներդրումը «Հայկական հարց» («Армянский вопрос») հանրագիտարանի հրատարակության գործում, (1991թ.), որի հիմնական հեղինակներից էր և խմբագրական կազմի անդամ: Նրա գրչին են պատկանում հիշյալ հրատարակության մեջ զետեղված մեծ թվով ֆրանսիացի գործիչներին և պատմաբաններին նվիրված հոդվածները:

Տասնամյակներ շարունակ ուշադրության կենտրոնում պահելով թուրքական, ինչպես նաև եվրոպական պատմագրության զարգացման փուլերն այս ասպարեզում՝ Ռ. Սահակյանը 1990-ականներին նախաձեռնեց հոդվածների մի արժեքավոր ժողովածուի հրատարակությունը, որը լույս տեսավ 1993թ. իր իսկ խմբագրությամբ՝ «Հայաստանի նոր պատմությունը արտասահմանցի ժամանակակից հեղինակների աշխատություններում» («Новая история Армении в трудах современных зарубежных авторов») խորագրով:

Ռ. Սահակյանն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ֆրանսիական պատմագրության նվաճումներին: Նրա թարգմանությամբ 1991թ. հայերենով լույս տեսավ ֆրանսահայ պատմաբան Սերժ Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը» ուսումնասիրությունը (1994թ. Ռ. Սահակյանը պարգևատրվում է ֆրանսիական «Ակադեմիական դափնիներ» շքանշանով):

Նա բազմիցս ներկայացրել է հայ պատմագրությունը միջազգային գիտաժողովներում, ակտիվորեն մասնակցել է մեր հանրապետության հասարակական կյանքին, ղեկավարել «Հայաստան - Ֆրանսիա» ընկերությունը, միաժամանակ մեծ հոգածություն է դրսևորել երիտասարդ պատմաբանների պատրաստման կարևոր գործում:

Ռուբեն Սահակյանը թողել է գիտական ծանրակշիռ ժառանգություն, որի շնորհիվ իր ուրույն տեղն է ապահովել հայ պատմագրության երախտավորների շարքում:

ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆԸ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է՝ ԱԶԳԻ ՏԵՍԱԿ

Հայկական կինոն 1960-ականներից սկսեց զարթոնք ապրել: Մինչև այսօր քանի-քանի սերունդ դաստիարակվեց այդ տարիներին ստեղծված ֆիլմերով: Ֆիլմեր, որոնք միշտ հաճույքով ես դիտում: 90-ականներին երկրի ճգնաժամի հետ միասին, ինչպես մյուս ոլորտներն, այնպես էլ կինոն, անկում ապրեց: Այսօր այդ ոլորտը փորձում է վերածնվել: Կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցի հետ մեր զրույցի ընթացքում խոսեցինք երեկվա և այսօրվա կինոյի մասին:

- Պարոն Գևորգյանց, Դուք շփվել եք մեր մեծ ռեժիսորների հետ, մի փոքր խոսեք հին ու նոր ֆիլմերից:

- «Նաիրի» կինոթատրոնից վերև կա մի շենք, որտեղ ապրում էին լավագույն հայ կինոգործիչները: Իմ ընտանիքը նույնպես ապրում էր այդ շենքում. հայրս 50-ականներին «Հայֆիլմ»-ի տնօրենն էր: Բոլորին էլ հիշում եմ. մանկությունս անցել է «Հայֆիլմ»-ում, որտեղ ամբողջ օրը վազվզում էի: Այն ժամանակ «Հայֆիլմ»-ը նոր-նոր էր ոտքի կանգնում. հետպատերազմյա շրջան էր: 60-ականներին տարեկան նկարահանվում էր 4-5 ֆիլմ: Այդ ժամանակ աշխատում էին այնպիսի ռեժիսորներ, ինչպիսիք էին՝ Գևորգ Կարամյանը (նկարահանեց Կամոյի մասին շարքը), Մելիք Ավագյանը (ստեղծեց փայլուն վավերագրական և խաղարկային ֆիլմեր): Հետո եկան համեմատաբար ավելի երիտասարդները՝ Ֆրունզե Դովլաթյան, Հենրիկ Մալյան, ...: Այդ ժամանակաշրջանում նկարահանված յուրաքանչյուր ֆիլմ այսօր մեզ համար պատմական վերհուշի նշանակություն ունի: Ամենակարևորն այն էր, որ կար կինոարտադրություն, ինչն այսօր չկա: Այն ժամանակ պետությունը գիտակցում էր, որ կինոն անհրաժեշտություն է ժողովրդի դաստիարակության համար և հատկացնում էր անհրաժեշտ ամեն ինչ: Հիմա այդ ամբողջը մատնվել է ինքնահոսի, ով ինչ ուզում՝ նկարում է: Ֆրունզե Դովլաթյանից ու Հենրիկ Մալյանից հետո եկան Բագրատ Հովհաննիսյանն ու Ներսես Հովհաննիսյանը, ...: Հիմա էլ ունենք լավ ռեժիսորներ՝ Վիգեն Չալդրանյան, Միքայել Դովլաթյան, Սուրեն Բաբայան, Հարություն Խաչատրյան, ...: Եթե այսօր ֆիլմ է նկարահանվում և արտասահմանում մրցանակի է արժանանում, դա արդեն մեր ազգին է օգուտ: Ես դեմ եմ, երբ գումարներ է վատնվում, ֆիլմ է նկարահանվում, որը շատ շուտ մոռացվում է:

- 90-ականների ճգնաժամից հետո՝ այսօր, հայ կինոն կարելի՞ է համարել հաստատված:

- Այո՛, հայ կինոն արդեն հաստատվել է. մարդիկ ֆիլմեր են նկարահանում ու առաջ ընթանում: «Հայֆիլմ»-ը գնվեց և սեփականատերերն, անշուշտ, հենց այնպես չեն գնել: Գնվեց, որպեսզի ֆիլմեր ստեղծվեն և արդյունք ունենանք: Դեռևս մեծ գումարներ պիտի ծախսվեն, որ շենքն ամբողջությամբ վերակառուցվի ու համապատասխանի միջազգային չափանիշներին:

Պետությունը մեզ ֆինանսավորել է 700 հազար դոլարով, որը նույնիսկ մեկ ֆիլմին չի բավականացնի, բայց



կարողանում ենք տարեկան գոնե երկու-երեք ֆիլմ նկարահանել: Այս ամենից բացի ուզում ենք ստեղծել կինոկենտրոն, որն իր մեջ կընդգրկի այն ամենն ինչ կապված է ֆիլմի հետ՝ փառատոներ, կինոարտադրություն, մամուլ...: Կինոկենտրոնը կունենա ղեկավարություն, որը և կթելադրի ազգային գաղափարախոսություն:

- Այսօր դաստիարակչական ֆիլմեր չունենք, մատաղ սերունդը դաստիարակվում է էժանագին տեսաֆիլմերով, ի՞նչ են մտածում հայ կինոգործիչներն այդ ուղղությամբ:

- Հայկական կինոյում էժանագին ֆիլմեր չեն նկարահանվում: Այսօր մեզ անհրաժեշտ են հեղինակային, ժողովրդական, դաստիարակչական ֆիլմեր: Ճիշտ է, դրանք տարբեր են, բայց՝ անհրաժեշտ:

- Տաղանդավոր հայ կինոգործիչներին կա՞ն փոխարինողներ:

- 80-ականներին սերնդափոխությունը հարթ էր ընթանում, բայց 90-ականների անկախությունից հետո եղան մարդիկ, ովքեր հեռացան Հայաստանից: Դրա համար արդեն երկու տարի է, ինչ կազմակերպում ենք «Ես եմ» միջազգային փառատոնը, որպեսզի ասպարեզ բերենք տաղանդավոր կինոգործիչների: Փառատոնն արդեն տվել է 7-8 անուններ, ովքեր այժմ մասնակցում են միջազգային փառատոների: Ցավոք, այսօր կինոն ավելի քիչ է վճարում, քան հեռուստատեսությունը: Դժբախտաբար, բոլորը գնում են այնտեղ, և փոքր բյուջեով նկարահանում էժանագին ֆիլմեր:

- Այս տարի ավելի շքեղ անցկացվեց «Ոսկե ծիրան» փառատոնը, ի՞նչ կասեք այս մասին:

- «Ոսկե ծիրանը» դեռ երեխա է, նոր-նոր է, բայց կամաց-կամաց այդ քայլերն ավելի ամուր են դառնում: Փառատոնի շրջանակներում Հայաստան են գալիս հետաքրքիր ռեժիսորներ, համաշխարհային դեմքեր, այդ այցերն ու հանդիպումները մեծ նշանակություն ունեն թե՛ մեր երկրի և թե՛ մեզ՝ արվեստագետներիս համար:

- Ինչո՞վ է զբաղվում կինեմատոգրաֆիստների միությունը:

- Այն այսօր կինեմատոգրաֆիստների ակումբն է ու տունը: Մենք ֆինանսական օգնություն ենք ցուցաբերում մեր բոլոր թոշակառուներին, անցկացնում ենք զանազան հանդիպումներ, փառատոներ, մասնակցում՝ համաշխարհային կինոյի գործընթացին:

- Ըստ Ձեզ, այսօր նկարահանվող ֆիլմերում պահպանվու՞մ են ազգային ոգին ու ավանդությունը:

- Եթե դա վերաբերում է կարպետին, դուդուկին ու դհոլին, դա դեռ ազգային չէ: Ազգայինը բնավորություն է՝ ազգի տեսակ: Ազգայինը և ոչ ազգայինը բարդ հարց է: Օրինակ, հարավսլավացի ռեժիսոր Կուստրոիցան ամեն տեղ մրցանակներ է ստանում իր ֆիլմերով՝ ցուցադրելով իր ազգի բնավորությունը, շարժուձևը, մտքերը, ինտելեկտը: Նմանատիպ ֆիլմի մասին է խոսքը, որը և կոչվում է ազգային:

ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՈՐԾՈՎ ԿԱՄՐՋԵՆՔ ՍՓՅՈՒՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Սփյուռքը Հայաստանով է իմաստավորվում. Հայաստանը հզոր է Սփյուռքով: Այս տողերի իմաստը լավ է ըմբռնել Մեծ եղեռնի ականատես - վերապրողների ժառանգ, մտավորական Ավետիս Կալայջյանը:

Բեյրութում՝ 1975թ. հունվարի 20-ին, նորագույն զինյալ ազատագրական պայքարի առաջին ռումբը պայթեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի շենքում: Միաժամանակ պայթեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Կալայջյանները տեղափոխվել են Սիրիա: Հալեպում ստեղծվել է «Հայդուկներ» ընդհատակյա կազմակերպությունը, որի գործունեությանը ակտիվ մասնակցել է երիտասարդ Ավետիսը:

Տարիներ անց մայր հողի կարոտով ոգեշնչված վերադարձել է Հայրենիք, ընդունել ՀՀ քաղաքացիություն: ՀՀ զինված ուժերի պահեստի սպան ստեղծել է «Հայոց հաղթական ուղի» հասարակական կազմակերպությունը և փորձում է ամրացնել Հայաստան - Սփյուռք կապերը:

Նրա ցանկությունն է մասնակցել Հայաստանի հզորացմանը, դառնալ նրա արժանի զավակը: Այդ նպատակով ազգային մշակույթի քարոզչությամբ է զբաղվում :

«Հայոց հաղթական ուղի» կազմակերպության նպատակն է ծառայել հայրենիքին: Կազմակերպության անդամներն են՝ մտավորականներ, լրագրողներ, ուսանողներ և այլոք: Կազմակերպությունը իրականացրել է մի շարք ծրագրեր. բարեգործական համերգներով եղել է Հայոց բանակի տարբեր զորամասերում, Երևանի Հարավ-Արևմտյան թաղամասի թիվ 220 մանկապարտեզին նվիրել է հագուստ, խաղալիքներ, դեղորայք: Կազմվել է մի նոր ծրագիր՝ «Հաղթարշավ դեպի Սփյուռք» անվանումով:

Իր հեղինակած «Տիգրան Մեծի պատգամը» դրամայի կենտրոնական գաղափարը պայքարն է: Նրա «Թուրք - թուրանական ծավալողապաշտությունը և 70 նահատակ ազգերը» գրքում հավաքված են թուրք-թուրանական ցեղերի բոլոր ջարդերի և ցեղասպանությունների մասին պատմություններ ու տեղեկություններ: Գիրքը պատրաստ է հրատարակության արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն տարբերակներով:

Մենք ունեցանք նորագույն պատմության մեր առաջին՝ Արցախյան հաղթանակը, որը պետք է ամեն գնով պահպանենք, գտնում է Կալայջյանը: Վտանգի պահին նա՝ որպես ՀՀ քաղաքացի, իր նման բազում սփյուռքահայերի հետ Հայաստանի կողքին է լինելու՝ հոգով, բազկով և կարողություններով:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Երբ գրողը երևում է հեռուներից, և ոչ թե միայն իր տանն ու ընկեր-բարեկամների շրջապատում, ուրեմն նա ճանապարհի է ելել: Խորեն Արամունին ճանապարհին է…

Խ. Արամունին իր մանկությունն ու պատանեկությունը անցկացրել է Իրանում (ծնված՝ 1948թ.) երիտասարդությունը՝ հայրենիքում, ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը, աշխատել է գիտական ու մշակութային օջախներում, 1980-ին տեղափոխվել ԱՄՆ: Կարճ լռությունից հետո գիտական ու հրապարակախոսական հոդվածներով հանդես է եկել տեղի պարբերականներում:

Առաջին գիրքը՝ «Հետմահու հարսանիք» պատմվածքների ժողովածուն, տպագրել է 1991-ին: Նրա գրչին են պատկանում «Մահվան պար» և «Մի բուռ առօրյա» պատմվածքների ժողովածուները: Լոս Անջելեսում բեմադրվել է «Հարուք պապը», «Պողոս քեռու այցը» երկու գործողությամբ դրամաները: 2001-ին Հենրիկ Մալյանի անվան թատրոնը Երևանում և Լոս Անջելեսում ներկայացրել է «Երթ ու դարձի տոմս դրախտի համար» կատակերգությունը:

Թատերագրությունը, պոեզիայի և արձակի զուգահեռում համեմատաբար «երիտասարդ» ժանր է մեր գրականության մեջ: «Անվերադարձ ապագա» պիեսների ժողովածուում հեղինակը ներկայացնում է հինգ պիես, որոնք ասելիքի արդիականությամբ մի ընդհանրություն ունեն: Գործողությունների աշխարհագրական տեղավայրն Ամերիկան է, իսկ գործող կերպարները՝ աշխարհի տարբեր անկյուններից հիմնականում այստեղ վերաբնակված հայեր: Երեք սերնդի ներկայացուցիչներ, որոնք նոր կյանքի հենքին, կենցաղին ու բարքերին հարմավելու ընթացքը դժվարությամբ են անցնում: Իրականությանը բախվող հիշողության անցյալն ու ներկան համալրող իր հերոսներին՝ Խ. Արամունին ողբերգա-կատակերգական միջավայր-մթնոլորտում հոգևոր պեղումների ենթարկվելու հնարավորություն է ստեղծում: Հիշողությունը, որը մի դեպքում գնալով աղոտանում և, նոր իրականությանը մերվելով, լռության մեջ է ընկղմվում, մեկ այլ դեպքում՝ հայացքի մշուշը պատռելով, անորոշությունից դուրս բերող ելք է փնտրում: Խ. Արամունին հենց այդ խաչմերուկներում դարձավ իր և մեր ժամանակի հասարակական ու ազգային կյանքի կենսագիրը:



Խ. Արամունու արձակը ժամանակակից է, թե՛ բովանդակությամբ, թե՛ գեղարվեստական ձևով ու կառուցվածքով: Նրա ստեղծագործություններ նման են կինոժապավենի. գործողությունն ընթանում է սրընթաց, երկխոսությունները հնչում են կրակոցի նման, զգացմունքը զուգահեռ է տրամաբանությանը, նա հաճախ նպատակասլացորեն խախտում է պատումի հերթականությունը. դեպքերը հետ ու առաջ է անում՝ հասնելու ամբողջական պատկերի լարվածության:

«Քսանհինգ սենթանոցը» վեպը այս ամենի խտացումով նորություն է ժամանակակից հայ արձակում. քսանհինգ սենթանոց դրամն անցնում է գրպանից գրպան, տնից տուն, փողոցից փողոց, խանութից խանութ, բանկից բանկ՝ իր ճանապարհին ճանաչելով կյանքի տարբեր երևույթները, մարդկանց, նրանց լույսն ու ստվերը: Ի վերջո թաղվում է իր վերջին տիրոջ հետ: Թվում է՝ աշխարհին վարագույր է իջնում: Իրականում, այստեղ և այլ պատմվածքներում ու վիպակներում, Արամունին կյանքի ու մարդկանց վրայից բարձրացնում է վարագույրը, և մենք տեսնում ենք մեր ժամանակի թատրոնը՝ լի լաց ու ծիծաղով:

ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՍ ԻՆՁ ԿՈՐՑՐԵՑԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ...

Թատրոնը եղել և մնում է իմ մեծ սերը. կինոյում նկարահանվելու մասին երբեք չէի մտածում: Իմ առաջին հանդիպումը թատրոնի հետ կայացել է փոքր հասակում. մայրս թատերասեր կին էր և ինձ հաճախ տանում էր օպերա, թատրոն: Առաջին օպերան, որ տեսել եմ, եղել է «Բաղչիսարայի շատրվանները»:

Հիշում եմ, մի անգամ մայրս ինձ տարավ Հայաստանի պարի պետական անսամբլի ելույթը դիտելու. դահլիճում կորցրեցի մորս, այդ ժամանակ հինգ տարեկան էի: Մթության մեջ փնտրում էի մորս ու գոռում. «Մամա՜, մամա՜...»: Անցել են տարիներ, ես այդ դեպքի մեջ խորհրդավորություն եմ տեսնում. ես ինձ կորցրեցի թատրոնում, փնտրում եմ, և մինչ օրս չեմ գտնում:

Թատերական կյանքս շատ կարճ եղավ: Հանդիպեցի Հենրիկ Մալյանին և ընդունվեցի Երևանի Մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետ: Երբեք չէի մտածում խաղալ կինոյում: Ուսանողական տարիներին Յուրի Երզնկյանը նկարահանեց Ակսել Բակուցի «Միրհավի» հիման վրա Հրանտ Մաթևոսյանի սցենարով «Այս կանաչ-կարմիր աշխարհը» ֆիլմը, որտեղ առաջին անգամ խաղացի՝ ստանձնելով երկրորդական դեր: Հետո նկարահանվեցի Հ. Մալյանի «Նահապետ» ֆիլմում, որտեղ մարմնավորում էի Նուբարի դերը, ապա՝ «Խնձորի այգին», «Որտե՞ղ էիր մարդ Աստծո», «Անուրջներ» ֆիլմերում: Շեքսպիրի «Համլետ»-ն ինձ համար մնաց որպես անհաս երազանք, ես չէի վախենում և զգում էի, որ կարող եմ խաղալ: Կուրսեցիներիս խնդրում էի, որ բեմադրենք «Համլետ»-ը, այդպես էլ չբեմադրեցինք:

Անմեկնելի էին զգացմունքներս ու հույզերս, երբ առաջին անգամ հանդիպեցի Վիլյամ Սարոյանին, Հրանտ Մաթևոսյանին, Սերգեյ Փարաջանովին, Ֆրունզիկ Մկրտչյանին: Կյանքիս անմոռաց օրերն էին դրանք: 30 տարիների ընթացքում 25-ից ավելի ֆիլմեր կան իմ կենսագրության մեջ, որոնք կինոյի պատմության մեջ ավելի մեծ հետք են թողել, քան՝ իմ անձնական կյանքում: Այդպես էլ է լինում:

Կինոն կախարդական աշխարհ է: Հիշողություններս ոչ թե իմ դերի հետ են կապված, այլ այն միջավայրի, որտեղ ֆիլմն է ստեղծվել: Ֆիլմերս նայելիս ոչ թե փորձում եմ գնահատել դերս, այլ ընկնում եմ հուշերի գիրկը. ինչ էր կատարվում դրա նկարահանման ժամանակ՝ կապված Ֆրունզիկ Մկրտչյանի, Սոս Սարգսյանի, Հենրիկ Մալյանի, Ֆրունզե Դովլաթյանի և այլոց հետ...:

Հայ կինոն ապրում է և պիտի ապրի:

Անցյալ տարին ինձ համար բեղմնավոր էր. «Հայֆիլմ»-ում նկարահանվեցի «Յարխուշտա» կարճամետրաժ ֆիլմում, «Մոսֆիլմ»-ի «Փարոս» ֆիլմում: Նկարահանվեցի ֆրանսահայ մեր հայրենակից Ռոբերտ Գեդիկյանի «Արմենիա» ֆիլմում, որը, հավանաբար, այս տարի կներկայացվի «Ոսկե ծիրան» փառատոնին:

Ես ուրախ եմ, որ ունենք այնպիսի մի սերունդ, որը սեր ու պատկառանք է տածում թատրոնի ու նրա մեծերի հանդեպ:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ. ՆՇԽԱՐՆԵՐ

...Աշխարհը տեսնող աչքեր ունենալ: Իր ներքինը ճանաչել այնքան, որ հնարավոր լինի ամենահեռու և ամենախոր արահետներով ինքն իր մեջ մտնել, անսայթաք քայլել առանց լապտերի: Անդուլ, անդադար սովորել, սիրել նրան, հասկանալ, ներել, հավատալ նրա գալիքին, և այդ ուսումը դարձնել հոգու միակ սնունդը...

Կշռիր երևույթները իրականության նժարով: Ժամանակը միշտ ապացուցում է այս հին ճշմարտությունը:

Գիտեմ, որ սահմաններն են բաժանում մեզ, ինչ-որ գծեր աշխարհի քարտեզի վրա, բայց հազիվ թե նման գծերը կարենան երբևիցե սահման դնել մի հին ու տաղանդավոր ազգի հեռավոր զավակների սրտերում, եթե նույնիսկ նրանք ապրելիս լինեն տարբեր մոլորակների վրա: Եվ կարենալ մնալու համար թեև հեռու, բայց միշտ մոտ իր ազգին, իր ժողովրդին, պետք է ամեն գնով պահել լեզուն, միակ անշեղ ճանապարհը, անքակտելի կապը իրարից հեռու ապրող սրտերի համար, միակ բևեռային աստղը դեպի նավահանգիստ բերելու համար հեռու ծովերում բախտի բերմամբ մոլորված ուղեկորույս սրտերին:

Մաղթում եմ ձեզ զվարթ լինել, առողջ և ուղիղ ու անվարան աչքերով նայել ապագային, երբեք չընկճվել և սիրել ձեր հայրենիքը, տունը, ամեն մի հայ մարդու, և երբեք չմոռանալ, որ լայն են մեր դռները...

ՏԱՐՎԱ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԿՆՇՎԵՆ

ՀՀ կառավարության որոշմամբ 2006թ. պետականորեն նշվելու են ինը հայ նշանավոր արվեստագետների հոբելյանները: ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության արվեստի վարչությունից հայտնեցին, որ կնշվեն գեղանկարիչներ Հակոբ Հովնաթանյանի 200, Դմիտրի Նալբանդյանի 100 և Գրիգոր Խանջյանի 80-ամյակները, գրող Մկրտիչ Արմենի 100-ամյակը, քանդակագործ Հակոբ Գյուրջյանի 125-ամյակը, անվանի դերասանուհի Մետաքսյա Սիմոնյանի 80-ամյակը, երգահան և խմբավար Մակար Եկմալյանի 150-ամյակը, երգչուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանի 90-ամյակը և տաղանդավոր օպերային երգիչ, մենակատար Տիգրան Լևոնյանի 70-ամյակը:

Բացի այդ, 2006թ. պետականորեն կնշվեն Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի 80 և Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի հիմնադրման 70-ամյակը:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑ

Արևելահայերի լուսավորական շարժման կենտրոնը Թիֆլիսն էր, որի դերն ավելի էր շեշտվում Հայաստանին մոտ լինելու հանգամանքով: Դարասկզբին այստեղ արդեն գործում էին մի քանի փոքր դպրոցներ: 1815թ. Ներսես Աշտարակեցին Վանքի եկեղեցուն կից դպրոց է ստեղծում: Այդ տարիներին երևան եկան մի շարք դպրոցներ ևս: Սակայն հայ դպրոցի պատմության մեջ եզակի երևույթ դարձավ Ներսես Աշտարակեցու և Թիֆլիսի հայության ջանքերով 1824-ին բացված դպրոցը, որը սկզբնապես կոչվել է Թիֆլիսի հայոց ուսումնարան, իսկ 1861-ից կրել է Ներսիսյան անունը: Այդ նույն ժամանակ դպրոցի շուրջ ծավալվել է հասարակական պայքար կղերականների և ժողովրդի միջև: Վերջինս պահանջել է դպրոցի նյութական միջոցների տնօրինությունն անկախ դարձնել հոգևոր իշխանությունից, ավարտողների համար եկեղեցական ծառայությունը պարտադիր չանել և դպրոցը կառավարել հոգաբարձուների խորհրդի միջոցով: Պայքարը, որ տևել է մեկ տասնամյակից ավելի, 1861-ին ավարտվել է ժողովրդի հաղթանակով, և կառավարման հոգաբարձական սկզբունքը հետագա տարիներին աստիճանաբար տիրապետող է դարձել արևելահայ բոլոր դպրոցների համար: Այս շրջանի մասին խոշոր գիտնական–հայագետ Ստեփան Մալխասյանը գրում է. «Սա մի երկունքի շրջան էր, որտեղ մանկավարժական նոր սկզբունքների առարկաների լայն ծրագիր, իրավունքների ու պարտավորությունների սահմանադրություն՝ առաջին անգամ երևան եկան՝ հին դպրոցի ու նորան հատուկ կարգերի տեղը բռնելու»:



Ականավոր մանկավարժ Հարություն Ալամդարյանը, տեղափոխվելով Լազարյան ճեմարանից, մեծ աշխատանք է կատարում դպրոցը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար, և այն լայն ճանաչում է ձեռք բերում: Նրա տնօրինության տարիները եղել են դպրոցի կյանքի ամենաբեղմնավոր շրջանը, որն իրավամբ կոչվել է «դար Ալամդարյանի»: Դպրոցը հիմնադրման օրից ունեցել է տպարան: Առաջին ուսումնական տարում ունեցել է 3 դասարան, 80 աշակերտ, հաջորդ երկու տարիներին բացվել են 4-րդ և 5-րդ դասարանները, սովորողների թիվը հասել 360-ի: 1826-37թթ. Ներսիսյան դպրոցը կոչվել է Թիֆլիսի Ներսիսյան հայոց ուսումնարան (դպրոց)՝ որոշակիորեն կրելով աշխարհիկ բնույթ: 1835-ին ունեցել է 7 ուսուցիչ, 70 աշակերտ:

Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի հեռանալուց հետո դպրոցն անկում է ապրել, 1836-ին փակվել է, 1837-ից՝ վերաբացվել որպես հոգևոր սեմինարիա՝ 4 դասարանով: Դպրոցի նոր վերելքը սկսվել է 1850-ականներից, երբ այն դարձել է հայերի կրթական-լուսավորական շարժման դրոշակակիրն Անդրկովկասում:

Դպրոցական կյանքի համեմատական աշխուժացումն առաջ է քաշել կրթության գործը բարելավելու ժամանակակից մանկավարժության նվաճումները կիրառելու խնդիրները: Դրանց լուծմանն է նվիրվել եվրոպական (Պիզա, Պադուա, Փարիզ) և ռուսական (Դորպատ, Մոսկվա, Պետերբուրգ) համալսարանների բովով անցած նոր սերունդը: Մշակվել և ազդարարվել են ազգային կրթության կազմակերպման սկզբունքները, հասարակական եռանդուն պայքար է ծավալվել կրթական հարցերի շուրջ, որոնք մեծ չափեր են ընդունել 1850-60թթ.: Կրթական-լուսավորական խնդիրների առաջքաշումը խիստ ժամանակին էր և բխում էր հայ ժողովրդի ազգային ազատագրության պահանջներից:

Նշանավոր մանկավարժ Պ. Շանշյանի ջանքերով 1852-57թթ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում մի շարք փոփոխություններ են կատարվել (մտցվել են բանասիրական առարկաներ, որոնց ավանդումը տարվել է հայերենով, արգելվել են մարմնական պատիժները, կատարվել են դաս-դասարանային բաժանում), որոնց հետևանքով դպրոցը շուտով վերածվել է միջնակարգի:

Իր տեսչության ընթացքում 1874-79թթ. մեծ բարեփոխումներ է կատարել Ս. Մանդինյանը: Նրա նախաձեռնությամբ ու ծրագրով 1877-ին բացվել է 6-րդ դասարան, որով դպրոցը դարձել է լրիվ միջնակարգ, 1878-ին՝ մասնագիտական մանկավարժական 7-րդ դասարան հայկական ծխական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով: 1885-86թթ. ուստարում դպրոցն ունեցել է 7 դասարան, 27 ուսուցիչ, 487 աշակերտ: 19-րդ դարի վերջում աշակերտների թիվը հասել է 712-ի: 3 նախապատրաստական և 7 հիմնական դասարաններում (Հավլաբարի և Սոլոլակի բաժանմունքների հետ միասին) սովորել է 1071 աշակերտ: 1908-ին փակվել է Սոլոլակի բաժանմունքը, 1910-ին՝ Հավլաբարինը: 1914-15թթ. ուստարում դպրոցի ուսման տևողությունը 11 տարի էր (4 նախապատրաստական, 7 հիմնական): 1924-ին Ներսիսյան դպրոցը տվել է իր վերջին 25 շրջանավարտները: 1925-ից կոչվել է աշխատանքային դպրոց:

Ներսիսյան դպրոցում սովորել են՝ Խաչատուր Աբովյանը, Ստեփան Նազարյանը, Մկրտիչ Թաղիադյանը, Պերճ Պռոշյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հայկ Բժշկյանը (Գայ), Անաստաս Միկոյանը և հայ մշակույթի շատ երախտավորներ: Տարբեր ժամանակներում այնտեղ դասավանդել են Ղազարոս Աղայանը, Ստեփան Պալասանյանը, Պերճ Պռոշյանը, Գաբրիել Սունդուկյանը, Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան), Առաքել Բահաթրյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ստեփան Լիսիցյանը, Գարեգին Լևոնյանը, Մանուկ Աբեղյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը և ուրիշներ:

ՆԱՆԵ ՍԵՎԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Դավիթ Անհաղթը հինգերորդ դարի հայ խոշորագույն փիլիսոփա է, հայ իրականության մեջ հիմնադիրն է իմացաբանության, տրամաբանության, բարոյագիտության, փիլիսոփայության և այլ մասնաճյուղերի: Նրա աշխատություններն են՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւնը ներածութեան Պորփիւրի», «Մեկնութիւն ի վերլուծական Արիստոտելի», «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի»: Դ. Անհաղթի փիլիսոփայությունը, որն իր արմատներով կապված է անտիկ աշխարհի գիտության հետ, գիտական ուղղության համար ճանապարհ հարթեց հին հայ հասարակության մտավոր կյանքում: Նա նորպլատոնական փիլիսոփայական ուսմունքի հետևորդ էր. մի ուսմունք, որի մեջ Պլատոնի հայացքները միաձուլվում էին Արիստոտելի, Պյութագորասի և ստոիցիզմի գաղափարների հետ՝ իդեալիստական հիմքի վրա: Սակայն Ալեքսանդրյան դպրոցը, ուր կրթություն էր ստացել Անհաղթը, հետևում էր նեոպլատոնիզմի նոր ուղղությանը, որի մեջ առանձնապես զորեղ էր Արիստոտելի փիլիսոփայության ազդեցությունը:

Կենսագրական տեղեկությունները Դ. Անհաղթի մասին քիչ են: Օտար աղբյուրները քիչ բան են հաղորդում նրա մասին, նշելով միայն, որ նա հայ էր, Ալեքսանդրիայում ուսանել էր Օլիմպիոդորոս Կրտսերի մոտ, գրել էր մի քանի փիլիսոփայական երկ: Հայկական աղբյուրների համաձայն՝ նա Տարոնից էր, ծնվել է Ներգին գյուղում, մոտավորապես 70-ականներին, ուսանել է Ալեքսանդրիայում, եղել է Աթենքում, Կ. Պոլսում, ուր մասնակցել է հրապարակային վեճերի, բազմիցս հաղթանակներ տարել և ճանաչվել որպես Եռամեծ և Անհաղթ փիլիսոփա: Մահացել է Հայաստանում, թաղվել՝ Մշո Սբ. Առաքելոց վանքում: Դասվել է սրբերի շարքը:

Դ. Անհաղթը հայ փիլիսոփայության պատմության մեջ որակական բեկում կատարեց՝ հստակորեն սահմանազատելով իմաստասիրությունն աստվածաբանությունից: Նա տվեց փիլիսոփայության՝ որպես գիտության սահմանումը, որոշեց նրա խնդիրները և նպատակները: Դ. Անհաղթի շնորհիվ հայ փիլիսոփայությունը ձեռք բերեց սեփական դեմք, ձևավորվեց որպես գիտելիքի մի ուրույն բնագավառ և որոշեց իր տեղը հին և միջնադարյան Հայաստանի գիտությունների բնագավառում: Դ. Անհաղթի փիլիսոփայությունը համապարփակ է: Այն ընդգրկում է այդ գիտության գրեթե բոլոր բնագավառները՝ գոյաբանություն, իմացաբանություն, տրամաբանություն, հոգեբանություն, գեղագիտություն, հասարակագիտություն, բարոյագիտություն: Անհաղթը, ապացուցելով աշխարհի ճանաչման հնարավորությունները, դրա հետ միասին ապացուցում է փիլիսոփայության՝ որպես բնության ընդհանուր օրինաչափությունները և էությունը ճանաչող գիտության գոյության անհրաժեշտությունը:

Ըստ Անհաղթի՝ ճանաչումը սկսվում է նյութական գոյերի, իրերի ճանաչումից և, անցնելով աննյութ ձևերի ըմբռնման աստիճանով, ավարտվում է բացարձակապես աննյութ Գոյի՝ Աստծո ճանաչումով: Մարդու հոգին օժտված է երկու տեսակի ընդունակություններով՝ ճանաչողական և կենդանական: Ճանաչողական ընդունակություններն են՝ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք (բանականություն): Սրանք մարդկային ճանաչողության իրար հաջորդող վերասլաց աստիճանների հիմքն են հանդիսանում: Դրանք են՝ փորձը, փորձառությունը, արվեստը, գիտությունը, փիլիսոփայությունը: Իրար նախապատրաստող և իրար հաջորդող այդ փուլերն անցնելով՝ մարդն աստիճանաբար բարձրանում է անգիտությունից դեպի իմաստություն, եզակի գոյերի ըմբռնումից դեպի համընդհանուր գոյի ճանաչում: Իսկ հոգու կենդանական հատկություններն են՝ կամքը, ընտրողությունը, հոժարությունը, ցանկությունը, ցասումը: Սրանք հիմք են հանդիսանում առաքինության ձեռքբերման համար, որն իրականացվում է կրքերի սանձահարման, այդ հինգ կենդանական հատկություններից երկուսի՝ ցանկության և ցասման, հաղթահարման միջոցով:

Անհաղթն առաջադրում է փիլիսոփայության վեց սահմանումներ, որոնք, ըստ նրա, տալիս են փիլիսոփայություն առարկային էության և նպատակի սպառիչ ըմբռնում՝ փիլիսոփայությունը գիտություն է Գոյի մասին, գիտություն է աստվածային և մարդկային իրերի մասին, հոգածություն է մահվան մասին, Աստծուն նմանվելն է, ըստ մարդկային կարողության, արվեստների արվեստն է և գիտությունների գիտությունը, փիլիսոփայությունը սեր է իմաստության հանդեպ: Փիլիսոփայության յուրացման և նրա սկզբունքների կիրառման շնորհիվ է, որ հնարավոր է ազատվել մեղքերից, հաղթահարել մահը և անմահանալ:

Դավիթ Անհաղթի փիլիսոփայական համակարգում հատուկ տեղ է գրավում բարոյագիտությունը: Որոշելով փիլիսոփայության նպատակը՝ Անհաղթը հիմնականում դրան տալիս է բարոյական ուղղվածություն: Գիտելիքը, չնայած իր կարևորությանը և անհրաժեշտությանը, օժանդակ դեր է խաղում: Այն օգնում է մարդուն հասնելու հոգեկան կատարելության, հնարավորություն է տալիս տարբերելու ճշմարիտը ստից, չարը՝ բարուց և խուսափել չարից: Իսկ դա անմիջականորեն ծառայում է այն գերագույն նպատակին՝ աստվածանմանությանը, ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելուն, որի համար էլ գոյություն ունի փիլիսոփայությունը: Աստված հոգում է բոլորի մասին: Չգտելով նմանվել նրան՝ մարդը նույնպես հոգատար պետք է լինի ուրիշների նկատմամբ, նպաստի, որ նրանք ազատագրվեն չարից ու հասնեն կատարելության, գիտության: Ըստ Անհաղթի՝ արդար մարդը երջանիկ է, եթե նույնիսկ նա չի հարգվում և անտեսվում է, իսկ չարը թշվառական է, նույնիսկ եթե հարգվում է: Եթե մարդը չլիներ, տիեզերքում ամեն ինչ անկատար կլիներ: Մարդը բնության և Աստծո միջնորդն է, կապակցող օղակը, աշխարհի փոքրագույն նմանակը: Մարդը կենդանական աշխարհի անբաժանելի մասնիկն է, նրա այն աստիճանը, որին հատուկ է բանականությունը: Ի տարբերություն կենդանիների, մարդու մեջ բանականության իշխանությունը ապահովում է հոգու բաղադրամասերի և առաքինությունների ներդաշնակությունը՝ առաջացնելով արդարությունը:

Ըստ ավանդության՝ Անհաղթը եկեղեցու համար հորինել է բազմաթիվ երգեր, սակայն նա ավելի հայտնի է երգերաժշտության վերաբերյալ իր տեսական ըմբռնումներով:

Անհաղթի փիլիսոփայությունն ուսումնասիրող մասնագետներից մեկն ասել էր. «Նա հայ մշակույթի պատմության մեջ խաղացել է նույն դերը, ինչ Արիստոտելը՝ համաշխարհային մշակույթի պատմության մեջ»:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՏՈՀՄԱՆՇԱՆՆԵՐԸ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ



Աղերսախառն մեկնաբանություն հայոց թագավորների տոհմանշանների:

Արիաբար բազում քաջություն անող մեր ազգը բարձրացնողդ Տիգրան, յոթնագլուխ վիշապ Աժդահակին սպանելը սեփական դարձնելով մեզ համար իբրև հատուկ նշան, արքնացի՛ր, արքնացի՛ր, մտավոր իմաստություն ունեցողդ և բերանումդ երկսայրի սուր կրողդ, և այնպես արա, որ ոչ միայն չառողջանա նրա մահացու վերքը, այլև՝ ողջանդամ ծծմբով այրվող հրե լիճը գցվի:

Բարեկարգված գեղեցկության հայոց աշխարհը համայն և թագավորությունը օրինադրող Արշակունիներ, արծվանման սլացքով հայրենիքի համար մարտի մրցակցության հաղթող պսակազարդ պայծառացուցիչներ, հատկապես միագլխանի արծվանիշ դրոշակով փառազարդված, արդ հիմա է ժամը, բարձրացրեք ձեր ձայնը և արծվի նման ընթացեք ձեր թևերը տարածելով՝ ժողովելու երկրի ծագերով մեկ ցրվածներին:

Տիրոջ խոսքով ցնծացող և սքանչելի ավար գտնողդ, անձնուրաց նախահավատ, պանծալիդ Աբգար, որ ընդունելով Տիրոջից փրկչական պատկերն ունեցող աստվածավայել սիրո թաշկինակն իբրև հատուկ նշան, հայոց ազգին շքեղազարդեցիր ի ցնծություն մեր սրտեր բարձրացնելու հաղթող նշան իբրև արդի ժամանակների և ապագայի, որպեսզի վերապրենք տիեզերական դատաստանից:

Լուսազարդ ճանապարհի նախաշավիղդ, հսկայազուն Տրդատ, սուրբ հոգուց մկրտությամբ ծնունդով հեզ գառ՝ Հովհաննես վերակոչված, Սիոն լեռան վրա Գառան նշանով կուռքերին ձոնված բագինները քաջությամբ կործանող, մեր ազգին թագազարդողդ, գազանի երկրպագուներին, որ նրա դրոշմն են կրում իրենց ճակատին, Աստծո և Գառի առջև հանդերձյալում տանջվելու և մեր անունները պատարագված Գառան կյանքի գրքում գրելու համար դու մաղթիր:

Արտաքուստ փոքր, բայց երկառույց հոգեկորով ապաստան գտած մեծամեծ քաջարիությամբ անհաղթ ավելի հզոր քան արքան գազանների, Ռուբինյանների աստվածատես որդիներ, որոնցից առաջինդ Լևոն պանծալի անունով կայսրերից պսակված, առյուծանշան տոհմանվամբ, իմաստուն թագավորներ, որ իբրև առյուծներ արիացաք ամբարիշտներին ցրելու, ում ոչ ոք չէր կարող հարություն տալ, բայց միայն նա, որ չի ննջում ու ոչ էլ քուն է մտնում՝ պահապանը Իսրայելի:

Արարատյան թագավորությանս բուն նշանակ հատկապես առանձին տեղիք պարծանքի, լեռդ Մասիս, լեռդ պարարտ և լեռդ օծված, ասա քո առջև կանգնած մեծամեծ լեռներին, դու որ ընդունողդ ես առհասարակ բոլոր շնորհների, թե զորապապերի ձեռքերը հիմքը դրեցին այս տան թագազարդ և նրա ձեռքերն են կանգնեցնելու սա, քանզի դու ես այն յոթնակնանին, որ նայում ես ամբողջ երկրին:

Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ, Յերուսաղեմ, Սրբոյ Յակոբեանց, 1871, էջ 331-332:

Թարգմանությունը՝
ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ

ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ - ԱՆԹԻԼԻԱՍ

«ՄԵԿ ազգ, մեկ եկեղեցի» կարգախոսը կյանքի կոչելու համար

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի բարձր տնօրինությամբ դեռ 2005թ. ստեղծել է երկկողմանի հանձնաժողով, որի նպատակն է քննարկել երկու կաթողիկոսությունների հակասությունները և նպաստել հայ եկեղեցու միասնականությանը:

Հանձնաժողովը նույն թվականի մարտին գումարել է իր առաջին նիստը և հանդես եկել հայտարարությամբ:

Հանձնաժողովում երկու կաթողիկոսությունները ներկայացված են չորսական մասնակիցներով: Ամեն կողմից ներկայացված են երկուական հոգևորական և աշխարհական: Ժողովն ատենապետում են Ամենայն հայոց կաթողիկոսությունից Տ. Խաժակ արք. Պարսամյանը, իսկ Կիլիկիո կաթողիկոսությունից՝ Տ. Օշական արք. Չոլոյանը:

2006թ. հունվարի 31-ին տեղի ունեցավ այդ հանձնաժողովի երկրորդ նիստը, որից առաջ հանձնաժողովի անդամներին ընդունել և իր հայրապետական օրհնությունն է տվել Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Իր հերթին Տ. Օշական արք. Չոլոյանը Արամ Ա կաթողիկոսի մաղթանքներն է հաղորդել պատվիրակությունների աշխատանքին:

Պատվիրակությունները «Հայ եկեղեցու վերանորոգության հրամայականը» թեմայի լույսի ներքո ճշտել են հետագա աշխատանքային գործնքացը: Նախորդ ժողովին ստեղծված և Վեհափառ հայրապետների կողմից հաստատված ուղեգծի համաձայն՝ ժողովականները հանգամանորեն մշակել են հետագա աշխատանքների ռազմավարությունը, ճշտել են ստեղծվելիք հանձնախմբերի թիվը և նրանց քննարկման բնագավառները:

ԽՆՁՈՐ

Կալախնձոր

Կալվորը գնաց Աստղիկ աստվածուհու մոտ ու ասաց.

- Արևի տակ օրնիբուն տանջվում եմ, որ մարդիկ ձմռանն ուտելու հաց ունենան: Սիրտս մեկ-մեկ խնձոր է ուզում, իսկ դու խնձորը հասունացնում ես այն ժամանակ, երբ կալերը վերջանում են:

Աստվածուհին ժպտաց և պատասխանեց.

- Գնա, այսուհետև կալվորներիդ խնձորը ժամանակին կհասնի:

Եվ Հայաստանում առաջինը սկսեցին ուտել փոքր փխրուն խնձորը, որ կոչվեց կալախնձոր, որովհետև հասնում է կալերի ժամանակ:

Արտամետի խնձորենիները

Աշխարհի ոչ այս ծայրում, ոչ էլ մյուս ծայրում այնպիսի անուշահամ ու բուրավետ խնձոր չեք գտնի, ինչպիսին կա Վանա լճի արևելյան ափին ընկած Արտամետ ավանում, որ մարդիկ անվանել են Վան քաղաքի խնձորաշատ մատույց:

Վանեցիները համոզված ասում են, թե Արտամետի խնձորի այգեստանը տնկել է Հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկը: Իբր նա է ծովից խխունջ հանել և աստվածային ուժով դարձրել խնձոր: Դրա համար էլ Արտամետի նրբակեղև ու փխրուն խնձորի մի մատ փորում կորիզները շարժվում են, շնկշնկոց հանելով, ինչպես ցամաք ընկած ծովային խխունջախեցին է նմանակում հսկա ծովի մռնչյունի արձագանքը:

Հայոց աշխարհում շրջագայելիս՝ Աստղիկը մի խնձոր է գցում իր ծոցը: Սիրահար Վահագնը առնում է խնձորի զգլխիչ բուրմունքը և վազում ու գտնում Աստղիկին: Աշխարհում ոչ մի խնձորի բուրմունք այնքան երկարակյաց չէ, որքան Արտամետինը: Դրա համար էլ ասում են՝ Վանի հարսանեկան սնդուկներում խնձորահոտը մնում է քառասուն տարի:

Աստղիկի ժամանակներից սկսած՝ խնձորը Հայաստանում դարձել է սիրո ցուցանիշ:

Խնձորեկ

Երբեմն խենթուխելառություն է անում նաև հայոց երկնքից իջնող կարկուտը: Այդպիսի բան արեց նա Երզնկայի դաշտի մի անկյունում ծվարած գյուղում: Ճղակտոր արեց ծառերն ու հասկերը գետին տապալեց: Բայց խնձորենուն չդիպավ: Շինականների այդ տարվա ապրուստը մնաց միայն խնձորը: Դրա համար էլ գյուղը կոչվեց Խնձորեկ:

Հայկական խնձորենին Ֆրեզնոյում

Ֆրեզնոյաբնակ Պերճ Պերճյանը, որպես ամերիկացի զբոսաշրջիկ, 1970 թվականին հասավ Վան և հետը Ֆրեզնո տարավ Արտամետի խնձորենու մի ոստ: Ֆրեզնոյում ոստն արմատակալեց, ծառ դարձավ և մի քանի տարի հետո սկսեց բերք տալ: Փխրուն, նրբակեղև, անուշաբույր ու քաղցրահամ խնձորներ էին: Պերճի ուրախությանը չափ չկար: Հայրենիքը կորցրած այս մարդու համար խնձորենին ասես հայրենիքի մի մասն էր դարձել:

Շուտով Ֆրեզնոյում բնակվող բոլոր վանեցիները իմացան Պերճի խնձորենու մասին և շտապեցին նրա մոտ: Պերճի խնձորը դարձավ մի թանկագին մասունք:

- Պերճ, քո խնձորենին Վանը հասցուց Ամերիկա: Ասիկա մեծ երջանկություն է ամենուս համար,- ասում էին տարագիր հայերը:

Հետո նրանց աչքերը արցունքոտվում էին, և խնձորը կուլ չէր գնում...

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Սոսյաց անտառ», 1988թ.

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Այս պատմութիւնը ինձի Տօքթ. Պարգեւ Պալըմեանը պատմած է, ես ալ հիմա ձեզի պիտի պատմեմ:

Կիլիկիոյ Սիս քաղաքի շրջակայ գիւղերէն վաճառական մը կու գայ Վենետիկ եւ կ'ուզէ Հայր Ալիշանին հետ տեսնուիլ: Ալիշանը, այդ այցելութենէն գոհ, վաճառականին կը հարցնէ:

-Ձեր գիւղին հանդիպակաց բլուրին մօտ գտնուող ձորին վրայ կամուրջ մը կայ, դեռ կանգո՞ւն է:

- Վարդապետ,- կ'ըսէ վաճառականը զարմացած,- քառասուն-յիսուն տարիէ ի վեր հոն կ'ապրիմ, բայց ոչ մէկ կամուրջի հանդիպած եմ: Կը սխալիք երեւի:

- Չէ, չէ,- կ'ըսէ Ալիշան,- հոն անպայման կամուրջ մը ըլլալու է, երբ որ երթաք, ստուգեցէք:

«Ցնդա՞ծ է, ի՛նչ է,- կը խորհի վաճառականը,- յիսուն տարուան մարդուս իմ գիւղս կը սովորեցնէ»:

Վաճառականը, երբ Կիլիկիոյ իր գիւղը կը վերադառնայ, կը տեսնե, որ թուփերուն մէջ քանդուած կամուրջի մը հիմերը կան, եւ Հայր Ալիշանին խօսքերը կը յիշէ:

Տարիներ վերջ վաճառականին ճամբան վերստին Վենետիկէն կ'անցնի: Կու գայ Հայոց վանք, եւ հայր Ալիշանի քովը կ'ելլէ, ծունկի գալով կ'ըսէ.

- Ձգէ, ձգէ, որ քու ոտքերդ համբուրեմ. դուն մեծ մարդ ես...

- Ի՞նչ եղաւ,- կ'ըսէ Ալիշանը զարմացած:

- Չե՞ս յիշեր զիս, ո՜վ մեծ Վարդապետ, գացի, նայեցայ եւ քու ըսած կամուրջը տեսայ, թէեւ միայն հիմերը կային, բայց դուն ճիշտ էիր, ժամանակին հոն կամուրջ մը եղեր է:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ
Պոլսահայոց բանահիւսութիւնը, 2000թ.

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Դեռևս շատ-շատ վաղուց, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ճապոնիայում և այլ երկրներում, մարդիկ, ինչ-որ գործ ձեռնարկելիս՝ բերք ցանելիս, որսի դուրս գալիս, հարևան տոհմի կամ երկրի հետ պատերազմելիս, հաջողություն ունենալու ակնկալիքով դիմել են աստվածներին: Նրանք հավատում էին, որ աստվածներն ամենուր են՝ գետերում և ծովերում:

Եվ երբ փոթորիկ էր բարձրանում, շանթում էր կայծակը, հեղեղ էր տեղում, մարդն անզոր էր պայքարել առեղծվածային և զորեղ բնության դեմ՝ նա մոգական ուժերից իր կյանքի փրկությունն էր աղերսում՝ հաճախ զոհաբերելով կենդանիների և անգամ իրեն հարազատ մարդու:

Ըստ ճապոնական սինտոական դիցաբանության՝ շատ-շատ վաղուց, երբ դեռ երկիրը չէր ձևավորվել, երկնքում ապրում էին աստվածները, որոնք կոչվում էին Երկնային աստվածներ: Նրանք պատկանում էին աստվածների ամենաբարձր դասին: Այնուհետև, ավելի ցածր դիրք էին զբաղեցնում Երկրային աստվածները, որոնց ուժի գոյությունն արտահայտվում էր բնության տարերքների և այլ երևույթների միջոցով:

Ըստ ճապոնական դիցաբանության՝ Երկնային աստվածները երեքն են՝ Ամե նո Մինականուսին, Տակամիմուսուբին և Կամիմուսուբին: Ի տարբերություն մյուս աստվածների, որոնք զույգերով են հանդես գալիս, այս երեք աստվածները չունեն սեռ և որևէ արտաքին հատկանիշներ: Այս Եռյակից հետո հանդես են գալիս չորս միայնակ աստվածներ: Այնուհետև ծնվում են հինգ զույգ աստվածներ: Հինգերորդ զույգը շատ կարևոր տեղ է զբաղեցնում ճապոնական դիցաբանության մեջ: Նրանք են՝ ամուսիններ Իձանակին և Իձանամին:

Երբ ծնվեցին Իձանակին և Իձանամին, «երկիրը դեռ դուրս չէր եկել իր մանկությունից»՝ հալված յուղի նման հոսում էր ծովի ալիքներով: Այդ պատճառով Երկնային աստվածներն այդ զույգին հանձնարարում են Երկրի արարման գործը: Ըստ դիցաբանության՝ նրանք կանգնում են «երկրային հեղեղի» տակ գտնվող կամրջի վրա և Երկնային աստվածներից ստացված նիզակով սկսում են հեղուկը խառնել: Այնուհետև, երբ բարձրացնում են նիզակը, նրանից աղի կաթիլ է ընկնում հեղուկի մեջ, և հեղուկը կարծրանում է, որից էլ ձևավորվում են Ճապոնական կղզիները:

Այս գործողությունից հետո սիրային երկխոսությամբ տեղի է ունենում Իձանակիի և Իձանամիի հարսանեկան ծիսակատարությունը: Սակայն երկխոսությունը հակառակ արտաբերելու պատճառով նրանց երեխաները թերի են ծնվում: Իձանակին և Իձանամին կրկին ամուսնանում են, այս անգամ՝ բարեհաջող, և ահա ծնվում են Ճապոնական կղզիները և ոգի-աստվածները, որոնք էլ բնակություն են հաստատում կղզներում: Ամենավերջում ծնվում է կրակի աստված Կագուցուծին: Երբ նա ծնվում է, Իձանամին այրում է կուծքը և մահանում: Նա գնում է անդրշիրիմյան թագավորություն, որը կոչվում է Յոմինոկունի: Իձանակին մնում է միայնակ և ծնում է բազում աստվածներ: Վերջում ծնվում են երեք գլխավոր աստվածներ:

Ճապոնական աստվածները և՛ նման են հայ հեթանոս աստվածներին, և՛ տարբեր:

Ըստ հին հայկական դիցաբանության՝ երկիրն ու երկիրը արարել է Արամազդը: Ի տարբերություն ճապոնական դիցաբանության՝ հին հայերի ամենագլխավոր աստվածը Արամազդն էր, և նրանից առաջ աստվածներ չեն եղել: Արամազդը երկնքի և երկրի արարիչն էր, բոլոր աստվածների հայրը: Արամազդը, ինչպես Իձանակին և Իձանամին, ծնել է հին հայկական երեք գլխավոր աստվածներին:

Ճապոնական երեք գլխավոր աստվածներն են՝ արևի աստվածուհի Ամատերասուն, լուսնի աստված Ցուկույոմին և փոթորկի աստված Սուսանոոն:

Հին հայկական երեք գլխավոր աստվածներն են մայրության, բերքի և պտղաբերության աստվածուհի Անահիտը, սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը և արևի աստված Միհրը:

Անահիտը մայր աստվածուհին էր: Նա կոչվում էր «Մեծն տիկին Անահիտ», բոլոր տեսակի խոհեմությունների և պարկեշտությունների մայր, մարդկանց բարերար, հայ ժողովրդին պահող և փառաբանող: Հավատում էին, թե նրա շնորհիվ միշտ եղել է, կա, ու գոյություն կունենա Հայոց աշխարհը: Հայ թագավորները, որևէ գործ ձեռնարկելիս, Մեծն տիկին Անահիտից էին հովանավորություն և առողջություն հայցում:

Ամատերասուն՝ արևի աստվածուհին, համարվում է ճապոնիայի մայր աստվածուհին, քանի որ Ճապոնիան ծագող արևի երկիր է: Ամատերասուն, ինչպես Անահիտը, համարվում է Ճապոնիայի կայսրերի նախամայրը և հովանավոր աստվածուհին: Ամետերասուն հանդես է եկել նաև որպես քրմուհի, և ըստ հին ճապոնացիների հավատքի՝ քրմուհիները համարվել են աստվածների կանայք: Այստեղից եզրակացություն, որ առաջ գոյություն է ունեցել տղամարդ արևի աստվածը, և Ամատերասուն համարվել է նրա կինը: Հետագայում այդ երկուսը միաձուլվել են և դարձել մեկ պաշտամունքի առարկա:

Հին հայկական արևի աստվածը Միհրն էր:

Ճապոնական դիցաբանության մեջ Իձանակիի որդի Սուսանոոյի կերպարը մի քանի աստվածների մարմնացում է: Նա հանդես է գալիս որպես ժլատ, չար արարքներ գործող աստված:

Ըստ ավանդույթի՝ Իձանակին իր կարողությունը բաժանում է երեք զավակների միջև և Սուսանոոյին է տալիս ծովը: Սուսանոոն դժգոհ մնալով՝ սկսում է բարձրաձայն հեկեկալ այնքան, մինչև մորուքը երկարում-հասնում է կրծքին, իսկ նրա լացից կանաչ լեռները չորանում են, ծովերն ու գետերը՝ ցամաքում: Իձանակին բարկանում է և Սուսանոոյին վտարում անդրշիրիմյան աշխարհ՝ Յոմի նո Կունի: Հուսահատված Սուսանոոն որոշում է հրաժեշտ տալ քրոջը՝ Ամատերաուունին և հենց այդ ժամանակ առաջարկում է նրան միասին երեխաներ ունենալ: Արդյունքում ծնվում են շատ աստվածներ ու աստվածուհիներ: Այս իրադարձությունից չափից ավելի ուրախանալով և

ոգևորվելով՝ Սուսանոն իրեն թույլ է տալիս այնպիսի արարքներ, որոնք հին Ճապոնիայում կարող էին դասվել «ութ մեղքերի» թվին. ավերում է Ամատերասուիի մշակած հողերը, ապականում է սրբատեղիները: Այդ պատճառով Սուսանոն համարվում է փոթորկի աստված: Մյուս կողմից նա հանդես է գալիս որպես խիզախ հերոս, որը փրկում է մարդկանց ութ գլխանի և ութ պոչանի հրեշից: Սակայն աստվածները չեն ներում Սուսանոոյին իր հասցրած վնասների համար և վտարում են Յոմի նո Կունի: Այդ պատճառով Սուսանոն համարվում է նաև անդրշիրիմյան աստված:

Հին հայերի Ստորերկրյա թագավորության աստվածն էր Սպանդարամետը, որը հաճախ նույնանում էր ստորգետնյա աշխարհի, մեռելների թագավորության կամ ուղղակի դժոխքի հետ:

Հին հայկական դիցաբանության մեջ նշանակալի տեղ է զբաղեցնում Վահագն աստվածը: Նա ծնվելուն պես կռվի է բռնվում սև, ամեհի վիշապների դեմ. ինչպես Սուսանոն, սպանում է նրանց, ազատում տիեզերքը կործանման սպառնալիքից: Ըստ ավանդության՝ ամպրոպի ժամանակ երկրի անդունդից վիշապներ են դուրս գալիս, երկինքն ու երկիրը ամբողջովին մթագնում է, իսկ երկնքի ջրերը՝ ցամաքում: Վահագնը խիզախորեն կռվում է, սպանում նրանց և ազատում արևին ու երկնքի ջրերը: Արևը կրկին սկսում է լուսավորել աշխարհը, իսկ երկնքի ջրերը վերածվում են անձրևի և կաթիլ առ կաթիլ թափվում երկրի վրա:

Ի տարբերություն Սուսանոոյի, Վահագնը շատ խիզախ և ժողովրդի կողմից շատ սիրված աստված էր, որից թագավորներն ու զորավարները քաջություն էին աղերսում: Վահագնին հետագայում ժողովուրդը մարդեղենացրել է և դարձրել իր սիրած և մեծարած Տիգրան Մեծ թագավորի երրորդ զավակը:

Վահագնի տարփածուն էր Աստղիկ դիցուհին՝ հայոց սիրո և ջրի աստվածուհին: Աշտիշատում գտնվող նրա տաճարը կոչվում էր «Վահագնի սենյակ», ուր Աստղիկը հանդիպում էր իր սիրած Վահագնին: Աստղիկի և Վահագնի ամուսնությունը համարվում էր սրբազան. այդ ամուսնության հետևանքով անձրև էր տեղում երկրի վրա, ծաղկեցնում երկիրը, բերք ու բարիք տալիս մարդկանց:

Ըստ ավանդության՝ Աստղիկը սիրում էր երեկոյան ժամերին լողալ Եփրատ գետում: Նրա սիրով տարված երիտասարդ տղաները սարի վրա գիշերները խարույկներ էին վառում, որպեսզի դրանց լույսի տակ կարողանային տեսնել Եփրատում լողացող դիցուհուն, հիանալ նրա չքնաղ գեղեցկությամբ: Բայց Աստղիկը ամեն գիշեր դաշտը մշուշով էր պատում, որպեսզի իրեն ոչ մի օտար աչք չկարողանար տեսնել: Այդ պատճառով էլ այդ տարածքը կոչվեց Մուշ:

Վարդավառը նվիրված է Աստղիկ աստվածուհուն, քանի որ նա համարվում է նաև ջրի աստվածուհի: Այդ տոնակատարության ժամանակ Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավնիներ թռցնում, և սիրահարները իրար վրա ջուր էին ցողում և ուրախանում:

Ըստ ճապոնական դիցաբանության՝ Տա նո Կամի կոչվող բրնձի դաշտի աստվածը Աստղիկ աստվածուհու նման հանդես է գալիս նաև որպես ջրի աստված: Դա պայմանավորված է նրանով, որ բրնձի հարուստ բերք ստանալու համար մեծ քանակությամբ ջուր է հարկավոր: Բրնձի դաշտի աստծո տոնակատարությունը կատարվում է մայիս ամսին՝ բերքահավաքի ժամանակ: Հնում մարդիկ Տա նո Կամիին մարդկային զոհաբերություններ են կատարել. լիառատ բրնձի դաշտում ողջ-ողջ թաղել են երիտասարդ աղջիկների: Սակայն, հետագայում այդ սովորույթը վեր է ածվել զուտ խորհրդանշական արարողության: Այժմ աղջիկներին պատում են բրնձի դաշտից վերցված ցեխով:

Հին հայերի համաժողովրդական սիրո և ճանաչման արժանացած աստվածներից մեկն էր Ամանորը: Ամանորը, որ հին հայերենում նշանակում է նոր տարի, հին հայերի նոր տարին անձնավորող աստվածն էր և համարվում էր «Նոր պտուղների ամենաբեր»: Նրա տոնն ու պաշտամունքը կատարվում էր հայոց նոր տարվա օրերին՝ նավասարդին, որ հայոց հին տոմարով համընկնում էր հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին, երբ հասունանում էին նոր մրգերն ու պտուղները: Ճապոնական դիցաբանության մեջ ևս գոյություն ունի նոր տարվա աստված, որը կոչվում է Օ տոսի նո Կամի: Նա նույնպես համարվում է բերքատվության աստված:

Իրարից այդքան հեռու, շատ տարբեր, բայց շատ հարուստ մշակույթ ունեցող երկրներ, տարբեր հավատալիքներ, կրոն, սովորույթներ..., բայց միևնույն ժամանակ որոշակի հատկանիշներով նման աստվածներ: Հետաքրքիր է, այդպես չէ՞:

ՄԵԼԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ

15 երկների համալսարանականների ու հոգևորականների մասնակցությամբ հունվարի 28-ին Հնդկաստանի Կոտայամ քաղաքի Եփրեմի էկումենիկ գիտահետազոտական ինստիտուտում կայացած «հայկական օրեր» խորագրով համաժողովում ներկայացվել են «Հայկական մանրանկարներ և բյուզանդական սրբապատկերներ» թեման, հայ մանրանկարչությունն ընդհանրապես և հայ-հնդկական հարաբերությունների ակունքները: Ելույթ ունեցողները կարևորել են հին լեզուները՝ առանձնացնելով հայոց լեզվի ուսուցումը:

Մինսկի Բարեկամության տանը հունվարի 31-ին հայ գրականությանը նվիրված գրական-երաժշտական երեկո է կազմակերպել Բելառուսում ՀՀ դեսպանությունը:

Ն. Պ.

ՀԱՅՈՑ ԱՌՆՉՎԱԾ ԱՐԱԲԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2003-2005ԹԹ.

Վերջին տարիներին արաբ ընթերցողի մոտ մեծացել է հետաքրքրությունը հայերի նկատմամբ: Դրա արտահայտություններից են իրար հաջորդող արաբերեն հրատարակությունները:

Հատկանշական է, որ արաբերեն հրատարակությունների մի մասը ուրիշ լեզուներից թարգմանություններ են, սակայն կան այնպիսիք, որոնք հեղինակվել են հենց արաբերենով, ընդ որում՝ վերջիններիս մի մասի հեղինակները հայեր են, իսկ որոշ մասինը՝ արաբներ: Քաղաքական տեսակետից, հատկապես, մեծ նշանակություն ունեն ամենավերջին դասի մեջ մտնող հրատարակությունները:

Մեր կատարած ոչ խորը ուսումնասիրությամբ հանգել ենք այն եզրակացության, որ միայն Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին արաբերեն հրատարակությունների ցուցակը գերազանցում է 125 անունը:

Ստորև շատ սեղմ կներկայացնենք մի մասը հայոց առնչված արաբերեն այն հրատարակությունների, որոնք լույս են տեսել 2003-2005 թվականներին (նկատի ունենք այն հրատարակությունները, որոնք կամ անհայտ են հայրենի ընթերցողին, կամ էլ քիչ հայտնի): Դրանք դասակարգել ենք երկու խմբում.

1. Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանության վերաբերող հրատարակություններ.

- Բաղդադում, 2003թ. սահմանափակ տպաքանակով լույս է տեսել Նաջլաա Ադնան Հասան ալ-Ուքեյլիի մագիստրոսական ատենախոսությունը՝ «Ալ-Դաուլա ալ-Օսմանիյյա ուալ-մուշքիլա ալ-արմանիյյա 1894-1916» («Օսմանյան տերությունը և Հայկական հարցը 1894-1916թթ.») խորագրով:

- Կահիրեի «Դար ալ-Բուստան» հրատարակչությունից և տեղի «Նուպար» տպարանից 2004թ. լույս է տեսել եգիպտացի արաբ վիպագիր Մուհամմադ Գիբրիլի «Սայդ ալ-Ուսարի» («Փոշեթաթախ որս») վեպը, որտեղ հեղինակը զուգահեռներ է տանում հայկական և պաղեստինյան ազգային հարցերի միջև:

- Սիրիական աշխարհագրական ընկերությունը Դամասկոսում 2004թ. լույս է ընծայել, ավելի շուտ՝ վերահրատարակել է դոկտ. Ավետիս Կարապետ Սանջյանի 1956թ. Միչիգանի համալսարանում պաշտպանած մագիստրոսական ատենախոսությունը՝ «Լիուաա ալ-Իսկանդարունա - Դիրասա ֆիլ-ալաքաթ ալ-ֆարանսիյյա-ալ-թուրքիյյա-ալ-սուրիյյա» («Աղեքսանդրետի սանջակը. ֆրանսա-թուրքա-սիրիական հարաբերությունների մասին հետազոտություն») խորագրով: Տեղին է նշել, որ այս աշխատությունը արաբերենով առաջին անգամ լույս է տեսել 1980թ., Դամասկոսում, «Ռազմական հետազոտությունների կենտրոնի» կողմից, 239 էջ ծավալով և, որպես ներքին օգտագործման դասագիրք, շրջանառվել Սիրիայի Ռազմական ակադեմիայում:

-Դամասկոսի «Դար էլ-Յանաբիի» հրատարակչությունից 2005թ. լույս է տեսել լիբանանահայերին և լոնդոնահայերին ծանոթ հայրենակից Իսրայել Վահան Փիլիկյանի «Ալ-Շահեդ ալ-ախիր լիլ-մազաբեհ ալ-արմանիյյա» («Հայկական ջարդերի վերջին վկան») հուշերը, որոնք հավաքել և կազմել է սիրիացի արաբ հեղինակ դոկտ. Ահմադ Հասան Սբանոն:

-Բեյրութում, «Համազգային»-ի «Վահե Սեթյան» տպարանում 2005թ. լույս է տեսել դոկտ. Սեդա Քիլեջյանի «Շահադաթ նաջին» («Փրկվածների վկայություններ») գիրքը, որը արաբերեն է թարգմանել պատմագիտության թեկնածու, դամասկոսաբնակ Նորա Արիսյանը:

-ՀՅԴ Զավարյան ուսանողական միության Ռազմավարական հետազոտությունների հանձնախումբը Բեյրութում, 2005թ. լույս է ընծայել թուրք-իսրայելական հարաբերություններին նվիրված նյութերի մի հավաքածու՝ «Ալ-աալաքաթ ալ-թուրքիյյա ալ-իսրաիլիյյա. մին ալ-սիրր իլալ-աալան 1948-2002» («Թուրք-իսրայելական հարաբերությունները. գաղտնիությունից բացահայտում 1948-2002թթ.») խորագրով:

- 2005թ. վերջին օրերին, «Հայկա-

կան ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչման Լիբանանի կեդրոնական մարմինը» Բեյրութում լույս ընծայեց ԱՄՆ-ի հայկական «Կալիֆոռնիա կուրրիեր» թերթի խմբագիր Հարութ Սասունյանի հավաքած ու կազմած և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը վերաբերող նյութերի հավաքածուն՝ «Ալ-իբադա ալ-արմանիյյա. իիթիրաֆ ալ-ալամ ալամանան 1915-2005» («Հայոց ցեղասպանությունը. աշխարհի ճանաչումը 1915-2005թթ.») խորագրով: Նշենք, որ նույն տարվա մայիս ամսին, նույն մարմինը Բեյրութում հրատարակել էր այս նյութերի անգլերեն բնօրինակը: Անգլերենից արաբերեն է թարգմանել պատմագիտության թեկնածու Նորա Արիսյանը:

2. Հայոց առնչվող արաբերեն այլ հրատարակություններ.

- «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ 2003թ., Հալեպում լույս տեսավ վաղամեռիկ արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանի «Ալ-իմարաթ ալ-արաբիյյա ֆի Արմինիա ալ-Բագրադունիյյա» («Բագրատունյաց Հայաստանի արաբական իշխանությունները») ուսումնասիրությունը: Հայերեն բնագրից թարգմանել է Արաբ գրողների միության անդամ Ալեքսանդր Քեշիշյանը:

- Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա էմիրության Տեղեկատվության և մշակույթի տնօրենությունը 2004թ. լույս ընծայեց պատմագիտության դոկտոր, ԱՄԷ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի «Սաֆահաթ մին թարիխ ալ-ալաքաթ ալ-արմանիյյա-ալ-արաբիյյա» («Էջեր հայ-արաբական առնչությունների պատմությունից») պատմագիտական արժեքավոր աշխատությունը:

- Բեյրութում սահմանափակ տպաքանակով 2004թ. լույս է տեսել Ռիտա Պերճ Խաչատուրյանի իրավագիտության հատուկ դիպլոմային ատենախոսությունը՝ «Ալ-ահուալ ալ-շախսիյյա լի-թաիֆաթ ալ-արման ալ-օրթոդոքս» («Հայ առաքելական համայնքի անձնական իրավունքը») խորագրով: Հեղինակը ատենախոսությունը պաշտպանել է նույն թվականին՝ Բեյրութի արաբական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Այս գիրքը առ այսօր լիբանանահայության անձնական իրավունքին վերաբերող արաբերեն միակ աշխատությունն է:

- Քուվեյթի համալսարանի հրատարակած «Ռազմավարական և ապագայի ուսումնասիրություններ» մատենաշարի 5-րդ՝ 2004թ. հոկտեմբերի նշումը կրող համարը ամբողջությամբ հատկացվել է միջազգային հարաբերությունների մասնագետ Պողոս Մարտիրոսյանի «Քուեյթ ուա Արմինիա. ալ-մասիր ալ-մուշթարաք լիլ-դուալ ալ-սաղիրա ֆիլ-աալաքաթ ալ-դուալիյյա» («Քուվեյթը և Հայաստանը. փոքր պետությունների ընդհանուր ճակատագիրը միջազգային հարաբերություններում») ուսումնասիրությունը: Նույնը լույս է տեսել նաև անգլերենով՝ մատենաշարի՝ նույն թվականի նշումը կրող անգլերեն տարբերակում:

- Կահիրեի «ալ-Ահալի» և Դամասկոսի «Դար ալ-Ուաթանիյյա» հրատարակչություններից 2005թ. գրեթե միաժամանակ լույս տեսավ հայրենի արաբագետ, նախկին հայրենադարձ, ներկայումս Բեյրութում հաստատված Եղիա Նաջարյանի «Ալ-Նահդա ալ-քաումիյյա-ալ-սաքաֆիյյա ալ-արաբիյյա» («Արաբական ազգային-մշակութային զարթոնքը») խորագրով գիրքը, որը հայերեն բնագրով լույս էր տեսել Երևանում, 1988թ.: Արաբերեն է թարգմանել արաբագետ, դոկտ. Պողոս Սարաջյանը: Զուգահեռ հրատարակությունների մեկենասն է դամասկոսահայ բարերար Վարուժան Սալաթյանը:

- Արաբ գրողների միության (Սիրիա) օրգան «Ադաբ աջնաբիյյա» («Օտար գրականություն») հանդեսի «2005թ. ամառ» նշումը կրող համարը, որը լույս է տեսել հոկտեմբերի վերջին, Դամասկոսում, ամբողջությամբ նվիրված է հայ գրականությանը: Համարը պատրաստել է անցյալ տարի հիմնված «Սուրիահայ գրողներու համախմբումը» (արժե ավելացնել, որ հոկտեմբերի նույն օրերին լույս տեսավ համախմբումի «Երթ» տարեգրքի առաջին համարը):

- Վերջին երկու տարիներին երկու կարևոր հրատարակություններ էլ լույս են տեսել Հորդանանի մայրաքաղաք Ամմանում: 2004թ. լույս աշխարհ եկավ Ռազմիկ Սիմոնյանի «Ալ-արման ֆի բիլադ ալ-արաբ» («Հայերը արաբական երկրներում») գիրքը:

-Իսկ 2005թ. Ամմանի «Դար ուարդ» հրատարակչությունից հորդանանյան «Ալ-Ահալի» բանկի հովանավորությամբ լույս տեսավ ընկերաբան (սոցիոլոգ) Արդա Վրեժ Կարապետյանի «Ալ-արման ալ-օրդոնիյյուն. ալ-ուաքեի ալ-իջդիմաիի ուալ-հաուիյյա» («Հորդանանահայերը. սոցիալական վիճակը և ինքնությունը») սոցիոլոգիական, էթնոմշակութային և էթնոմշակութաբանական հույժ կարևոր ուսումնասիրությունը:

Այս հոդվածի համար հիմնական աղբյուր է ծառայել Բեյրութում լույս տեսնող «Սփիւռք» պարբերականը:

ԳԵՎՈՐԳ ՅԱՔԸԵՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Կիլիկիայի հարավ-արևելքում՝ Մարաշ-Հալեպ ուղեգծի վրա, Եփրատ գետի վտակ Սարուջի ափին է գտնվում Այնթապը: Քաղաքը փռված է դաշտածև բարձրադիր հովտում, շրջապատված է կրաքարային, կավճային և մարմարի կազմություն ունեցող բլուրներով: Ունի գեղեցիկ դիրք, առողջարար, ցամաքային կլիմա, խմելու և ոռոգման առատ ջուր: Այնթապը հայտնի է ընտիր խաղողով, ծիրանով, խնձորով, ընկույզով և այլ պտուղներով, այստեղ մշակվել է հացահատիկ և բամբակենի: Այն հռչակված էր որպես առևտրաարհեստավորական կենտրոն. արտադրվող և արտահանվող ապրանքների մեջ կարևոր տեղ են գրավել ծխախոտը, չամիչը, դոշաբը, օղին, բամբակե գործվածքները:

Այնթապը հին բնակավայր է, նրա մասին առաջին պաշտոնական տեղեկությունները հաղորդել են խաչակիրները (11-12-րդ դդ.), ովքեր այստեղ կառուցել են ամուր բերդ և այն դարձրել են իրենց ռազմական հենակետը: Հայերը քաղաքի տնտեսական ու ռազմական կարևոր տարրն էին:

Խաչակիրներն այստեղ գտան հայկական կազմակերպված մի գաղութ: Միջին դարերում Այնթապը մտնում էր Եդեսիայի կոմսության մեջ, հետո անցել է Փիլարտոսի, ապա՝ Կիլիկիայի հայոց իշխան Գող Վասիլի ձեռքը: Սակայն հույն կայսրերը և խաչակիրները մեկիկ-մեկիկ ոչնչացրեցին Եփրատի շրջանում հաստատված փոքրիկ հայ իշխանություններին: Գող Վասիլը ևս դարձավ նրանց ընչաքաղցության զոհը: 1140-ին Այնթապը Ճոսլին իշխանի ձեռքում էր, որի վրա 1152-ին հարձակվում է Հալեպի Նորետտին սուլթանը և առանց դժվարության գրավում է այն: Երկար ժամանակ Այնթապը նրա իշխանության տակ էր: Եվ այդ ընթացքում հայերը խաղաղ էին ապրում: 1266թ. Կիլիկիայի Հեթում 1-ին թագավորը երկու անգամ անհաջող փորձ է արել Այնթապն ազատագրելու համար: 14-15-րդ դդ. այն գրավել են եգիպտացիները: 1404-ին քաղաքն ավերվել է Լենկթեմուրի կողմից: Այնթապը 1516-ին գրավել են թուրքերը: Այնտեղ, դեռևս հին ժամանակներում, զգալի թիվ են կազմել հայերը, որոնք զանգվածաբար Այնթապ են տեղափոխվել սկսած 14-րդ դարից Հայաստանի և Փոքր Հայքի տարբեր շրջաններից (Մուշ, Մալաթիա, Մարաշ, Բեհեսնի, Ադյաման, Բիրեջիկ, Ուրֆա): 18-րդ դարում Մարաշի գավառի մեջ մտնող Այնթապը շրջապատված է եղել ավելի քան 100 հայաբնակ գյուղերով:

1822-ին երկրաշարժից Այնթապի բերդն ավերվել է:

Ոմանք գտնում են, որ քաղաքը այդպես են անվանել Ալաշկերտի հովտի Այնթապ բնակավայրից ներգաղթած հայերը: 19-րդ դարի վերջերին Այնթապն ուներ 43.000 բնակիչ, որից 16.900-ը հայեր: 20-րդ դարի սկզբներին Հալեպի նահանգի համանուն գավառի Այնթապ գավառակի կենտրոնն է եղել՝ ունենալով 50.000 բնակիչ (մոտ 36.000 հայեր էին): Հայերի հիմնական զբաղմունքը առևտուրն ու արհեստագործությունն էր. ոսկերիչների, որմնադիրների, ներկարարների, կաշեգործների, գորգագործների մեծ մասը հայեր էին: Հայ կանանց նուրբ ու ճաշակով ասեղնագործությունները հայտնի էին հատկապես Եվրոպայում ու ԱՄՆ-ում: Մինչև 1915թ. Այնթապում կար հայկական վեց եկեղեցի, 17 ուսումնարան, դպրոց ու վարժարան (1870-80-ական թվականներին այստեղ հիմնվել ու գործել են Վարդանյան, Մեսրոպյան սանուց և Ադենական որբախնամ դպրոցները, Հայկանուշյան, Այդինյան, Հոխիսիմյան վարժարաններն ու «կեդրոնական թուրքիո կոլեջը», 1912-ին հիմնվել է Կիլիկիայի ճեմարանը): Այնթապում հրատարակվել են «Եճի Յոմուր» և «Հագիգաթ» հայատառ թուրքերեն թերթերը: 1886թ. Վարդանյան կրթարանը հրատարակում էր «Մենտոր» կիսամյա հանդեսը՝ հայերեն և թուրքերեն լեզուներով:

Այնթապի հայերը բարեկազմ, գեղեցկադեմ, ուրախ ու զվարթ մարդիկ էին: Նրանք 1915-ին տեղահանվեցին, քշվեցին Դեր Զորի անապատ և զանգվածաբար կոտորվեցին: 1918-ին մազապուրծ այնթապցիները վերադարձան հայրենի քաղաք, բայց շուտով իմպերիալիստական տերությունների կողմից կրկին մատնվեցին բախտի քմահաճույքին: 1920-21թթ. այնթապցիները 314 օր հերոսական ինքնապաշտպանական մարտեր մղեցին թուրք ջարդարարների դեմ: Կենդանի մնացածները տարագրվեցին Սիրիա, Լիբանան, ԱՄՆ, նրանց մի մասը հետագայում հայրենադարձվեց Սովետական Հայաստան:

Այնթապում է ծնվել բանաստեղծ, Կիլիկիայի կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը (1868-1936թթ.):

Կիլիկիայի ծաղկուն այս քաղաքն վերանվանվել է Դազիանթեպ, որը համանուն վիլայեթի կենտրոնն է:

Հայաստանի Հանրապետությունում Այնթապ անունը այժմ կրում է Արարատի մարզի Մասիս քաղաքի նախկին Թազագյուղը:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՂՅԱՆ

ՎԱՆԱ ԿԱՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է

Վանա կատուն իրավամբ համարվում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներից մեկը (10-12 հազար տարի): Կատվի այս տարատեսակը գրանցված է Կարմիր գրքում՝ որպես հազվագյուտ և անհետացող տեսակ:

Փափկամազ, արտակարգ գեղեցիկ, կապտականչավուն աչքերով, ինչպես Վանա լճի կապուտակ ջուրը: Նա կատվազգիների միակ ներկայացուցիչն է, որ սիրում է լողալ:

Պարզվում է, որ վանեցիները նրան իրենց հետ ձկնորսության էին վերցնում: Սուզվելով՝ նա իր տիրոջ համար ձուկ էր բերում խորքերից: Մինչև վերջին ժամանակները Հայաստանում ոչ մի հատ Վանա կատու չկար: Առաջին նմուշները Հայաստան բերեց Կարեն Մանվելյանը: Էգի անունը Արփի է, իսկ արուինը՝ Սիփան: Նրանցից և նրանց սերունդներից՝ Վանից և Սևանից, ծնվեցին սերունդներ, որ այժմ էլ աճում են և բազմանում, ուախությամբ հայտնեց Կարենը: Վանա կատուների սելեկցիան Հայաստանում սկսված է:

ԼԵՎ ՕԳԱՆԵՋՈՎ

ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ՎԱՆ, ՄԻՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԴՐԱԽՏ

Ուխտագնացութիւն դէպի Վան Սրբազանի 1997 թուականի ուխտագնացութենէն.

Յետոյ Վան գացինք, քանի մը օր անցուցինք Վասպուրական աշխարհը: Անշուշտ, Վանը ինծի անծանօթ չէ, Այգեստանը, Վան քաղաքը…: Պեյրութէն չեմ գիտեր, սակայն անպայման Նիւ Եորքէն շատ աւելի գիտէի Վանը: Վանն անծանօթ չէր, սակայն աւերակ էր: Տխուր էր հին քաղաքը: Յետոյ գացինք Շուշանց, յետոյ՝ Վարագայ վանք: Ամենածանր վայրկեաններէն մէկը այնտեղ էր. եկեղեցին գոմի վերածուած էր, երկու-երեք կամար մնացած էր: Բայց երբ կառքը շրջադարձ ըրաւ եւ յանկարծ նորակառոյց մզկիթ տեսանք, ահաւոր ցնցուեցանք, եկեղեցիէն մէկ մեթր այն կողմ, գրեթէ անոր փակած, մզկիթ մը բարձրացած է:

Կարեւոր թիւեր Վանայ նահանգի մասին. Վանայ նահանգին 450 գիւղերը, Կ. Պոլսոյ պատրիարքարանի 1913-14թթ. վիճակագրութեան համաձայն, ունէին 457 եկեղեցի եւ վանք: Միայն Վան քաղաքին եւ Այգեստանին մէջ 1914-ին կային 7 եկեղեցիներ՝ Սբ. Նշան, Պօղոս-Պետրոս, Սբ. Աստուածածին, Սբ. Վարդան, Սբ. Ծիրանաւոր, Սբ. Սահակ եւ Առաքելոց: Վասպուրականը եղած է մեր ձեռագրական մշակոյթի ամենամեծ կեդրոններէն մէկը: Ձեռագիրներու ընդօրինակման նշանաւոր կեդրոններ էին Կտուցի, Լիմի, Վարագի, Մեծոփի եւ յատկապէս Աղթամարի վանքերը: Յիշատակարանի մը համաձայն՝ Լիմի մէջ կը պահուէր 3.124 ձեռագիր:


Վան՝ Խաչ փողոց

Ըստ Ալեքսանդր Երիցեանի՝ 1876թ. Վան քաղաքը ունէր 18.460 հայ բնակչութիւն: Վանի առաջնորդարանի կողմէ կատարուած մարդահամարի համաձայն՝ 1914թ. Վանի մէջ կը բնակէր 4.132 հայ ընտանիք կամ 22.470 անձ, մինչդեռ թուրքերը, ըստ Լինչի փոխանցած տուեալներուն, ընդամենը 10.000 էին:

Սրբազանի 2000 թուականի ուխտագնացութենէն. Բագրեւանդի դաշտը թողուցինք մեր ետին եւ Բերկրիի վրայով՝ հիւսիսարեւելեան կողմէ, մօտեցանք Վանայ լիճին: Հետզհետէ մեր աչքերուն բացուեցաւ Հրաշք լիճը՝ իր աննման եզերքներով, ամէն որպէս տարբեր երանգ ստացող կապոյտով: Մինչ այդ՝ մենք հազիւ կը հասնէինք մեր պատմաբաններուն եւ աշխարհագէտներուն բացատրութեանց, որոնք մէկը միւսին ետեւէն մեզ կը գնդակոծէին մեր պատմութեան դրուագներով, լեռներով, գետերով, դէմքերով: Վասպուրական աշխարհ, Վան, «Գալ տարի Վան», Խրիմեան Հայրիկ, Արամ Մանուկեան: Հրաշք աշխարհ է, եւ իզուր չէ, որ վանեցին համեստօրէն կ'ըսէ՝ «Այս աշխարհի մէջ Վան, միւս աշխարհի մէջ դրախտ»:

Վասպուրական աշխարհի մեր առաջին կանգառը եղաւ Կտուցի հանդիպակաց ափը. փոքրիկ կղզի մըն է, ուր հեռուէն շատ բան ալ չնշմարեցինք: Բայց ի՜նչ վանք էր եղած: Մենաստան, 100-ի չափ միաբան, օրը 7 անգամ ժամերգութիւն: Հիմա՞…

Յաջորդ հանգրուանը Վարագն է: Երրորդ ուխտագնացութիւնս է այս, ու թէեւ գիւղի մոլլան մեկնած է, տեղացիք զիս կը յիշեն, գիւղապետը կու գայ, կը բարեւենք զիրար, գիւղի երեխաներուն խաղալիք ու շաքար կը բաժնենք: Ներսը՝ Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ, մեր աղօթքն է, ու անգամ մը եւս կը յիշենք Խրիմեան Հայրիկը, Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցը, Վարագի պատմութիւնը, ու կ'երգենք Վարագայ Սուրբ Խաչին նուիրուած շարականը. «Նշանաւ ամենայաղթ խաչի քոյ…», ու միւս շարականը՝ ուր աղօթքը այլեւս Հայոց պատմութեան է, քանի Վարագայ Սբ. Խաչի պատմութիւնն է, այսինքն խաչը՝ «…Թռուցեալ եկաւորի ի լեառն Վարագայ բնակիլ ի սմա…»: Ո՞ւր է արդեօք, այսօր Վարագայ Սուրբ Խաչը, եւ արդեօ՞ք Յովել, Թէոդիկ ճգնաւորները դարձեալ պիտի չյայտնուին, որպէսզի Աստուած մեզի ալ յայտնէ իր Միածին Որդւոյն Խաչի մասունքին թաղուած տեղը: Ե՞րբ, արդեօք, արժանի պիտի ըլլանք այդ օրուան: Մինչ մեր ուխտաւորներէն շատեր տրտում եւ հետաքրքիր կը նկարեն, կը դիտեն, կ'արձանագրեն ամէն քար ու խաչքար՝ ես, քանի մը ընկերներով, գիւտ կ'ընեմ երրորդ եկեղեցիի մը, քանի առաջին առիթներուն՝ եղեր էի Սբ. Գէորգ եւ Սբ. Աստուածածնի մէջ: Հիմա գտանք Սբ. Գէորգին կից Սբ. Նշան մատուռը, որ գրեթէ կանգուն է, գմբէթը փայտերով ծածկուած: Բայց ներսը ուրիշ տխրութիւն մը կայ: Հաւանաբար երկար տարիներ յարդանոց է եղած. հիմա շատ խոնաւ է, կարծես քարայր մըն է, ու միայն սարդի ոստայնները ամբողջ եկեղեցին գրաւած են, կարծէք պալատ մը ըլլայ, ուր հարիւր տարի մարդ կոխած չըլլայ: Բայց յոյս կայ, յոյսը միշտ պիտի ըլլայ, ու հիմա լուսանկարներու մէջ կը դիտեմ, թէ ինչպէս լոյսի ճառագայթներ կը պատռեն մութն ու ոստայնները:

Վարագայ վանք. *Հռիփսիմեանց կոյսերը Հռոմէն փախչելով Հայաստան, մինչեւ Վաղարշապատ հասնիլը, կ'ապաստանին Վարագայ լերան արեւելեան կողմը գտնուող ամենաբարձր գագաթին վրայ: Խորենացին Հռիփսիմեանց նուիրուած պատմութեան մէջ կ'ըսէ, թէ Հռիփսիմէն թագաւորական ծագում ունէր եւ Կղոդիա կայսրուհիի տոհմէն էր: Այդ օրերուն տեղի ունեցած էր խաչափայտի գիւտը: Կղոդիայի անբասիր վարքի համար Յակոբոս առաքեալը անոր մասունք մը տուած էր Տիրոջ խաչափայտէն: Այս մասունքը, սերունդէ սերունդ անցնելով, կը հասնի Հռիփսիմէին: Վարագէն իրենց ճանապարհը շարունակելու ժամանակ, Հռիփսիմէն Նշանը կը հանէ իր վիզէն եւ կը պահէ այստեղ: Քանի մը դար ետք՝ 660-ին հոս ուխտաւոր եկած Թէոդիկ կրօնաւորն ու անոր աշակերտ՝ Յովելը աստուածային տեսիլքով մը կը յայտնաբերեն Սբ. Նշանը: Այս առիթով Սեն ք ե ր ի մ թ ա գ ա ւ ո ր ը*

Նարեկի քարայր

հոս կը շինէ եկեղեցիներ եւ անոնց վրայ կը կարգէ հաւատարիմ մարդիկ:

Խաչի այս մասունքը, որ հետագային պիտի կոչուէր Վարագայ Սբ. Նշան, Գագիկ Արծրունին կը զետեղէ թանկագին պահարանի մը մէջ:

Անմիջապէս Վարագայ խաչը կը դառնայ Վասպուրականի եւ ամբողջ Հայաստանի սրբութիւններէն մէկը: Երբ Արծրունիներու վերջին թագաւոր Սենեքերիմ, իր ամբողջ պետութիւնը տալով յոյներուն, ինք փոխադրուեցաւ Սեբաստիայ, ան յօժարեցաւ զրկուիլ իր ամբողջ թագաւորութենէն, բայց Սբ. Նշանը տարաւ իրեն հետ: Սենեքերիմ, երբ կը մահանայ, եւ՝ անոր մարմինը, եւ՝ Սբ. Նշանը կը բերեն Վարագ:

Ինչպէս Լուսաւորիչի տեսիլքին համաձայն եւ անոր տեսած լոյսի տեղերուն վրայ շինուեցան Ս. Էջմիածնի Մայր Տաճարն ու Հռիփսիմէն, Գայանէն եւ Շողակաթը, այնպէս ալ Վարագայ լերան վանական համալիրը եւ հոն գտնուող եկեղեցիներու թիւն ու կառուցման տեղերը կը բխին Վարագայ խաչի ու անոր երեւման պատմութենէն:

Վարագի առաջին՝ Ուրբաթայրք մատուռ-եկեղեցին կը շինուի Լուսաւորիչի օրով, ապա յաջորդ եկեղեցին կը շինուի Թէոդիկ ճգնաւորի եւ Վարդ Պատրիկի ժամանակ, իսկ միւսները, այսինքն մնացեալ տասն, շինուած են այն վայրերուն մէջ, ուր իջած են երկինքին մէջ ճաճանչող Սբ. Նշանի 12 ցոլքերը:

Վարագա վանքն այսօր

Վարագա վանք 19-րդ դ.

Վարագայ վանքը եղած է գրչութեան նշանաւոր կեդրոն, ուր բազմաթիւ ձեռագիրներ ընդօրինակուած են, ինչպէս նաեւ ունեցած է իր մատենադարանը:

1850-ական թթ. վանքը կը դառնայ կրթական կեդրոն, վանահայր Խրիմեան Հայրիկի շնորհիւ: Խրիմեան այստեղ կը հրատարակէ «Արծուի Վասպուրական»-ը: Ան ոչ միայն մանուկներու համար դպրոց կը բանայ, այլեւ ժողովուրդին կը ծանօթացնէ գիւղատնտեսութեան նորագոյն նուաճումներուն, հողը հերկող նոր արօրներ կը բերէ:

Վարագան աւանդաբար եղած է Վասպուրականի եւ ամբողջ Հայաստանի նշանաւոր սրբավայրերէն մէկը, ուր ամեն տարի եկած են հայ ուխտաւորներ:

Լալայեան կ'ըսէ, թէ տեղւոյն ժողովուրդը հաւատալիք մը ունի, ըստ որուն, ով որ մէկ օր ծոմ պահելով քառասուն անգամ կը բարձրանայ Վարագի Գալիլեան, անոր կեանքը միշտ յաջողութիւններով կը պսակուի:

1896-ի կոտորածներուն վանքը վնասի կ'ենթարկուի:

Նարեկայ վանքէն ոչ մէկ հետք գոյութիւն ունի այսօր: Վանքին տեղ կառուցուած է մզկիթ մը: Նարեկավանքի երբեմնի հսկայ համալիրի տեղ կը տեսնուի նորակառոյց մզկիթ մը, իսկ Նարեկացիի շիրիմին վրայ՝ ախոռ:

Ապա վայրէջքն է դէպի Վան, եւ մինչ Լոս Անճելըսէն, Օր. Փառիկը կ'ողբայ «Ախ Վասպուրական» երգը, մենք մեր աչքերուն մէջ կը դրոշմենք Վանայ լճի վերջալոյսը: «Ով չի տեսել Արարատեան դաշտի արշալոյսը՝ ոչինչ չի տեսել»: Մեղայ, մեղայ հայ գրականութեան թուխ Արամազդին, կ'երեւի Ահարոնեան չէր տեսած Վանայ լճի վերջալոյսը՝ երբ արեւը դանդաղ, խաղաղ, վսեմ՝ քուն կը մտնէ ծովու գիրկը:

Յաջորդ առաւօտ բոլորս կը պատրաստուինք դէպի Աղթամար ուղեւորութեան: Բայց առտնին հոգեր ալ ունինք: Հարսանքատէր ենք: Այդ օր, կէսօրէ յետոյ՝ ժամը 3-ին, ուխտաւորները հրաւիրուած են... երկու զոյգերու Սուրբ Պսակի արարողութեան: Այո, հիմա որ այս տողերը կը մրոտեմ՝ ես ալ չեմ հաւատար թէ այդ ինչպէ՞ս եղաւ: Շաբաթներ առաջ Աշոտն ու Լուսինէն խնդրէր էին, որ զիրենք եկեղեցական կարգով պսակեմ՝ Առաքելոց վանքին մէջ: Բայց ահա ամսի 21-ի երեկոյեան ինծի մօտեցան Վոլոդյան եւ Հռիփսիմէն, խնդրելով որ զիրենք պսակեմ Աղթամարի մէջ: Երկմտեցայ եւ յետ խորհրդակցութեանց, որոշեցի Աղթամարի Ս.. Խաչ եկեղեցւոյ մէջ երկու զոյգերը միաժամանակ պսակել: Յաջորդ առաւօտուն ամենուն իմաց տուինք: Ես, որ մանկուց լուսարար եմ եղեր, սիրեր Հայ Եկեղեցւոյ կարգն ու կանոնը, պարտականութիւն համարեցի ամեն բան կատարել օրինական կերպով, աւանդութեամբ, սրբութեամբ: Շուկայէն կրցայ գտնել կարմիր-կանաչ ժապաւէն՝ փեսաներուն համար: Սպիտակ «հարսնիքի նուշ» ալ ճարեցի: Աւելի դժուար եղաւ գինի ճարել, այդ ալ գտայ, ու ճամբայ ինկանք դէպի Աղթամար: Ճամբու ընթացքին մեր վարորդին՝ Սաշային պատուիրեցի որ պարտէզով տուն մը որ տեսնէ՝ կանգնի: Շա՜տ կ'ուզէի Արտամետէն գնել ծաղիկ ու խնձոր. կարծեմ յաջորդ գիւղին, պատմական Ոստանի մէջ ինքնաշարժը կանգ առաւ, տան մը պարտէզը մտայ, խնդրեցի, թեթեւ գումար մը ալ վճարելով կարմիր-դեղին ծաղիկներ գնեցի: Նարօտի համար ուռենիի ոստեր ալ վերցուցի եւ յանկարծ մտածում մը արթնցաւ: Չէ՞ք յիշեր «Նահապետ» ֆիլմը, Սօս Սարգսեանը, այն դրուագը, երբ Նահապետը կ'ըսէր «... ինչ տնից, որ նորածինի ձեն ընկնի իմ ականջ, էդ տան դուռը Արտամետի խնձորի ծառ եմ տնկելու...»: Համոզեցի եւ տանտէրը աթոռի մը վրայ բարձրացաւ ու հսկայ ոստ մը՝ վրան 25-30 խնձոր կտրեց, տուաւ ինծի ու այսպէս՝ կազմ ու պատրաստ, փութացինք Աղթամար:

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ



Վանա լիճը ձմռանը,
Ցերքևի Ցկարում՝ հեռվում, Սիփան լեռն է

Անդրանիկին

Երգում

Որքան սրտով սավառնում ես լեռ ու ժայռ,
Ելևայնում ես երկինք, ցերդիք փենգավառ,
Սուրբ անունդ պիրք հիշվի դարերում,
Հանկա լեռներիք քեզ ապասպան, Անդրանի՛կ:

Դշնամիներդ երբ լսեն քո անունք,
Օշերի պես պիր սոդան իրենց բուշեր,
Երակներիդ ապրիվ քազի արյունք
Զարմանքի ծիրց հավիրյան, Անդրանի՛կ:

Հայոց կուսանք դարձեալ պատկ բոդ հյուսեն,
Քեզնոց ջեռանդ քո ճակատք պատկեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցե՛ս հավետ դու, անանման Անդրանի՛կ:

Հայաստանի սոխակներք քեզ համար
Բոդ դաշտերեն գիրեր-ցերեկ անդադար,
Անհաղթ ծնաս դու քազ, կովի սիրահար,
Հայրենիքի փեր ու պաշտպան Անդրանի՛կ: